

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Վերլուծական տեսություն

Երևան 2007



*Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանի գրասենյակ*



**«Կանանց քաղաքական մասնակցությունը
Հայաստանի Հանրապետության 2007 թվականի խորհրդարանական
ընտրություններին» վերլուծական տեսությունը պատրաստվել է
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային
հետազոտությունների կենտրոնի կողմից ԵԱՀԿ երևանյան գրասենյակի
աջակցությամբ:**

**Սույն հրապարակման մեջ արտահայտված կարծիքները կարող են
չհամընկնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կարծիքներին:**

*Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային
հետազոտությունների և Ժողովրդավարության և խաղաղության
կենտրոնների փորձագետները երախտագիտություն են հայտնում
հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների
ներկայացուցիչներին, քաղաքական կուսակցությունների և հասարակական
կազմակերպությունների լիդերներին ու ակտիվիստներին, բոլորին, ովքեր
մասնակցել են ֆոկլուս խմբերի և կլոր սեղանների աշխատանքներին և
աջակցություն են ցույց տվել՝ տրամադրելով վիճակագրական տվյալներ և
ուրիշ նյութեր սույն վերլուծական տեսությունը պատրաստելու համար:*

**© Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2007
Նյութերի օգտագործման դեպքում հղումը պարտադիր է:**

ASSOCIATION OF WOMEN WITH UNIVERSITY EDUCATION

CENTER FOR GENDER STUDIES

**WOMEN'S POLITICAL
PARTICIPATION
IN THE 2007 PARLIAMENTARY
ELECTIONS IN THE REPUBLIC
OF ARMENIA**

Analytical Overview

Yerevan 2007



*Organization for Security and Co-operation
in Europe
OSCE Office in Yerevan*



*This analytical survey on
"Women's Political Participation in the 2007 Parliamentary
Elections in Armenia"
was prepared by a group of experts from the Gender Studies Center
of the Association of Women with University Education, with support from
the OSCE Office in Yerevan.*

**Opinions expressed in this publication do not necessarily reflect
the opinions of the OSCE Office in Yerevan.**

*The experts of the Gender Studies Center and the Democracy and Peace Center
of the Association of Women with University Education
express their gratitude to representatives of the Armenian government,
leaders and activists of political parties and NGOs, and all participants
in the focus-groups and round-tables, and those who supported this study
by providing statistical data and other background materials.*

**© Armenian Association of Women with University Education, 2007.
Any use of materials contained herein is allowed, provided the explicit
reference to this publication is made.**

**«Կանանց քաղաքական մասնակցությունը
Հայաստանի Հանրապետության 2007 թվականի խորհրդարանական
ընտրություններին» վերլուծական տեսությունը պատրաստել է
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային
հետազոտությունների կենտրոնի փորձագետների խումբը՝ հետյալ
կազմով.**

Ջեմմա Հասրաթյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, Գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, Երևանի «Ինտերլինգվա» լեզվաբանական համալսարանի դասախոս, նախագծի ղեկավար

Թամարա Հովնաթանյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի փորձագետ, վարչության անդամ, «Նովոյե վրեմյա» թերթի քաղաքական մեկնաբան

Լիլիթ Չաքարյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախագահ, Գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Գայանե Արմաղանովա

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախագահ, Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության փոխնախագահ

The analytical survey on "Women's Political Participation in the 2007 Parliamentary Elections" was prepared by the following experts from the Gender Studies Center of the Association of Women with University Education:

Jemma Hasratyan

President of the Association of Women with University Education, director of the Gender Studies Center, Lecturer of Yerevan "Interlingua" Linguistic University, head of the project

Tamara Hovnatanyan

Expert of the Democracy and Peace Center of the Association of Women with University Education, Board member, political commentator of the "Novoe Vremya" newspaper

Lilit Zakaryan

Vice-President of the Association of Women with University Education, Expert of the Gender Studies Center, Senior researcher at the History Institute of the Academy of Sciences of the Republic of Armenia, Candidate of Science in History

Gayane Armaganova

Vice-President of the Association of Women with University Education, Vice-President of the Republican Association of Trade Unions of Health Care Personnel of the Republic of Armenia

Բովանդակություն

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 9

ԿԱՆԱՆՑ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ներածություն: Քաղաքական մասնակցությունը՝

<i>ժողովրդավարության գործուն</i>	25
<i>Հետազոտության նպատակները, կառուցվածքը և մեթոդները</i>	30
<i>Հիմնախնդրի հիմնավորումը</i>	32
<i>2007 թ. խորհրդարանական ընտրությունների ընդհանուր բնութագիրը</i>	34

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԱՅԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Կանայք համամասնական համակարգով առաջադրված

<i>թեկնածուների կազմում</i>	37
<i>Մեծամասնական համակարգով առաջադրված կանայք</i>	40
<i>Ի՞նչ կանայք են առաջադրվում խորհրդարանական ընտրություններում</i>	43
<i>Կանանց՝ քաղաքական ոլորտ մտնելու սցենարներ</i>	48
<i>Կանանց՝ քաղաքական ոլորտ մտնելու դրդապատճառները</i>	51
<i>Քվտաները որպես կանանց առաջնիվան ինստիտուցիոնալ գործիք</i>	54
<i>Ազգային ժողովի չորրորդ գումարման (2007 թ.) գենդերային կազմը</i>	56
<i>Միջազգային դիտողների գնահատականը ընտրական գործընթացներին կանանց քաղաքական մասնակցության կապակցությամբ</i>	58

ԳԼՈՒԽ 2. ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Քաղաքական կուսակցությունների և դրանց ղեկավար մարմինների

<i>գենդերային կազմը</i>	61
<i>Կուսակցական ծրագրերի գենդերային վերլուծությունը</i>	68
<i>Կուսակցությունների դերը՝ առաջխաղացման համար պահուստային կադրերի պատրաստման գործում</i>	70
<i>Քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդները</i>	72
<i>Կուսակցական ցուցակների կազմման մեխանիզմները</i>	74

ԳԼՈՒԽ 3. ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց հասարակական կազմակերպությունները որպես կանանց

<i>քաղաքական սոցիալականացման ինստիտուտ</i>	79
<i>Ինչպես են գնահատում ՀԿ-ների ակտիվիստները կուսակցությունների՝ որպես կանանց սոցիալականացման ինստիտուտների, դերը</i>	84

ՀԿ-ների քաղաքական գործելակերպը 2007 թվականի ընտրարշավում 85
 Ընտրությունների արդյունքները և գենդերային իրավահավասարության
 հիմնախնդիրը կանանց ՀԿ-ների գնահատմամբ 88
 Ընտրություններին կանանց մասնակցության գնահատումը՝ որպես
 հասարակության ժողովրդավարացման հիմնախնդիր 90
 Կանանց քաղաքական ակտիվության նախադրյալները և խոչընդոտող
 գործոնները ՀԿ-ների գնահատմամբ 92
 Հասարակության և ընտանիքի վերաբերմունքը քաղաքական
 մասնակցությանը 93
 Մուտք քաղաքականություն. դրդապատճառների գենդերային
 հայեցակետը 95
 Հասարակական կազմակերպությունների կարծիքը կանանց
 առաջադրելու հարցում կուսակցությունների շահագրգռության
 վերաբերյալ 96
 Կանանց ՀԿ-ների ակտիվիստների վերաբերմունքը քվտաներին՝
 որպես քաղաքականության մեջ կանանց առաջ մղելու միջոցի 96
 Ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպությունների
 մասնակցության արդյունավետության գնահատումը 97
 Կանանց հասարակական կազմակերպությունների
 համագործակցությունը քաղաքական կուսակցությունների հետ 97
 Կանանց ՀԿ-ների դիրքորոշումը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի
 կին թեկնածուներին պաշտպանելու խնդրում 99

**ԳԼՈՒԽ 4. ԿԱՆԱՆՑ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
 ԸՆԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ԿԱՆԱՆՑ
 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ**

Ընտրություններում կանանց ցածր մրցունակությունը պայմանավորող
 և կանանց քաղաքական առաջխաղացումը խոչընդոտող գործոնները 101
 Խտրական գործելակերպը գիտակցելու հիմնախնդիրը 102
 Կարծրատիպային մոտեցումների վերլուծությունը 105

**ԳԼՈՒԽ 5. ԿԻՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ
 ԼՐԱՏՎԱՍԻՉՈՑՆԵՐՈՒՄ**

Կանանց քաղաքական մասնակցությունը էլեկտրոնային ՁԼՄ-ներում 107
 Կանանց քաղաքական մասնակցությունը տպագիր ՁԼՄ-ներում
 (որակական վերլուծություն) 110
 Ամփոփման փոխարեն. հետընտրական իրողություններ 117
 Երաշխավորություններ 121

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդիկան

Հետազոտության նպատակը.

- 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման, անցկացման ընթացքում և դրանից հետո կանանց քաղաքական մասնակցության ուսումնասիրում, ընտրություններին կին թեկնածուների մասնակցության քանակական և որակական վերլուծություն, կանանց քաղաքական մասնակցության ձևավորումն ու զարգացումը խոչընդոտող բացասական գործելակերպի և կարծրատիպային պատկերացումների բացահայտում:

Հետազոտության ընթացքում իրականացվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրվել է գենդերային իրավիճակը Հայաստանում, բացահայտվել են քաղաքական ոլորտում ձևավորված գենդերային անհավասարակշռության պատճառները,
- բացահայտվել է կանանց քաղաքական մասնակցության ձևավորման վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների ողջ շարքը, տրվել է կանանց կուտակած քաղաքական փորձի գնահատականը, ուսումնասիրվել են կանանց ընտրազանգվածային վարքը կանխորոշող գործոններն ու նախադրյալները,

**Մեթո-
դաբա-
նու-
թյուն**

- բացահայտվել են օրենսդրական իշխանությունում բնակչության նվազ ներկայացված խմբի՝ կանանց թվի ավելացման խոչընդոտների հաղթահարման ուղիները և ՀՀ Ազգային ժողովում՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության մարմնում, հավասարակշռված գենդերային ներկայացուցչության հնարավորությունները,
- քաղաքական գործելակերպի, կանանց քաղաքական լիդերության և քաղաքական մասնակցության առաջնդման ուղղությամբ քաղաքացիական հասարակության ինստիտուտների աշխատանքի մասին իրական տվյալների ուսումնասիրման հիման վրա մշակվել են երաշխավորություններ քաղաքական ոլորտում կանանց մասնակցության ակտիվացման վերաբերյալ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.

- 2007 թվականի մայիսին Հայաստանի խորհրդարանի ընտրություններից առաջ և հետո կանանց քաղաքական մասնակցության իրավիճակի ուսումնասիրում,
- կլոր սեղանների և ֆոկուս խմբերի անցկացում,
- հարցազրույցներ պատգամավորության թեկնածուների, քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների լիդեր և ակտիվիստ կանանց հետ,
- կանանց քաղաքական ներկայացվածության վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծություն,
- ՁԼՄ-ներում կանանց քաղաքական մասնակցության ներկայացվածության վերլուծություն:

II. Հետազոտության փուլերը

Կանանց քաղաքական մասնակցության հետազոտումն անցկացվել է նախընտրական փուլում, ընտրությունների ժամանակ և ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության առաջին փուլը

1. Ուսումնասիրվել է ընտրարշավին կանանց մասնակցության գործընթացը բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովների ձևավորման, ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների գրանցման, համամասնական ընտրակարգով պատգա-

մավորության թեկնածուների ցուցակների կազմման և ԿԸՀ-ում դրանց գրանցման, մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման ընթացքում:

Ուսումնասիրվել է քարոզարշավին կանանց մասնակցության և ընտրարշավին հասարակական կազմակերպությունների մասնակցության գործելակերպը:

Անցկացվել է ընտրական հանձնաժողովների վիճակագրական տվյալների և քաղաքական կուսակցությունների պատգամավորության թեկնածուների ցուցակների գեներերային վերլուծություն:

Առաջին փուլում անցկացվել է 5 կլոր սեղան-ֆոկուս խումբ.

- Երկու կլոր սեղան Երևանում գործող գումարման խորհրդարանի պատգամավորների, կուսակցությունների ներկայացուցիչների և կանանց շարժման ակտիվիստների հետ:
- Երեք կլոր սեղան հանրապետության տարածաշրջաններում, որոնցից երկուսը քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ Վանաձորում և Արտաշատում և երրորդը ընտրողների հետ Վանաձորում: Քաղաքական կուսակցությունների և ընտրազանգվածի ներկայացուցիչների հետ երեք կլոր սեղաններին ընդհանուր առմամբ մասնակցել է 42 ներկայացուցիչ 10 քաղաքական կուսակցություններից և 15 ընտրող քաղաքացի:

Նախընտրական շրջանում անցկացվել է երկու կլոր սեղան-ֆոկուս խումբ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ Երևանում և Գորիսում՝ 15 հասարակական կազմակերպություն ներկայացնող 26 լիդերների և ակտիվիստների մասնակցությամբ:

Ֆոկուս խմբերի արդյունավետ անցկացման համար նախապես մշակվել են հարցաշարեր, որոնցում ընդգրկվել են քննարկմանը ներկայացվող հիմնական խնդիրները:

2. Ուսումնասիրվել է կանանց քաղաքական ներկայացվածությունը ՀՀ Ազգային ժողովում, իշխանական կառույցների որոշումների ընդունման մակարդակում և քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմիններում՝ բացահայտելու համար ներկուսակցական ժողովրդավարության զարգացման և ընդհանուր առմամբ ընտրական գործընթացների վրա կանանց ազդեցության աստիճանը:

Մեթոդաբանություն

3. Անցկացվել են փորձագիտական հարցազրույցներ համամասնական և մեծամասնական ընտրակարգով առաջադրվող ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու 18 կանանց՝ Հրանուշ Հակոբյանի, Հերմինե Նաղդալյանի, Հեղինե Բիշարյանի, Հռիփսիմե Ավետիսյանի, Լիլիթ Գալստյանի, Ռուզաննա Առաքելյանի, Ռուզաննա Խաչատրյանի, Հասմիկ Բաղդասարյանի, Գուստրիկ Մխիթարյանի, Հրանուշ Խառատյանի, Թամարա Գևորգյանի, Լյուդմիլա Սարգսյանի, Ժասմեն Թելյանի, Ինեսսա Ադամյանի, Ինգա Հարությունյանի, Լյուդմիլա Ազիզյանի, Չարուհի Հովհաննիսյանի, Հասմիկ Հակոբյանի հետ:

4. Կանանց քաղաքական մասնակցության առաջնդման գործում ՀԿ-ների դերը բացահայտելու համար անցկացվել են հարցազրույցներ 5 հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ՝ Նատալյա Մարտիրոսյանի (Կանանց համահայկական միություն), Ջինա Սարգիզովայի (Հասարակական կազմակերպությունների կենտրոն), Անահիտ Բայանդուրի (Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի կոմիտե), Աստղիկ Ավետիսյանի (Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիա), Լիլիթ Ասատրյանի (Երիտասարդ կանանց ասոցիացիա):

Անցկացված կլոր սեղան-ֆոկլուս խմբերի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու կանանց հետ հարցազրույցների հիման վրա կատարվել է համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրվող կանանց թեկնածությունների որակական վերլուծություն, բացահայտվել են նրանց ընտրազանգվածային վարքի առանձնահատկությունները:

Ուսումնասիրվել է Հայաստանի օրենսդիր իշխանությունում և գործադիր իշխանության որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության շարժընթացը ժողովրդավարական վերափոխումների անցած 15 տարիների ընթացքում:

Փորձագետներն անցկացրել են կուսակցությունների գենդերային ռազմավարությունների վերլուծություն, ուսումնասիրել են կուսակցությունների ղեկավարության գենդերային հավասարակշռության հիմնախնդիրը և կանանց խորհուրդների աշխատանքի գործելակերպը,

նրանց ազդեցությունը ներկուսակցական ժողովրդավարության զարգացման և քաղաքական կուսակցությունների ղեկավարության կազմում կանանց առաջխաղացման գործընթացի վրա: Ուսումնասիրվել է գենդերային հիմնախնդիրների ներկայացվածությունը քաղաքական կուսակցությունների ծրագրերում և նախընտրական քարոզչությունում:

2007 թվականի խորհրդարանական ընտրություններում կուսակցությունների մեծ մասի նախընտրական ծրագրերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք գենդերայնորեն չեզոք բնույթ ունեն և իշխանությունում գենդերային անհավասարակշռության հաղթահարման նպատակ չեն դնում: Մի շարք կուսակցությունների (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, Հայաստանի ժողովրդական կուսակցություն, Հայաստանի հանրապետական կուսակցություն, Ազգային-ժողովրդավարական կուսակցություն, «Նոր ժամանակներ», «Բարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր», «Ժառանգություն», «Ազգային միաբանություն», ՄԻԱԿ, «Դաշինք») ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք չեն բովանդակում կանանց քաղաքական մասնակցության զարգացմանը և իշխանության կառույցների որոշումների ընդունման մակարդակում կանանց առաջխաղացմանն ուղղված դրույթներ:

Միայն **Հայ հեղափոխական դաշնակցության** նախընտրական ծրագրում է առանձնացվել «Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն» հատուկ բաժին, որտեղ նշվել են կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հնարավորությունների հասնելու, ըստ սեռի հատկանիշի խտրականությունը վերացնելու օրենսդրական երաշխիքները, ինչը դիտվում է երկրում կայունություն և ներդաշնակություն հաստատելու գործոն: Իրավահավասարության ապահովմանը միտված այլ միջոցների շարքում հիշատակվել են աշխատանքի շուկայում կանանց մրցունակության բարձրացումը և ընտանեկան ու մասնագիտական պարտականությունների համատեղումն ապահովող մեխանիզմների ստեղծման ծրագրերի ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև կանանց քաղաքական իրավունքների իրականացման համար քվոտավորման արդյունավետ մեխանիզմների անհրաժեշտությունը, նշվել է քաղաքացիական հասարակության՝ հասարակությունում կանանց դերի բարձրացման և սեռերի իրավահավա-

սարության ապահովմանն ուղղված նախաձեռնություններին, զարգացման ծրագրերի մշակմանը և իրականացմանը նպաստելու անհրաժեշտությունը:

Ազգային-ժողովրդավարական կուսակցության, «Ազգային միաբանություն», «Ժառանգություն», «Օրինաց երկիր» կուսակցությունների նախընտրական ծրագրերում առաջնահերթ խնդիրների շարքում արտացոլված են միայն հոգատարությունը մոր և մանկան, ընտանիքի և կանանց վերարտադրողական իրավունքների նկատմամբ և աշխատող մայրերի արտոնությունները, իսկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրում՝ «կանանց, երիտասարդության և հաշմանդամների մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման» խնդիրը:

5. Իրականացվել է 11 պարբերական թերթերի («Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ազգ», «Առավոտ», «Երկիր», «Գոլոս Արմենիի», «Հայկական ժամանակ», «Հայոց աշխարհ», «Իրավունք», «168 ժամ», «Չորրորդ իշխանություն») հրատարակումների և 8 հեռուստաընկերությունների (Հայաստանի հանրային հեռուստատեսություն, «Երկիր-Մեդիա», «Կենտրոն», «ԱԼՄ», «Շանթ», «Արմենիա», «Հ2», «ԱԲ») հաղորդումների որակական վերլուծություն:

Նախագծի իրականացման ընթացքում փորձագետները հաճախել են կլոր սեղանների, հետևել են քաղաքական կուսակցությունների թեկնածուների և մեծամասնական ընտրակարգով թեկնածուների ու բնակչության հանդիպումներին, թեկնածու կանանց հրապարակային ելույթներին և նրանց մասնակցությամբ բանավեճերին, մամլո ասուլիսներին և կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների անցկացրած այլ միջոցառումներին, ուսումնասիրել են ինտերնետ կայքերում զետեղված նյութերը:

Փորձագետներն օգտվել են նաև տեղեկատվության այլ աղբյուրներից, այդ թվում ընտրությունների ընթացքում հանրապետությունում անցկացված հասարակական կարծիքի հարցումների, սոցիոլոգիական հետազոտությունների և ՉԼՄ-ների մոնիտորինգի արդյունքներից, միջազգային և տեղական դիտորդների կարծիքներից, ստացված տվյալ-

ները համեմատվել են նախկինում անցկացված հետազոտությունների արդյունքների հետ:

Ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ Հայաստանում առկա է կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության դրական շարժընթաց. 2003 թվականի խորհրդարանական ընտրություններում 1143 թեկնածուներից 162-ն էին կին, այսինքն՝ 14,1%-ը, 2007 թվականին կուսակցական ցուցակներում ներկայացվել է 297 կին 1313 թեկնածուների թվում, որը կազմում է 22,6%:

Այս դրական շարժընթացը կարելի է հիմնավորել մի շարք գործոններով, որոնցից հիմնականը կուսակցական ցուցակների համար 15%-անոց քվոտայի սահմանումն է և կանանց ավելի բարձր քաղաքական ակտիվությունը:

Ընդ որում, եթե 2003 թվականին առաջին տասնյակում ներկայացված էր 27, ապա 2007 թվականին՝ 37 կանանց թեկնածություն: Հայտնի է, որ քաղաքական կուսակցությունների համար 5%-անոց անցողիկ շեմի պարագայում խորհրդարան մտնելու առավելագույն հնարավորություններ ունեն ցուցակի առաջին հնգյակում ներկայացված թեկնածուները: 2003 թվականին առաջին հնգյակում ընդամենը 6 կին է եղել, 2007 թվականին՝ 17:

Դրա հետ մեկտեղ միամանդատ ընտրատարածքներում առաջադրված կանանց թիվը յուրաքանչյուր ընտրության հետ անշեղորեն նվազում է, ընդ որում ավելի մեծ տեմպերով, քան տեղի է ունենում այդ ընտրատարածքների թվի նվազումը: Այսպես, Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների հետևանքով միամանդատ ընտրատարածքների թիվը 1999 թվականի համեմատությամբ կրճատվել է գրեթե 2 անգամ, բայց մեծամասնական ընտրակարգով 2007 թվականին 10 անգամ ավելի քիչ կին է առաջադրվել, քան 1999 թվականին: Հիմնական պատճառը պայքարի դաժանությունն է և այդ համակարգով ընտրությունների առևտրականացման բարձր աստիճանը:

III. Հետազոտության երկրորդ փուլը՝ քվեարկության օրը

Վերլուծությունը ցույց տվեց, որ 2007 թվականի մայիսի 12-ին կայացած խորհրդարանական ընտրություններին մասնակցել է 22 կուսակ-

ցություն և մեկ քաղաքական դաշինք, որոնք պայքարում էին համամասնական 90 տեղերի համար: Մեծամասնական ընտրակարգով առաջադրվել է 132 թեկնածու 41 միամանդատ ընտրատարածքում, այսինքն՝ միջին հաշվով մեկ տեղի համար պայքարել է երեք հավակնորդ:

Փորձագետ-հետազոտողները Ասոցիացիայի և այլ հասարակական կազմակերպությունների անդամների հետ միասին քվեարկության օրը իրականացրել են ընտրությունների ընթացքի դիտարկում: Հատուկ ուշադրություն է հատկացվել այն ընտրատարածքներին, որտեղ մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանայք են եղել:

Քվեարկության ընթացքին հետևել է 13 հազար 808 մարդ 53 տեղական հասարակական կազմակերպություններից, որը զգալիորեն ավելի է, քան 2003 թվականին:

IV. Հետազոտության երրորդ փուլը՝ ընտրություններից հետո

Ընտրություններից հետո անցկացվել է 6 կլոր սեղան-ֆոկուս խումբ, դրանցից երեքը Երևանում, Վանաձորում և Արտաշատում քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ և երեքը Երևանում, Գյումրիում և Գորիսում հասարակական կազմակերպությունների ակտիվիստների հետ: Ինչպես նաև մեկ կլոր սեղան Սևանում՝ ընտրողների և հասարակական կազմակերպությունների ակտիվիստների մասնակցությամբ:

Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ անցկացված երեք կլոր սեղաններին մասնակցել է 46 ներկայացուցիչ 8 կուսակցությունից:

Հետընտրական շրջանում Երևանում, Գյումրիում և Գորիսում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված կլոր սեղան-ֆոկուս խմբերին մասնակցել են 40 կազմակերպություններ ներկայացնող 46 լիդերներ և ակտիվիստներ:

Ի լրումն նախագծով նախատեսված 6 կլոր սեղան-ֆոկուս խմբերի՝ Ասոցիացիայի Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի շրջանակներում անցկացվել է երկու կլոր սեղան-բանավեճ՝ նվիրված հետևյալ հիմնախնդիրներին. *քաղաքական կուսակցությունների ղեկավար կառույցներում գենդերային հավասարակշռության և ներկուսակցական ժողովրդավարության զարգացման փոխկախվածությունը (Երևանում) և քաղաքական կուսակցությունների ու կանանց ՀԿ-ների*

*համագործակցության ամրապնդումը որպես կանանց համերաշխու-
թյան գործոն՝ ի նպաստ ժողովրդավարության (Վանաձորում):*

Կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրների և ընտ-
րական գործընթացների գնահատականների սոցիոլոգիական հետազո-
տություններով բացահայտված կարծիքներին ծանոթանալու նպատա-
կով անցկացվել են հանդիպումներ և փորձագիտական հարցազրույց-
ներ սոցիոլոգիական հետազոտությունների գիտական հիմնարկների և
կենտրոնների ղեկավարներ Գևորգ Պողոսյանի (Հայկական սոցիոլո-
գիական ասոցիացիա), Ահարոն Աղիբեկյանի («Սոցիոմետր» կենտ-
րոն), Կարինե Նալչաջյանի (հոգեբան), Նինա Իսկանդարյանի (ԶԼՄ-
ների Կովկասյան ինստիտուտ) հետ:

Հարցազրույցներ են անցկացվել ՀՀ Ազգային ժողովի պատգամավո-
րի թեկնածու կանանց՝ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցու-
թյան լիդեր Լյուդմիլա Սարգսյանի, «Օրինաց երկիր» կուսակցության
անդամ Վիկտորյա Հարությունյանի հետ, որն առաջադրվել է մեծա-
մասնական ընտրակարգով:

***Որոշ եզրակացություններ կանանց քաղաքական մասնակցության
վիճակի վերաբերյալ՝ ըստ 2007 թվականի խորհրդարանական ընտրու-
թյունների արդյունքների***

1. 2007 թվականի խորհրդարանական ընտրությունները առաջինն էին
2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո, որոնք
նախատեսում էին ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների ընդլայնում,
կառավարության ձևավորման գործում նրա դերի բարձրացում:

Ընտրական օրենսգրքում փոփոխվել էր խորհրդարանում համամաս-
նական և մեծամասնական տեղերի հարաբերակցությունը. միաման-
դատ ընտրատարածքների թիվը 56-ից կրճատվել է մինչև 41, ամ-
րագրվել է խորհրդարանի գործունեության հնգամյա ժամկետ:

ՀՀ Ընտրական օրենսգրքում ամրագրված պարտադիր քվոտաները՝
կուսակցական ցուցակներում կանանց 15%-անոց ներկայացվածու-
թյունը կանանց մասնակցությունն ընդլայնելու հնարավորություն էին
ընձեռում:

Թվարկված գործոնները նպաստեցին յուրաքանչյուր պատգամավո-

րական մանդատի «արժևորության» բարձրացմանը և խորհրդարանում տեղ զբաղեցնելու համար տարվող պայքարին ավելի խիստ ու անզիջում բնույթ հաղորդեցին, ինչը չէր կարող չանդրադառնալ ընտրաբշակի վրա, դրա հետևանքով դժվարացավ ընտրություններին կանանց մասնակցությունը, հատկապես, մեծամասնական ընտրակարգով:

2. Քվեարկության արդյունքներով հանրապետության խորհրդարան մտավ հինգ կուսակցություն՝ ստացած ձայների հետևյալ բաժնեմասերով. *Հայաստանի հանրապետական կուսակցությունը՝ 32,9%, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 14,7%, ՀՅԴ-ն՝ 12,75%, «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ 6,9%, «Ժառանգություն» կուսակցությունը՝ 5,82%:*

Թեպետ կանանց թիվը հանրապետության Ազգային ժողովում ավելացավ՝ 7-ից (5,3% 2003թ.) մինչև 12 մարդ (9,2% 2007թ.), այնուամենայնիվ, չորրորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված հինգ խմբակցություններից միայն ***երկուսն են իրենց կազմում ապահովել կանանց 15 և բարձր տոկոս. ՀՅԴ-ն՝ 3 կին 16 պատգամավորների թվում (18,7%) և «Ժառանգությունը»՝ 3 կին 7 պատգամավորների թվում (42,8%):*** «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունում 3 կին է 25 պատգամավորի թվում (12%) և «Օրինաց երկիր» խմբակցությունում՝ 1 կին 8 պատգամավորների թվում (12%): Այսպիսով, օրենսդրությամբ ամրագրված 15%-անոց գենդերային քվոտան չապահովեց բոլոր կուսակցությունների համապատասխան ներկայացվածություն խորհրդարանում: *Մտահոգություն է առաջացնում այն փաստը, որ իշխող Հանրապետական կուսակցությունից, որը ներկայացնում է ամենամեծ խմբակցությունը խորհրդարանում, ընտրված 64 պատգամավորներից միայն երկուսն են կին (3,1%):* Բնական է, որ խմբակցության նման գենդերային անհավասարակշռությունը բացասական ազդեցություն կունենա ոչ միայն խորհրդարանի, այլև առհասարակ պետական գենդերային քաղաքականության վրա:

Նորընտիր Խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության մարմնի, գենդերային կազմը դարձյալ գենդերայնորեն անհավասարակշռված է:

Դրա հետ մեկտեղ դրական փաստ է, որ ինը մշտական հանձնաժողովներից երկուսի նախագահ են ընտրվել կանայք՝ Արևիկ Պետրոսյա-

նը (Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի հանձնաժողով) և Հրանուշ Հակոբյանը (Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի հանձնաժողով):

3. Մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջանառվող այն կարծիքը, թե բնակչությունը չի աջակցում կին թեկնածուներին, և կանայք չեն քվեարկում հոգուտ կանանց, քննադատության չի դիմանում: Երեք միամանդատ ընտրատարածքներում առաջադրված կանայք հավաքած ձայների թվով երկրորդն էին հաղթանակած թեկնածուից հետո: Երեք թեկնածուների հետ մրցապայքարի մեջ մտած Հեղինե Բիշարյանի օգտին տրվել է 8406 ձայն, վեց թեկնածուների հետ մրցակցող Հասմիկ Բաղդասարյանի օգտին՝ 5289 և Լարիսա Փարեմուզյանի օգտին՝ 5514 ձայն:

Ուշագրավ է այն փաստը, որ կուսակցական ցուցակներում անցողիկ տեղերում ներկայացված կանանց 12%-ը անկուսակցական էր, որոնք կայացել են իրենց մասնագիտության մեջ և մեծ ներուժ ունեն: Նրանց մի մասն ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր. մարդու իրավունքների նախկին պաշտպան Լարիսա Ալավերդյանը և փաստաբան Չարուհի Փոստանջյանը («Ժառանգություն» կուսակցություն), բոլոր գումարումների պատգամավոր Հրանուշ Հակոբյանը (Հայաստանի հանրապետական կուսակցություն), Քաղժառայության խորհրդի նախագահի նախկին տեղակալ Արևիկ Պետրոսյանը և լրագրող Նաիրա Չոհրաբյանը («Բարգավաճ Հայաստան» կուսակցություն):

V. Որոշ նախնական եզրակացություններ կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնների վերաբերյալ՝ ըստ ֆոկուս խմբերի արդյունքների

Անցկացված կլոր սեղանները և ֆոկուս խմբերը, փորձագիտական հարցազրույցները, հանդիպումները և զրույցները կուսակցությունների ներկայացուցիչների հետ, քաղաքական գործընթացների գենդերային չափման հիմնախնդրի քննարկումը Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Կանանց լիդերության դպրոցի ունկնդիր կանանց հետ հնարավորություն տվեցին բացահայտելու քաղաքական

**Մեթո-
դաբա-
նու-
թյուն**

գործընթացների կանանց մասնակցության մի շարք հիմնախնդիրներ՝ խորհրդարանական ընտրությունների դիտանկյունից:

- Քաղաքական կուսակցությունների մեծ մասը հոգաժողովուն չի դրսևորում կանանց կադրերի պատրաստման հարցում: Նույնիսկ այն սակավաթիվ կուսակցությունները, որոնք սեմինարներ և դասընթացներ են անցկացնում իրենց անդամների համար, նպատակ չեն դնում բարձրացնել իրենց անդամների գեներալային իրազեկությունը, ակտիվացնել և աջակցել կանանց առաջխաղացմանը ինչպես կուսակցություններում, այնպես էլ իշխանական կառույցներում և ընտրովի պաշտոններում:
- Հայաստանի շատ քաղաքական կուսակցություններ, հետևելով արևմտյան փորձին, ստեղծել են կանանց խորհուրդներ, սակայն դրանք էական դեր չունեն կանանց կադրերի պատրաստման և առաջխաղացման գործում: Կանանց խորհուրդների շատ նախագահներ մինչև վերջին ժամանակներս կուսակցության ղեկավար մարմնի անդամ չէին, իսկ լինելով փոքրամասնություն դրանց կազմում՝ չեն ազդում կուսակցական որոշումների, այդ թվում և ընտրական ցուցակների վրա, ինչը վկայում է, որ ներկուսակցական ժողովրդավարությունը թերի է:
- Կանանց ներդրումն ընտրարշավում չի համապատասխանում նրանց ներկայացվածությանը հանրապետության խորհրդարանում: Շատ կլոր սեղանների, հարցազրույցների ընթացքում նշվում էր, որ ընտրությունների հետ կապված աշխատանքի 80%-ը կանայք են կատարում:
- Ձևավորվել է սոցիալական պատվեր՝ ողջ հասարակության գեներալային իրազեկության բարձրացման միջոցով փոփոխել հասարակական կարծիքը կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտության վերաբերյալ:
- Կուսակցությունների կանայք սկսել են գիտակցել քաղաքական ոլորտում կանանց առաջխաղացման գործում կանանց խորհուրդների դերի և պատասխանատվության բարձրացման անհրաժեշտությունը:
- ՀԿ-ների և մի շարք կուսակցությունների կանանց խորհուրդների համագործակցության ակտիվացումը նախադրյալներ է ստեղծում համատեղ գործողությունների համար՝ ուղղված կուսակցությունների

անդամ կանանց քաղաքական-իրավական գրագիտության բարձրացմանը, քաղաքական մասնակցության ժամանակակից տեխնոլոգիաների յուրացմանը և կանանց քաղաքական ակտիվության զարգացմանը:

VI. Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են ընտրություններում կանանց ցածր մրցունակությունը պայմանավորող և կանանց քաղաքական կարիերան խոչընդոտող գործոնները:

Ընտրական գործընթացների անկատարությունը: Ընտրությունների առևտրականության բարձր աստիճանը, կանանց ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, քաղաքական պայքարի կոշտությունը, «սև տեխնոլոգիաների» օգտագործումը, քաղաքական պայքարի քրեականացումը, թեկնածու կանանց՝ ժամանակակից ընտրական տեխնոլոգիաների ոչ բավարար իմացությունը:

Մտածելակերպի առանձնահատկությունները և կարծրատիպերը:

Կանանց քաղաքական ակտիվությունը չխրախուսող հայրիշխանական դիրքորոշումների գերակշռումը, գենդերային կարծրատիպերը, որոնք պայմանավորում են անվստահությունը թեկնածու կանանց նկատմամբ, հասարակության և կանանց կողմից խտրական գործելակերպը չգիտակցելը:

Կանանց քաղաքական փորձի բացակայությունը և ցածր ինքնագնահատականը: Քաղաքական փորձի պակասը, կանանց ներքին հոգեբանական բարդույթները և ցածր ինքնագնահատականը, որոնք քաղաքական սոցիալականացման, հասարակության մեջ տղամարդկանց և կանանց դերաբաշխման, կանանց կադրերի պատրաստման և կանանց լիդերության սատարման տարբերակված համակարգի բացակայության հետևանք են, ինչպես նաև կանանց սահմանափակ ներկայացվածության հասարակության այն ոլորտներում, որտեղ քաղաքական կադրերի հավաքագրում է կատարվում, և, վերջապես, կանանց կրկնակի ծանրաբեռնվածության, այսինքն՝ ընտանեկան պարտականությունների և քաղաքական կարիերայի համատեղման նախադպրոցական հիմնարկների չզարգացած համակարգի պայմաններում:

Հասարակության ցածր քաղաքական մշակույթը և ժողովրդավարական ինստիտուտների թուլությունը: Կանանց առաջխաղացմանը և գենդերային անհավասարակշռության հաղթահարմանն ուղղված պետական գենդերային քաղաքականության բացակայությունը, կանանց կազմակերպությունների թուլությունը, կանանց հասարակական շարժման չկայացածությունը, ներկուսակցական ժողովրդավարության պակասը, կանանց առաջխաղացման կուսակցական մեխանիզմների բացակայությունը, հասարակական-քաղաքական ոլորտում կանանց դերի մասին կարծրատիպային պատկերացումներ արմատավորող ՉԼՄ-ների կողմից կանանց քաղաքական մասնակցության սատարման բացակայությունը:

VII. Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս առաջադրելու մի շարք երաշխավորություններ.

- անհրաժեշտ է մշակել համալիր միջոցառումներ՝ ուղղված գենդերային խնդիրների ընդգրկմանը քաղաքական օրակարգում և քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ, իրականացնել կուսակցությունների անդամների գենդերային կրթություն,
- նպաստել կուսակցություններում կանանց կադրերի պատրաստմանը, աջակցել կուսակցությունների ղեկավար կառույցներում կանանց առաջխաղացման մեխանիզմների ձևավորմանը և ներկուսակցական ժողովրդավարության խորացմանը,
- աջակցել կանանց քաղաքական առաջխաղացման հարցերում քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների և կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցության ընդլայնմանը,
- ապահովել գենդերային քաղաքականության իրականացման և միջազգային պարտավորությունների կատարման լայնածավալ վերահսկում, ուսումնասիրել եվրոպական քաղաքական կուսակցությունների՝ գենդերային հավասարակշռության ձեռքբերման և դրական խտրականության մեթոդների կիրառման փորձի օգտագործման հնարավորությունները,
- կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտան բարձրացնել առնվազն մինչև 25%, ընդ որում վերջնական ար-

- դյունքների հաշվառմամբ, այսինքն՝ կանանց 25% ներկայցվածու-
թյուն խորհրդարանական խմբակցություններում,
- մշակել և ներդնել ընտրարշավների մասնակցության կանանց հա-
մալիր պատրաստման ծրագրեր՝ ներառյալ լիդերության հոգեբանա-
կան վարժանքները և քաղաքական-իրավական, տնտեսական գիտե-
լիքների ու ընտրարշավների կազմակերպման տեխնոլոգիաների,
ՉԼՄ-ների հետ համագործակցության հմտությունների հաղորդումը,
 - մշակել գենդերայնորեն հավասարակշռված քաղաքականություն
իրականացնող և կանանց քաղաքական մասնակցության
առաջնությունն ապահովող քաղաքական կուսակցությունների պետա-
կան խրախուսման մեխանիզմներ,
 - աջակցել ՀԿ-ների նախաձեռնություններին՝ ուղղված հանրապե-
տության մայրաքաղաքում և մարզերում կանանց լիդերության դպ-
րոցների կազմակերպմանը՝ առավել մրցունակ լիդեր կանանց ընտ-
րության սկզբունքի կիրառմամբ,
 - շարունակել և ընդլայնել գենդերային դասընթացների ներմուծումը
դպրոցական և բուհական կրթության համակարգում, մշակել և իրա-
կանացնել բնակչության գենդերային կրթության ծրագրեր, հատուկ
կրթական ծրագրեր լրագրողների համար կանանց լիդերության
աջակման ուղղությամբ,
 - խրախուսել ՉԼՄ-ներում գենդերային կարծրատիպերի հաղթահար-
մանը և կանանց առաջխաղացմանն ուղղված PR-արշավների անց-
կացումը:

Հետազոտության մեթոդաբանությունը և ֆոկուս խմբերի ու կլոր սե-
ղանների ընտրված ձևաչափը հնարավորություն տվեցին հասնելու նա-
խագծի նպատակային դիրքորոշմանը, այն է՝ անցկացված ֆոկուս խմ-
բերը և կլոր սեղանները՝ քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների
ակտիվիստների ներգրավմամբ, նպաստել են կանանց քաղաքական
մասնակցության ակտիվացմանը ընտրությունների գործընթացի բոլոր
փուլերում:

Կլոր սեղանների շուրջ ծավալված բանավեճերի, քննարկումների
անաչառությունը և անկեղծությունը, փորձագիտական գնահատական-
ները և երաշխավորությունները՝ հանուն քաղաքական կուսակցություն-

**Մեթո-
դաբա-
նու-
թյուն**

ների և ՀԿ-ների լիդեր և ակտիվիստ կանանց աջակցության, նպաստել են ընտրական գործընթացներում նրանց աշխատանքի ճշգրտմանը և երաշխավորությունների կիրառմանը անմիջական աշխատանքում: Անցկացվող միջոցառումները համապատասխանում էին սոցիալական պահանջին, որը կանխորոշված էր կուսակցությունների և ՀԿ-ների ակտիվիստ կանանց ձգտմամբ, այն է փորձարկել իրենց մոտեցումները, որոշել դրանց ճշտությունը, ստանալ երաշխավորություններ առօրյա գործունեության համար:

**ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2007
ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

**Ներա-
ծու-
թյուն**

Ներածություն

**Քաղաքական մասնակցությունը՝
Ժողովրդավարության գործուն**

Ժողովրդավարության զարգացումը ենթադրում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ամրապնդում և դրանց գործունեության արդյունավետության միջոցով խթանում է քաղաքացիների ներգրավումը ակտիվ քաղաքական գործունեության մեջ, որի դրսևորումներից մեկն էլ գործուն մասնակցությունն է ընտրությունների կազմակերպման գործընթացներին:

Հայաստանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական բարդ փոխակերպումների պայմաններում, առանց երկրի իրավիճակի օբյեկտիվ վերլուծության, անհնարին է քաղաքացիական հասարակության բոլոր դերակատարների արդյունավետ գործունեությունը:

Ելնելով այդ անհրաժեշտությունից՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան վերջին տարիներին հասարակական-քաղաքական կյանքի տարբեր կողմերի սոցիոլոգիական հետազոտություններ է կատարում՝ հիմնականում ուշադրությունը սևեռելով օրենսդիր և գործադիր իշխանության կառույցներում գենդերային հավասարակշռության ապահով-

**Ներա-
ծու-
թյուն**

ման, կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության հիմնախնդիրների վրա, ինչպես նաև հետևում է Հայաստանում գենդերային խտրականության հաղթահարման և կառավարման ու որոշումների ընդունման համակարգում կանանց ներգրավման վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթերով ստանձնված պարտավորությունների կատարման ընթացքին:

Քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի համատեքստում ընտրական մշակույթի հիմնախնդրի ուսումնասիրությանն էր նվիրված հասարակական կարծիքի հարցումը նախընտրական շրջանում՝ 2002 թ. Ժամանակահատվածում, ինչը հնարավորություն տվեց վեր հանելու հարցվողների ընտրական նախապատվություններն ու կարծիքը հասարակական կյանքի ժողովրդավարացման հեռանկարների մասին և որոշելու քաղաքացիական հասարակության դերն ու տեղը ընտրական ժողովրդավարության համախմբման խնդրում:

Այդ հետազոտության օրգանական շարունակությունն էր հասարակական կարծիքի հարցումը՝ նպատակաուղղված Հայաստանի 2003 թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածի սոցիալական և քաղաքական իրավիճակի շարժընթացի մի շարք կարևոր հայեցակետերի ուսումնասիրությանը, որի շրջանակներում վեր հանվեցին ընտրագանգվածի կողմնորոշումները, նախապատվություններն ու սպասումները, հետընտրական իրավիճակի ազդեցությունը քաղաքացիական ակտիվության վրա, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերը ժողովրդավարական քաղաքական մշակույթի ձևավորման խնդրում:

2004 թ. սկզբին կատարված հետազոտությունը հնարավորություն տվեց վեր հանելու հարցվողների սոցիալապես ակտիվ խմբի կարծիքը ժողովրդավարական փոփոխությունների միտումների և ժողովրդավարական հիմնական ինստիտուտների օրինականության մասին, գենդերային հարաբերությունների շարժընթացը հասարակությունում և հայ հասարակության ժողովրդավարացման խոչընդոտները հետընտրական շրջանում:

2005 թ. Ասոցիացիան հետազոտեց Հայաստանի գենդերային իրավիճակը, որը հնարավորություն տվեց բացահայտելու գենդերային հավասարության առաջնդման շարժընթացը երկրի կենսագործունեության բոլոր ոլորտներում, կանանց սոցիալ-քաղաքական կարգավիճակը և հասարա-

կական-քաղաքական կյանքում առկա գենդերային անհավասարակշռության պատճառները:

Հետազոտության ընթացքում դիտարկվեցին կանանց քաղաքական կարգավիճակի հիմնախնդիրները. գենդերային ներկայացուցչությունը հանրապետական և տարածաշրջանային մակարդակի օրենսդրական և գործադիր իշխանություններում, կանայք քաղաքական կուսակցություններում և ընտրական գործընթացներում:

Ասոցիացիայի փորձագիտական խմբերի հետազոտություններն առանձնանում են առավել անկախությամբ և հնարավորություն են տալիս կանխորոշելու ժողովրդավարական գործընթացներում կանանց ակտիվ ներգրավման ու հայ հասարակության գենդերային անհավասարակշռության հաղթահարման ռազմավարությունը:

2006 թ. սկզբին կատարված հետազոտությունը, որը նվիրված էր հայ հասարակության քաղաքացիական մասնակցության գենդերային հայեցակետերի ուսումնասիրությանը, նախորդ տարիներին կատարված հետազոտությունների օրգանական շարունակությունն էր:

Քաղաքական մասնակցության հիմնախնդրի ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանվել որոշակի օրինաչափություն, որը կարելի է բնորոշել իբրև կանանց դինամիկ օտարում՝ որոշումների ընդունման գործընթացների մասնակցությունից կառավարման համակարգի և քաղաքական պաշտոնների մակարդակում:

Անցած 16 տարիները, որոնք բնորոշվում են իբրև ժողովրդավարական վերափոխումների ժամանակաշրջան, նշանավորվեցին կանանց ներկայության նվազումով թե՛ քաղաքական պաշտոններում, թե՛ ներկայացուցչական ժողովրդավարության մարմնում՝ Ազգային ժողովում, թե՛ ղեկավար՝ նախարարների տեղակալների պաշտոններում:

Չնայած 2004 թ. Հայաստանի կառավարության կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրին», որի առաջին գլուխը նախատեսում է միջոցներ՝ ուղղված գենդերային հավասարության ձեռքբերմանը և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանը, նրանց ներկայությունը պետական իշխանության թե՛ կենտրոնական, թե՛ տարածաշրջանային մարմիններում ու տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակներում ցածր է մնում՝ ցուցադրելով իշխանության հայրիշխանական բուրգը, որը բնորոշվում է

**Ներա-
ծու-
թյուն**

կանանց բացակայությամբ բարձր, որոշումների կայացման համար պատասխանատու պաշտոններում և առավել ընդգրկուն ներկայությամբ միջին և ստորին օղակների պաշտոններում:

Հայաստանում ակնառու է իշխանության ապաֆեմինացման դինամիկ գործընթացը՝ հիմնված քաղաքական մշակույթի հայրիշխանական-ամբողջատիրական ավանդույթների, գենդերային կարծրատիպերի և փոխակերպման գործընթացների հետևանքների վրա:

Ստեղծված իրավիճակում որոշումների ընդունման մակարդակում կանանց առաջ մղելու հիմնախնդիրը համալիր մոտեցում է պահանջում, ինչպես նաև իշխանության կառույցների և քաղաքական կուսակցությունների՝ գենդերային անհավասարակշռության հաղթահարման համակարգված միջոցներ ձեռնարկելու կամք:

Հայաստանը, ստորագրելով ՄԱԿ-ի կանանց դրությանը նվիրված համաշխարհային խորհրդատողական և այլ միջազգային փաստաթղթեր, պարտավորություն է ստանձնել գենդերային հայեցակետը ներառել պետական բոլոր կառույցներում, ռազմավարություններում, որոշումների նախագծման և ընդունման գործընթացներում: Գենդերային բաղադրիչի ներառումը անհրավահավասարության կառուցվածքի վերանայման, քաղաքական ինստիտուտների և առհասարակ հասարակության քաղաքական ու տնտեսական որոշումների ընդունման գործընթացի վերակառուցման անհրաժեշտություն է առաջացնում:

Հայաստանն այն երկրների թվում է, որոնք ստորագրել են Հազարամյակի հռչակագիրը, հետևաբար, իբրև անցումային տիպի տնտեսությամբ և իրավական ու ժողովրդավարական պետություն դառնալուն ձգտող երկիր, պետք է հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում իրականացնի գենդերային հավասարակշռության ապահովմանը միտված համակարգված միջոցառումներ:

Գենդերային հավասարության ձեռքբերմանն ուղղված քաղաքական փորձը, կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը պետք է դիտարկվեն որպես հայ հասարակության զարգացման անքակտելի բաղկացուցիչներ:

Միջազգային կարևորագույն չափորոշիչների շարքում հարկ է քննարկել մարդու իրավունքների արդի հայեցակարգը, գենդերային հավասարության հայեցակարգը և դրա հիման վրա սոցիալական հիմնախնդիրների վերլուծության գենդերային մոտեցումը, ինչպես նաև մարդկային զարգաց-

ման հայեցակարգը: Այս երեք հայեցակարգերը սերտորեն փոխկապակցված են և տղամարդկանց ու կանանց դիտում են արդի պատմության հավասար սուբյեկտներ: Ըստ այդմ, յուրաքանչյուր հայեցակարգ ենթադրում է հասարակության զարգացման գենդերային բաղադրիչի ներառում, պետական փաստաթղթերի, ծրագրերի ու որոշումների գենդերային ուղղվածություն:

Հասարակությունում գենդերային հավասարության ապահովումը հրատապ քաղաքական հիմնախնդիր է Հայաստանում և իշխանության կառույցներին, քաղաքական կուսակցություններին ու հասարակական կազմակերպություններին գործնական քայլեր է թելադրում: Այս հիմնախնդրի լուծման նախադրյալը քաղաքական կամքն է՝ հիմնված այն ըմբռնման վրա, որ ժողովրդավարությունը ենթադրում է էգալիտարիզմի և սեռերի հավասարության սկզբունքի իրականացում, որ առանց կանանց մասնակցության՝ քաղաքական դասավորության ու իշխանության օրինականությունը կասկածի տակ է դրվում, որ որոշումների կայացման ոլորտում կանանց ներկայացուչության «կրիտիկական զանգվածի» հասնելու դեպքում է միայն հումանիստական դառնում բուն քաղաքականությունը և որոշումների ընդունման նոր մշակույթ ձևավորվում:

2007 թվականի խորհրդարանական ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության հետազոտության հրատապությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնք քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում ձևավորված գենդերային անհավասարակշռության և 2008 թվականի նախագահական ընտրությունների քաղաքական գործընթացների հետևանք ու նախադրյալ են:

Քաղաքական մասնակցությունը յուրաքանչյուր հասարակության ժողովրդավարացման բանալիներից մեկն է, այն հատկապես կարևոր է անցումային շրջանի հասարակության համար: Քաղաքական գործընթացների կարևոր բաղադրիչ են ընտրությունները, որոնց մասնակցելը ոչ միայն քաղաքացիների քաղաքական հասունության և քաղաքական կամքի, այլև պատասխանատվության դրսևորում է ժողովրդավարական գործընթացների զարգացման համար: Քաղաքական մասնակցությունը ընտրություններին հասարակության ժողովրդավարացման և քաղաքացիների պատասխանատվության բարձրացման հզոր գործոն է և խթանում է մասնակցության ժողովրդավարության հետագա հզորացումը:

Քաղաքական մասնակցության հիմնախնդրի գենդերային հայեցակե-

տի առանձին քննությունը հրատապ է թե՛ այն հանրահայտ փաստի տեսանկյունից, որ չկա ժողովրդավարություն առանց գենդերային հավասարության, որ զուգակշռված ժողովրդավարությունը ենթադրում է տղամարդկանց և կանանց հավասար մասնակցություն քաղաքական գործընթացներին և հավասար պատասխանատվություն, թե՛ խտրականության, դրա տարածվածության աստիճանի և նպատող պատճառների ու հանգամանքների վերհանման տեսանկյունից:

Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտելու, թե որքանով են համապատասխանում իրականությանը լայնորեն տարածում գտած այն կարծրատիպային պատկերացումները, որոնք հաճախ են հնչում քաղաքական գործիչների ելույթներում. «կանայք իրենք չեն ցանկանում մասնակցել քաղաքականությանը», «կանայք չեն քվեարկում կանանց օգտին», «արդի հայ հասարակությունը չի պաշտպանում քաղաքականապես ակտիվ կանանց և նրանց ընտրությունը քաղաքական պաշտոններում»: Այս և այլ հարցերի պատասխանները հնարավորություն տվեցին ցույց տալու իրական վիճակը և իրական հասարակական կարծիքը, ոչ թե միտումնավոր տարածվող առասպելները, որոնք բացասական ազդեցություն են թողնում կանանց քաղաքական մասնակցության վրա: Դրանց հնարավորություն տվեցին նաև վեր հանելու գենդերային հավասարության ձեռքբերումը խոչընդոտող պատճառները, ինչպես նաև կանանց քաղաքական մասնակցության հետագա ակտիվացման նախադրյալները:

Հետազոտության նպատակները, կառուցվածքը և մեթոդները

Հետազոտության նպատակը

Կանանց քաղաքական մասնակցության հետազոտություն 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական և անցկացման շրջաններում, ընտրություններին կին թեկնածուների մասնակցության քանակական և որակական վերլուծություն, կանանց քաղաքական մասնակցության ձևավորումն ու զարգացումը խոչընդոտող բացասական գործելակերպի և կարծրատիպային պատկերացումների վերհանում:

Հետազոտության ընթացքում իրականացվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրվել է երկրի գեոդերային իրավիճակը, բացահայտվել են Հայաստանի քաղաքական ոլորտում ստեղծված գեոդերային անհավասարակշռության պատճառները:
- Վեր է հանվել կանանց քաղաքական մասնակցության ձևավորման վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների ողջ սպեկտրը, տրվել է կանանց կուտակած քաղաքական փորձի գնահատականը, ուսումնասիրվել են կանանց ընտրագանգվածային վարքագիծը կանխորոշող գործոններն ու նախադրյալները:
- Վեր են հանվել օրենսդրական իշխանությունում բնակչության նվազ ներկայացված խմբի՝ կանանց թվի մեծացման խոչընդոտների հատա-հարման ուղիները և ՀՀ Ազգային ժողովում՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության մարմնում, հավասարակշռված գեոդերային ներկայացուցչության հնարավորությունները:
- Քաղաքական փորձի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ կանանց քաղաքական լիդերության և կանանց քաղաքական մասնակցության առաջնիցի աշխատանքի իրական տվյալների ուսումնասիրության հիման վրա մշակվել են քաղաքական ոլորտում կանանց մասնակցության ակտիվացման երաշխավորություններ:

Անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը իրականացվել է հետևյալ երեք փուլերով. նախընտրական արշավ, ընտրություններ, հետընտրական շրջան:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.

- Կանանց քաղաքական մասնակցության դիտարկում Հայաստանի Ազգային ժողովի 2007 թվականի մայիսի ընտրություններից առաջ և հետո:
- Կլոր սեղանների և ֆոկուս խմբերի անցկացում:
- Հարցազրույցներ պատգամավորի թեկնածուների, քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների կին լիդերների ու ակտիվիստների հետ:
- Կանանց քաղաքական ներկայացուցչության վիճակագրական տվյալների վերլուծություն:
- ՉԼՄ-ներում կանանց քաղաքական մասնակցության լուսաբանման վերլուծություն:

Եզրակացությունների հանգելիս հետազոտողները հիմնվել են նաև տեղեկատվության մի շարք ուրիշ աղբյուրների վրա, որոնց թվում են կին թեկնածուների հրապարակային ելույթները և բանավեճերը նրանց մասնակցությամբ, ընտրությունների շրջանում հանրապետությունում անցկացված սոցիոլոգիական հարցումների և ՁԼՄ-ների մոնիտորինգի արդյունքները, միջազգային և տեղական դիտորդների կարծիքները և կանանց քաղաքական մասնակցության առավել վաղ հետազոտությունների տվյալները:

Հետազոտությունը ներառում է հետևյալ բլոկները.

1. Խորհրդարանական ընտրությունների գեոդերային կտրվածքը: Խորհրդարանի պատգամավորի համար առաջադրված կին թեկնածուների քանակական և որակական վերլուծություն (համամասնական և մեծամասնական համակարգերով): Կին թեկնածուների ընտրազանգվածային վարքագծի առանձնահատկությունները:
2. Նորընտիր խորհրդարանի գեոդերային կազմը: Ազգային ժողովի կին պատգամավորները:
3. Կանանց քաղաքական ակտիվության գնահատականը ընտրազանգվածի նախապատվություններում և հասարակական գիտակցության կարծրատիպերում: Կին թեկնածուները ՁԼՄ-ներում:
4. Կանայք և կանանց միությունները քաղաքական կուսակցություններում: Գեոդերային մոտեցումները քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերում: Գեոդերային ռազմավարությունները կուսակցությունների կադրային քաղաքականության մեջ, գեոդերային հավասարակշռությունը կուսակցություններում՝ որպես ներկուսակցական ժողովրդավարության գործոն:
5. Կանաց հասարակական կազմակերպությունները ընտրական գործընթացում: Կանանց լիդերության աջակցության ռազմավարությունը:

Հիմնախնդրի հիմնավորումը

Հայաստանի անկախության տարիներին անցկացված ընտրությունների շարժընթացն անդրադարձնում է անցումային շրջանի երկրներին բնո-

րոշ միտումը՝ կանանց օտարումը իրական իշխանությունից: Չնայած ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեռերի իրավահավասարության սկզբունքին՝ տեղի է ունեցել կանանց դուրսնալուսման պետական քաղաքականության ձևավորման ոլորտից: Իշխանության ապաֆեմինացման գործընթացն առնչվել է թե՛ ընտրովի պաշտոններին, թե՛ գործադիր կառույցների ղեկավար կազմերին: Հաշվի առնելով, որ կանայք կազմում են ՀՀ բնակչության 52%-ը, իսկ հանրապետության քաղաքական կուսակցություններում՝ միջին հաշվով 40%-ը, ստեղծված իրավիճակը կարելի է գնահատել որպես ժողովրդավարության ճեղքվածք և հանրապետության կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների չափազանց անարդյունավետ օգտագործման վկայություն:

Աղյուսակ 1.

ՀՀ Ազգային ժողովում կանանց և տղամարդկանց ներկայացուցչության շարժընթացը

Տարի	Տոկոսներով	
	Կանայք	Տղամարդիկ
1995	6,3 %	93,7 %
1999	3,1 %	96,9 %
2003	5,3 %	94,7 %
2007	9,2 %	90,8 %

Օրենսդիր իշխանությունում կանանց ներկայացուցչության հարցն առանձնապես հրատապ է դառնում վերջին խորհրդարանական ընտրությունների լույսի ներքո, որոնք անցկացվեցին ՀՀ Ընտրական օրենսգրքում ամրագրված փոփոխության՝ կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության պարտադիր 15%-անոց քվոտայի պայմաններում: Համասնական համակարգով առաջադրված թեկնածուների ցուցակների վերլուծությունը, ինչպես նաև հանրապետության Ազգային ժողովում կանանց թիվը 5,3%-ից (2003 թ.) մինչև 9,2% (2007 թ.) բարձրանալու փաստը վկայում են, որ քվոտան որոշակի առաջընթաց է ապահովել, սակայն Հայաստանը նախկինի պես զգալիորեն հետ է մնում ոչ միայն օրենսդրական

իշխանությունում կանանց ներկայացուցչության միջին համաշխարհային ցուցանիշներից (17%), այլև վերջին տեղն է զբաղեցնում Հարավային Կովկասի հանրապետությունների շարքում. Վրաստանի խորհրդարանում կանայք 9,4% են կազմում, Ադրբեջանում՝ 11,3%¹: Մինչդեռ հայտնի է, որ կանանց ներկայացուցչությունը խորհրդարաններում հիմնարար համակարգատեղծ չափանիշ է համարվում, որը ցույց է տալիս քաղաքական համակարգերի առանձնահատկությունները և կուսակցությունների վերաբերմունքը գենդերային զարգացման ծրագրերին:

2007 թ. ընտրությունների ընդհանուր բնութագիրը

2007 թ. մայիսին կայացած խորհրդարանական ընտրություններում ՀՀ Ազգային ժողովի 131 տեղերի համար (90-ը կուսակցական ցուցակներով և 41-ը՝ միամանդատ ընտրատարածքներում) մասնակցել են 22 կուսակցություն և մեկ կուսակցական դաշինք: Մեծամասնական համակարգով առաջադրվել է 132 թեկնածու, այսինքն՝ մոտ երեք հավակնորդ մեկ տեղի համար: Խորհրդարան մտնելու համար կուսակցություններին անհաժեշտ էր ստանալ ընտրողների ձայների ավելի քան 5%-ը, դաշինքներին՝ 7%-ը: Միամանդատ ընտրատարածքներում հաղթանակի համար բավական էր ստանալ ձայների հարաբերական մեծամասնությունը:

Քվեարկության ընթացքին հետևում էին 53 տեղական կազմակերպություններ՝ 13 հազար 808 մարդկանց մասնակցությամբ, և 6 միջազգային առաքելություններ՝ 764 դիտորդներով:

Քվեարկելու իրավունք ունեցող 2 միլիոն 319 հազար 722 մարդկանցից քվեակությանը մասնակցել է 1 միլիոն 391 հազար 540 մարդ (59,98%):

Քվեարկության արդյունքում խորհրդարան մտավ հանրապետության 5 կուսակցություն՝

¹ Տվյալները քաղված են Միջխորհրդարանական միության քարտուղար Անդերս Ջոնսոնի 2007 թ. մարտի 2-ի զեկույցից:

Հայաստանի հանրապետական կուսակցություն – 457 032 ձայն (32,9%),

«Բարգավաճ Հայաստան» - 204 443 ձայն (14,7%),

ՀՅ Դաշնակցություն – 177 192 ձայն (12,75%),

«Օրինաց երկիր» - 95 256 ձայն (6,9%),

«Ժառանգություն» - 80 890 ձայն (5,82%):

2007 թվականի մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունները հերթական էին՝ չորրորդը Հայաստանի անկախություն հռչակելուց հետո և առաջինը 2005 թվականի նոյեմբերին անցկացված սահմանադրական բարեփոխումներից հետո, որոնք նախատեսում էին Ազգային ժողովի լիազորությունների ընդլայնում, նրա դերի բարձրացում կառավարության ձևավորման գործում և ամրագրում էին նոր հնգամյա ժամկետ խորհրդարանի գործունեության համար:

Բարեփոխված Ընտրական օրենսգրքում փոփոխված է խորհրդարանի համամասնական և մեծամասնական տեղերի հարաբերակցությունը, միամանդատ ընտրատարածքները 56-ից նվազել են մինչև 41: Վերջին ընտրությունների բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանք նախորդել են 2008 թվականին կայանալիք նախագահական ընտրություններին և փորձագետների գնահատականներում որակվել են որպես նախագահական մրցավազքի մեկնարկ: Նշված բոլոր գործոնները նպաստել են յուրաքանչյուր պատգամավորական մանդատի «արժեքի» բարձրացմանը և խորհրդարանի տեղերի համար պայքարին հաղորդել խիստ և անզիջում բնույթ, ինչը չէր կարող չազդել ընտրություններին կանանց մասնակցության վրա, հատկապես մեծամասնական համակարգի:

Ըստ միջազգային դիտորդների գնահատականների. «Ընտրությունները Հայաստանում առաջընթաց ցույց տվեցին և ընդհանուր առմամբ անցան ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած խորհրդարանական ընտրությունների անցկացման պարտավորություններին և ուրիշ միջազգային չափորոշիչներին համապատասխան»²: Միաժամանակ դիտորդներ

2 Statement of Preliminary Findings and Conclusions on the 12 May 2007 Parliamentary Elections in Armenia www.osce.org/odihr

**Ներա-
ծու-
թյուն**

ըը մի շարք մտահոգություններ հայտնեցին, մասնավորապես ձայներ հաշվելու ընթացակարգի, քաղաքականության և բիզնեսի սերտաճման և ընտրարշավներում ծախսվող ֆինանսական միջոցների ոչ բավարար թափանցիկության կապակցությամբ:

Դիտորդներն արձանագրեցին Ընտրական օրենսգրքի փոփոխության՝ կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության պարտադիր 15%-անոց քվոտայի դրական ազդեցությունը:

Այսուհանդերձ Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) հանձնված բոլոր հայտերի ուսումնասիրությունը՝ թե՛ համամասնական, թե՛ մեծամասնական համակարգերով, վեր հանեց մի շարք մտահոգություն հարուցող օրինաչափություններ, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում գնահատել անցած ընտրությունների գեներալիս կտրվածքը և դրա հիման վրա ուղիներ նախանշել բացասական գործելակերպը հաղթահարելու և նոր քվոտային մեթոդների արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԳԼՈՒԽ 1

ԿԱՆԱՅՔ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

1

Կանայք համամասնական համակարգով առաջադրված թեկնածուների կազմում

Խորհրդարանական ընտրություններում առաջադրված 22 քաղաքական կուսակցությունների և մեկ դաշինքի ցուցակներում ներկայացվել է 1313 թեկնածու, որոնցից 297-ը՝ կին (22,6%): Համեմատության համար նշենք, որ 2003 թ. կուսակցական ցուցակներով խորհրդարանի համար առաջադրվել է 162 կին (1143 թեկնածուներից), ինչը կազմում է 14,1%:

2003 թ. ցուցակների առաջին տասնյակում ներկայացվել է 27, իսկ 2007-ին՝ 37 կնոջ թեկնածություն: Հայտնի է, որ կուսակցությունների համար սահմանված 5%-անոց արգելքի պարագայում առավել շանսեր ունեն այն թեկնածուները, որոնք ներկայացվում են ցուցակի առաջին հնգյակում: 2003-ին առաջին հնգյակներում է հայտնվել 6 կին, 2007-ին՝ 17, ընդ որում մյուս կամք է ցուցաբերել ընդամենը 11 կուսակցություն: Կանայք կուսակցությունների ցուցակներում ներկայացվել են սկսած 2-րդ տեղից, միակ առաջին տեղը հատկացվել է Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության լիդեր Լյուդմիլա Սարգսյանին (տես Աղյուսակ 2): Վերլուծությունը ցույց է տալիս որ քվտան ընդհանուր առմամբ նպաստել է կանանց առաջնորդմանը, սակայն անցողիկ առաջին հնգյակում նրանց ընդգրկման հարցը խորհրդարանական ընտրություններում առաջադրվող կուսակցությունների առնվազն կեսի համար դեռևս մնում է չլուծված հիմնախնդիր:

Նախընտրական ցուցակների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքի 15%-անոց քվտայի պահանջը բոլոր կուսակցությունները կատարել են:

Առաջադրված կուսակցությունները, ըստ ցուցակներում կանանց ներկայացվածության աստիճանի, կարելի է դասակարգել երեք խմբի:

Առաջին խմբին կարելի է վերագրել 7 կուսակցություն, որոնք իրենց ցուցակներում ընդգրկել են 26%-ից (*Հայաստանի երիտասարդական կուսակցություն*) մինչև 44% (*Միավորված ազգային-ազատական կուսակցություն*) կանանց: Երկու կուսակցություններն էլ ներկայանում են որպես երիտասարդական և երկուսն էլ իրենց ցուցակներում տղամարդկանց և կանանց հերթագայությամբ մասամբ ձգտել են ղեկավարվել այսպես կոչված «կայծակնային սկզբունքով» (տես Աղյուսակ 2): Այդ խմբի չորս կուսակցություն՝ *Ազգային-ժողովրդավարական կուսակցությունը*, *Հայաստանի սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը* և *Հայաստանի երիտասարդական կուսակցությունը*, կանանց ներկայացրել են առաջին հնգյակում: Այդ խմբի ոչ մի կուսակցություն խորհրդարան չի մտել:

Երկրորդ խմբին կարելի է վերագրել 9 կուսակցություն, որոնք ապահովել են 20%-ից (*Հայաստանի ժողովրդական կուսակցություն*) մինչև 25% (*ՀՅ Դաշնակցություն*): Այդ խմբի 5 կուսակցություն՝ *Միավորված աշխատանքային կուսակցություն*, *«Ժառանգություն»*, *«Օրինաց երկիր»*, *ՀՅ Դաշնակցություն* և *«Իմպիչմենտ» դաշինքը*, կանանց ընդգրկել են առաջին հնգյակում: Խորհրդարան մտավ երեք կուսակցություն՝ *ՀՅ Դաշնակցությունը*, *«Ժառանգությունը»* և *«Օրինաց երկիրը»*:

Երրորդ խմբում 7 կուսակցություն է, սրանք ապահովել են 15,3%-ից (*Հայաստանի հանրապետական կուսակցություն*) մինչև 18,4% (*«Դաշինք»*) կանանց ընդգրկում: Այդ խմբի երկու կուսակցություն՝ *ՀՀԿ-ն* և *«Բարգավաճ Հայաստանը»*, խորհրդարանական ընտրություններում ստացել են առավել մեծ թվով ձայներ: Այդ խմբում ընդամենը երկու կուսակցություն է կանանց ընդգրկել առաջին հնգյակում՝ *«Բարգավաճ Հայաստանը»* և *«Դաշինքը»*:

Կուսակցությունների նախընտրական ցուցակներում կանանց ներկայացվածության ցուցանիշների և ընտրություններում այդ կուսակցությունների ստացած ձայների քանակի համահարաբերակցությունը որոշ չափով հաստատում է հանրահայտ սկզբունքը՝ «ինչքան շատ իշխանություն, այնքան քիչ կանայք» (տես Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Կանանց ներկայացվածությունը կուսակցական մախընտրական ցուցակներում

	Քաղաքական կուսակցությունները	Թեկնածուների ընդհանուր թիվը կուսակցական ցուցակում	Կանանց թիվը ցուցակում	Կանանց %-ը ցուցակում	Այն տեղերը, որտեղ ներկայացված են կանայք	Չայների տոկոսը՝ ըստ ընտրությունների արդյունքների
1	Միավորված ազգային-ազատական կուսակցություն	18	8	44.4%	6,7,9,11,12	0.19%
2	«Հանրապետություն» կուսակցություն	55	19	34,5%	10,12,22,26,29	1.62%
3	Ազգային-ժողովրդավարական կուսակցություն	73	24	32,8%	2,5,18,23,26	0.61%
4	Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն	18	6	30%	1,11,12,14,17	0.07%
5	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	33	10	30,3%	3,7,9,11,16	0.27%
6	«Նոր ժամանակներ» կուսակցություն	58	17	29,3%	10,12,20,24,25	3.38%
7	Հայաստանի երիտասարդական կուսակցություն	19	5	26,3%	3,8,12,14,16	0.16%
8	«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն	113	29	25,6%	4,11,23,30,36	12.75%
9	«Օրինաց երկիր» կուսակցություն	120	28	23,3%	3,19,30,33,37	6.85%
10	«Վերածնունդ» քրիստոնյա-ժողովրդական կուսակցություն	20	4	22,7%	8,15,19,20,22	0.25%
11	Հայաստանի մարքսիստական կուսակցություն	9	2	22,2%	7, 9	0.2%
12	Ժողովրդական կուսակցություն	40	9	22,5%	8,11,18,27,33	2.66%
13	«Ժառանգություն» կուսակցություն	51	11	21,5%	2, 4, 7, 11,24	5.82%
14	Միավորված աշխատանքային կուսակցություն	77	16	20,7%	4,5,9,17,22	4.26%
15	«Ինպիչմենտ» դաշինք	59	12	20,3%	4,15,19,23,26	1,28
16	Հայաստանի ժողովրդական	64	13	20,3%	6,8,12,28,37	1.7%

1

1

17	«Դաշինք» կուսակցություն	38	7	18,4%	2,11,21,30,40	2.38%
18	«Ժողովրդական համաձայնություն» կուսակցություն	11	2	18%	9,11	0.3%
19	«Ազգային միաբանություն» կուսակցություն	71	12	16,9%	10,16,20,36,49	3.58%
20	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	49	8	16,3%	7,17,28,31,38	0.63%
21	«Ժողովրդավարական ուղի» կուսակցություն	31	5	16%	9,15,25,29,30	0.6%
22	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	112	18	16%	3,11,20,23,28	14.71%
23	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	111	17	15,3%	8,12,23,37,46	32.89%

Մեծամասնական համակարգով առաջադրված կանայք

Միամանդատ ընտրատարածքներում առաջադրված կանանց թիվը ընտրությունից ընտրություն անշեղորեն նվազում է, ընդ որում շատ ավելի մեծ տեմպերով, քան տեղի է ունենում այդ ընտրատարածքների թվի նվազումը: Այսպես, Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում 1999 թվականի համեմատությամբ միամանդատ ընտրատարածքների թիվը նվազել է մոտավորապես 2 անգամ, սակայն կանայք մեծամասնական համակարգով 2007 թվականին առաջադրվել են 10 անգամ ավելի քիչ, քան նույն 1999 թվականին: Պատճառը դաժան պայքարն է և այդ համակարգով ընտրությունների առևտրականացման բարձր աստիճանը: Բնութագրումները, որ տալիս են կին թեկնածուները մեծամասնական ընտրատարածքներին, մեկնաբանությունների կարիք ունեն: «Մեծամասնական ընտրատարածքները փակ են կանանց համար, և թող որևէ կին չպարծենա, որ կարող է ճեղքել այդ պատը»³, «Մեծամասնական համակարգով առաջադրված կանայք հերոսական արարք են կատարում, նման ինքնահրկիզման, ինքնասպանության, խարակիրի»⁴:

3 ԱԺ պատգամավոր Ալվարո Պետրոսյանի (ՀՅ Դաշնակցություն) հրապարակային ելույթից:
 4 Ինեսսա Աղամյանի հետ («Ազգային միասնություն») հարցազրույցից:

2003 թվականի ընտրություններում մեծամասնական համակարգով առաջադրվել է 18 կին, ինչը կազմում է բոլոր առաջադրված թեկնածուների 4,4%-ը, խորհրդարան է անցել միայն մեկը՝ բոլոր գումարումների պատգամավոր Հրանուշ Հակոբյանը: 2007 թվականի ընտրություններում առաջադրվել է ընդամենը 5 կին, ինչը կազմում է 3,7%: Նշենք, որ սկզբնական շրջանում միամանդատ ընտրատարածքներում առաջադրվել է 11 կին, որոնց կեսն այնուհետև ինքնաբացարկ է հայտարարել (տղամարդկանց շրջանում ինքնաբացարկ է հայտարարել 36 մարդ): Թեկնածուների ինքնաբացարկ հայտարարելու իրական պատճառները, որպես կանոն, սովորում են մնում, և դա հավասարապես վերաբերում է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց: Քաղաքացիական նախաձեռնությամբ 16-րդ ընտրատարածքում (քաղաք Էջմիածին) առաջադրված Սուսաննա Հարությունյանը դատարանի որոշմամբ դուրս մնաց ընտրությունների մասնակցելուց մարզային ընտրական հանձնաժողով ներկայացրած փաստաթղթերում հայտնաբերված անճշտությունների պատճառով: Ինքը՝ թեկնածուն, համոզված է, որ քաղաքական տեխնոլոգիաների գոհ է դարձել: Նշենք, որ Սուսաննա Հարությունյանը նաև 2005 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ առաջադրվել է Էջմիածնի քաղաքապետի թեկնածու, բայց չի անցել:

Պայքարը շարունակող հինգ կանայք առաջադրվել են կուսակցական նախաձեռնությամբ և կուսակցությունների, հիմնականում ընդդիմադիր, անդամ են եղել: Երեք կին առաջադրվել է «Օրինաց երկրից», մեկը՝ ՀԺԿ-ից և մեկը առաջադրվել է Հայաստանի երիտասարդական կուսակցության աջակցությամբ: Այս փաստը վկայում է, որ կանայք, առանց նախապես ապահովելու քաղաքական կուսակցությունների աջակցությունը, չեն համարձակվում պայքարի մեջ մտնել միամանդատ ընտրատարածքներում: Հարկ է նշել, որ նման վարքագիծ է դրսևորել 2007 թվականի ընտրություններում մեծամասնական համակարգով իրենց թեկնածությունն առաջադրած տղամարդկանց ճնշող մեծամասնությունը:

Երկու ընտրատարածքում՝ 12-րդում (Երևան, Շենգավիթ), որտեղ առաջադրվել են Հասմիկ Բաղդասարյանը («Օրինաց երկիր») և Ժասմեն Ասրյանը (Հայաստանի երիտասարդական կուսակցություն), և 31-րդում (ք. Ալավեր-

1

ղի), որում առաջադրվել են Վիկտորյա Հարությունյանը («Օրինաց երկիր») և Լարիսա Փարենուզյանը (Հայաստանի ժողովրդական կուսակցություն), կանայք փաստորեն մրցել են միմյանց հետ: Սկզբնական փուլում երկու կին է առաջադրվել նաև 11-րդ ընտրատարածքում, որտեղ առաջադրված էր Հեղինե Բիշարյանը («Օրինաց երկիր»), հետագայում երկրորդը ինքնաբացարկ է հայտնել: Քաղտեխնոլոգների կարծիքով, միևնույն ընտրատարածքում կանանց հակամարտությունը ցանկալի չէ, քանի որ նրանք կարող են միմյանցից ձայներ տանել: Իրենք՝ թեկնածու կանայք, սակայն, համաձայն չեն այդ կարծիքին և համոզված են, որ իրենց ընտրագանգվածները չեն համընկնում, իրենց դեպքում որոշիչ է եղել կուսակցական պատկանելության գործոնը:

Միամանդատ ընտրատարածքներում առաջադրված կանանցից երեքը ստացած ձայների քանակով երկրորդն են եղել հաղթանակ տարած թեկնածուից հետո: Հեղինե Բիշարյանը (11-րդ ընտրատարածք) պայքարի մեջ է մտել երեք թեկնածուների հետ և ստացել է 8406 ձայն (իր մրցակիցները՝ 16598 և 5543 ձայն): Հասմիկ Բաղդասարյանը (12-րդ ընտրատարածք) 5289 ձայներով երկրորդն էր այդ ընտրատարածքում առաջադրված վեց թեկնածուների շարքում (հաղթող թեկնածուն ստացել է 11 180 ձայն), և Լարիսա Փարենուզյանը (31-րդ ընտրատարածք) ստացել է 5514 ձայն չորս մրցակիցների շարքում (հաղթող թեկնածուն ստացել է 21 468 ձայն): Մյուս երկու թեկնածուները նույն ընտրատարածքներում պակաս հաջողություն են ունեցել: Վիկտորյա Հարությունյանը (31-րդ ընտրատարածք) ստացել է 4511 ձայն, Ժասմեն Ասրյանը (12-րդ ընտրատարածք)՝ ընդամենը 1269 ձայն: Հարկ է նշել, որ Ժասմեն Ասրյանը չի կարողացել լիարժեք քարոզարշավ տանել, քանի որ այդ օրերին դժբախտ դեպքի հետևանքով մահացել է ամուսինը, որը, ինչպես հավաստում է թեկնածուն, եղել է իր ընտրարշավի գաղափարական ոգեշնչողն ու կազմակերպիչը:

Հեղինե Բիշարյանը, որը խորհրդարան մտավ կուսակցական ցուցակով, փորձեց Սահմանադրական դատարանում բողոքարկել քվեարկության արդյունքները, սակայն հետագայում հետ վերցրեց դիմումը: Առաջին ատյանի դատարան դիմեց Լարիսա Փարենուզյանը: Հայցադիմումի շարժառիթ էին ծառայել մեծ թվով անճշտություններ, որոնք թույլ էին տրվել ձայները

հաշվելիս իր ընտրատարածքի մի շարք տեղամասերում: Գատարանում պատասխանողները վկայակոչեցին այդ անճշտություններ թույլ տված հանձնաժողովների անդամների ոչ բավարար իմացությունը: Գատարանը չեղյալ չհամարեց ընտրատարածքային հանձնաժողովի որոշումը:

Մրցավազքի ֆավորիտ կուսակցություններից և ոչ մեկը միամանդատ ընտրատարածքներում կին չի առաջադրել: Հրանուշ Հակոբյանը, որ բազմիցս ԱԺ պատգամավոր է ընտրվել մեծամասնական համակարգով, 2007 թվականի ընտրություններում նախընտրեց առաջադրվել կուսակցական ցուցակով և լինելով անկուսակցական՝ 8-րդ տեղը զբաղեցրեց Հայաստանի հանրապետական կուսակցության ցուցակում:

Ընդհանուր առմամբ, հիմնվելով հետազոտության ընթացքում հարցման ենթարկված կանանց կարծիքի վրա, կարելի է արձանագրել, որ մեծամասնական համակարգով ընտրվելու հնարավորությունը աստիճանաբար նվազում է, անգամ փորձառու և քաղաքականության մեջ կայացած կանայք բացառում են հաջողությունը միամանդատ ընտրատարածքներում առաջադրվելու դեպքում: Մեծամասնական համակարգի նկատմամբ բացասական դիրքորոշում ունի նաև քաղաքական կուսակցությունների մեծ մասը: Շատ քաղաքական գործիչներ հենց այդ համակարգի հետ են կապում կեղտոտ տեխնոլոգիաների կիրառումը և ընտրությունների ընթացքում տեղի ունեցող խախտումների մեծ մասը: Մի շարք միամանդատ ընտրատարածքներին բնորոշ է առանց այլընտրանքի ընտրությունների գործելակերպը: Ելնելով այդ իրողությունից՝ կուսակցություններն իրենց ռազմավարություններում նախատեսում են անցումը 100%-անոց համամասնական համակարգի:

Ի՞նչ կանայք են առաջադրվում խորհրդարանական ընտրություններում

Թեկնածուների ցուցակների վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշ եզրակացություններ անելու խորհրդարանի համար առաջադրվող կանանց մասնագիտական և տարիքային կազմի մասին: Ինչպես շատ հետխորհրդային երկրների, այնպես էլ Հայաստանի դեպքում արդարացի է

այն թեզը, թե ժամանակակից կանանց քաղաքական լիդերները օգտագործում են այն ռեսուրսները, որոնք ձևավորվել են դեռևս խորհրդային ժամանակներում: Առավել ակտիվություն են ցուցաբերում ավագ տարիքի կանայք, որոնք օրենսդրական և գործադիր իշխանության կառույցներում աշխատանքի փորձ ունեն: Այդ թեզը որոշ չափով հաստատվում է համամասնական և մեծամասնական համակարգով խորհրդարանական ընտրություններում առաջադրվող կանանց տարիքային կազմը ուսումնասիրելու արդյունքում:


1

2007 թվականի խորհրդարանական ընտրություններում առաջադրված կանանց շարքում ամենաներկայանալին 40-նն անց կանանց խումբն է՝ 72,8% (տես Գիագրամ 1): Ցուցակներում ամենասակավաթիվը մինչև 30 տարեկան կանանց խումբն է, իսկ 30-ից մինչև 40 տարեկանները կազմում են 19,4%: Փորձի առկայությունն, անկասկած, թե՛ քաղաքականապես ակտիվ կանանց, թե՛ տղամարդկանց տարիքային աստիճանակարգման գլխավոր գործոնն է, սակայն կանանց դեպքում դա միակ պատճառը չէ:

Երիտասարդ կանայք, որպես կանոն, փոքր երեխաներ ունեն՝ դրանից բխող բոլոր դժվարություններով հանդերձ, և այդ մասին խոսում էին բոլոր հարցվողները: 40-նն անց կանայք մեծ երեխաներ և կարգավորված ընտանեկան կենցաղ ունեն, մի բան, որ, իրենց իսկ կանանց կարծիքով, պակաս կարևոր գործոն չէ, դրա շնորհիվ նրանք հնարավորություն են ունենում իրացնել իրենց ներուժը թե՛ մասնագիտական, թե՛ քաղաքական գործունեության մեջ: Այդուհանդերձ հարկ է նշել, որ վերջին տարիներին այդ բավական տարածված կարծրատիպը միշտ չէ, որ հաստատվում է իրական կյանքում: Քիչ չեն այն կանայք, որոնք փոքր երեխաներ ունեն, սակայն քաղաքական և մասնագիտական ակտիվություն են ցուցաբերում: Նախկին մշակույթի փոխնախարար Լիլիթ Ասատրյանի օրինակը, որը արտասահմանյան գործուղումների էր մեկնում փոքր երեխայի հետ միասին, Հայաստանում եզակի է, բայց և վկայում է, որ կարծրատիպերը կոտրվում են: Սույն հետազոտության ընթացքում շատ կանայք են հանդիպել, որոնք երեք կամ չորս երեխա ունեն, ընդ որում նախադպրոցական հասակի: Մասնավորապես ներկայիս գումարման խորհրդարանի պատգամավոր կանանց շարքում երեքը բազմազավակ մայր են:

Դիագրամ 1

Թեկնածու կանանց տարիքային կազմը



1

Հետազոտության ընթացքում հարցված կանայք ընդգծում էին, որ իրենց քաղաքական ակտիվության անհրաժեշտ և պարտադիր պայմանը ընտանիքի և հարազատների աջակցությունն ու ընթրնումն է: «Նախընտրական արշավում օգնել են ամուսինս և երեխաներս»⁵, «Ամուսինս իմ քարոզարշավի գլխավոր ոգեշնչողն է եղել»⁶, «Իմ քաղաքական ակտիվության հետ վաղուց են հաշտվել ընտանիքիս անդամները, գիտեն, որ այլ կերպ չեմ կարող»⁷. սրանք առավել տիպական պատասխաններն են, որոնք վկայում են հարազատների և մերձավորների աջակցությունը: Բավական տարածված կարծրատիպը քաղաքական գործիչ կանանց անձնական կյանքի շղասավորվածության մասին բնավ էլ միշտ չէ, որ հաստատվում է իրական կյանքում: Այլ հարց է, որ ամուր թիկունքի գործոնը կարևոր է յուրաքանչյուր քաղաքական գործչի համար, լինի կին թե տղամարդ: Եվ եթե տղամարդկանց դեպքում «թիկունքի ապահով-

5 Հեղինե Բիշարյանի հրապարակային ելույթից («Օրինաց երկիր»):
 6 Ժասմեն Ասրյանի հարցազրույցից («Հայրենիք» կուսակցություն):
 7 Գոհար Մարտիրոսյանի (ՀԺԿ)՝ Արտաշատում կայացած կլոր սեղանի ժամանակ ունեցած ելույթից:

ման» հարցում, որպես կանոն, խնդիրներ չեն ծագում, ապա ոչ բոլոր կանայք են և միշտ չեն կարողանում ապավինել ամուսինների ընթրնմանը: Այն դեպքում, երբ հակասություն է ծագում քաղաքական կարիերայի և ընտանեկան կյանքի միջև, կանայք ընտրությունը կատարում են հոգուտ ընտանիքի, մինչդեռ տղամարդիկ շարունակում են զբաղվել քաղաքականությամբ: ԱԺ պատգամավոր Արևիկ Պետրոսյանի կարծիքով. «Կինը միշտ էլ կին է մնում, նա պետք է հանգիստ լինի, որ տանն ընտանիքի անդամների հետ կապված խնդիր չկա»: Դա անհրաժեշտ պայման է քաղաքական ասպարեզ մտնելու համար:

1

Թեկնածու կանանց մասնագիտական զբաղվածության վերլուծությունը ցույց է տալիս (տես Դիագրամ 2), որ նրանց շարքում ամենից շատ կրթության ոլորտի աշխատողներ են՝ 25%: Երկրորդ խումբն՝ ըստ թվաքանակի, տարբեր մակարդակների կուսակցական աշխատողներն են, այսինքն՝ այն կանայք, որոնք որպես իրենց աշխատավայր նշում են կուսակցական կառույցները՝ 13,2%: Պետծառայող կանայք ցուցակներում 10% են կազմում: Ցուցակներում միջազգային կառույցներում աշխատող կանանց առկայությունը հաստատում է այն թեզը, որ բարձր վարձատրվող աշխատանքը նպաստում է ինքնագնահատականի բարձրացմանը և խթանում կարիերան շարունակելու ցանկությունը, նաև քաղաքականության մեջ: Գործարար ոլորտի աշխատակիցները 7% են կազմում, մասնավորապես ձեռնարկատերերը կամ ձեռնարկությունների ղեկավարները՝ ընդամենը 2,4%: Նշենք, որ տղամարդկանց շրջանում դա առավել ստվար խումբն է, ընդ որում քիչ չեն խոշոր բիզնեսի ներկայացուցիչները: Թեկնածու կանանց 4,6%-ը քաղաքականություն է եկել հասարակական սեկտորից, ընդամենն հարկ է նշել, որ վերջին տարիներին այդ իրողությունն ընդլայնման միտում է ցուցաբերում: Այն կանայք, որոնք անկախության տարիներին կայացել են որպես հմուտ կազմակերպիչներ հասարակական սեկտորում, սկսում են իրենց ներուժն իրացնել նաև քաղաքականության մեջ:


Վերլուծությունը ցույց է տալիս, որ ցուցակներում բավական ստվար խումբ են կազմում ժամանակավոր չաշխատող տղամարդիկ և կանայք: Կանանց շրջանում 24,6%-ը, այսինքն՝ յուրաքանչյուր չորրորդը, չի աշխատում: Այդ խմբում քիչ չեն նրանք, ովքեր զբաղված են կուսակցական աշխատանքով, սակայն դա մշտական աշխատավայր չեն համարում: Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչ կանայք հաճախ են նշում, որ

աշխատանքից զրկվել են կուսակցական պատկանելության պատճառով: Ամեն դեպքում չաշխատող թեկնածուները ընտրագանգվածի աչքում չեն շահում, քանի որ ընտրողները նրանց թեկնածու առաջադրվելը համարում են անձնական զբաղվածության խնդիրը լուծելու հնարավորություն:

Կուսակցական ցուցակներում ընդգրկված կանանց 12%-ը անկուսակցական է: Այս կանայք, որպես կանոն, իրենց մասնագիտության ոլորտում կայացած, պոտենցիալ մեծ հնարավորություններ ունեցող անձնավորություններ են: Դրանով է պայմանավորված կուսակցությունների շահագրգռությունը նրանց ռեսուրսները ներգրավելու հարցում: Որոշ անկուսակցական կանայք ընդգրկվել են առավել ուժեղ կուսակցությունների ցուցակների անցողիկ տեղերում և դարձել չորրորդ գումարման ԱԺ պատգամավոր: Նրանց շարքում են նախկին օմբուդսմեն Լարիսա Ալավերդյանը («Ժառանգություն»), փաստաբան Ջարուհի Փոստանջյանը («Ժառանգություն»), բոլոր գումարումների պատգամավոր Հրանուշ Հակոբյանը (ՀՀԿ), Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի նախկին տեղակալ Արևիկ Պետրոսյանը («Բարգավաճ Հայաստան»), լրագրող Նաիրա Զոհրաբյանը («Բարգավաճ Հայաստան»):

1

Դիագրամ 2



Կրկին ընտրվելու մղումը, որ բնորոշ է տղամարդ պատգամավորների մեծ մասին, չի շրջանցել նաև կանանց: Անցած գումարման յոթ կանանցից հինգը կրկին առաջադրվեցին և նրանցից չորսը կրկին մտան խորհրդարան: Խորհրդարանում ձեռք բերված աշխատանքի փորձն անտարակույս նպաստում է կանանց մրցունակությանը: Բացի դրանից, փորձը ցույց է տալիս, որ, չնչին բացառություններով, նորից ընտրված և օրենսդրական գործունեության մեջ հմտացած կանայք սկսում են ավելի գործուն արժարժեք գեներային հիմնախնդիրները և աշխատել կանանց հասարակական կազմակերպությունների հետ:

1

Կանանց՝ քաղաքական ոլորտ մտնելու սցենարներ

Հետխորհրդային տարածքի գեներային հետազոտությունների արդյունքում հայտնի են կանանց՝ քաղաքականության ոլորտ մտնելու մի քանի տիպական սցենարներ: Պատգամավորի թեկնածու առաջադրված կանանց և Ազգային ժողովի պատգամավոր կանանց կենսագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասը քաղաքականության ասպարեզ է մտնում կանանց համար տիպական սցենարներով, ընդամին այդ ուղիներից ոչ մեկը չի կարելի որոշիչ միտում համարել:

1. «Քաղաքականությունը որպես մասնագիտություն» սցենարը բնորոշ է այն կանանց, ովքեր ակտիվություն են դրսևորել մանկական տարիքից, կուսակցական լավ դպրոց են անցել և վառ արտահայտված լիդերական որակներ ունեն: Տվյալ սցենարի համար բնորոշ (տիպական) են հետևյալ տարբերակները.

1. Կանայք, որոնք ակտիվ են եղել դեռևս խորհրդային ժամանակներում, կոմերիտմիությունում, արհմիություններում, կուսակցությունում: Սա կանանց փոքրաթիվ կոհորտա է, որոնց անունները, որպես կանոն, քաջ հայտնի են: Այս խմբին կարելի է վերագրել ԱԺ պատգամավոր Հրանուշ Հակոբյանին, որի քաղաքական առաջխաղացումը սկսվել է խորհրդային տարիներին և երբեք չի ընդհատվել: Այդ խմբի որոշ կանանց բնորոշ է քաղաքական առաջխաղացման ընդհատումը՝ կապված փոխակերպման գործընթացների հետ: Օրինակ՝ ԱԺ պատգամավոր Գոհար

Ենթյանը, որ քաղաքականություն է մտել դեռևս խորհրդային ժամանակներում, անկախության սկզբնական տարիներին հեռացավ քաղաքականությունից և վերադարձավ ակտիվ քաղաքականություն որպես այն եզակի ղեկավարներից մեկը, որի ձեռնարկությունը՝ «Գարուն» կարի արտադրական միավորումը, պահպանեց իր գոյությունը տնտեսության ազատականացման դժվարին տարիներին:

2. *Կանայք, որոնք քաղաքականություն են եկել անկախության այլքի վրա:* Սա առաջադրվող թեկնածու կանանց թվում առավել ստվարաթիվ և բավական տարատեսակ խումբն է: Քաղաքական առաջխաղացման առումով սրա իրական ներուժը գնահատելու համար առավել մանրակրկիտ ուսումնասիրություն է անհրաժեշտ: Այս խմբին կարելի է վերագրել այն կանանց, ովքեր քաղաքականություն են եկել հասարակական սեկտորից: Օրինակ՝ Լարիսա Ալավերդյանը քաղաքականության ոլորտ է եկել հասարակական սեկտորից: Լինելով ճանաչված իրավապաշտպան կազմակերպության ղեկավար՝ նա դարձավ Հայաստանի առաջին օմբուդսմենը, այնուհետև հրաժարականից հետո ԱԺ պատգամավոր ընտրվեց «Ժառանգություն» կուսակցության ցուցակով:
3. *«Նոր սերնդի» ներկայացուցիչները՝* ժամանակակից երիտասարդությունը, որ լավ կրթություն է ստացել, հաճախ՝ արտասահմանում: Շատ կուսակցություններ շահագրգռված են նրանց ներուժով, ընդգրկում են երիտասարդական միավորումներում և հաճույքով տեղ տալիս իրենց կուսակցական ցուցակներում: Դժվար է վստահաբար ասել, որ նրանք քաղաքական առաջխաղացման հստակ նպատակադրում ունեն, նրանց անդամակցությունը կուսակցություններին կարող է կյանքի ուղու որոնումների դրսևորում լինել, հանրային ասպարեզում ինքզինքը դրսևորելու փորձ: Նրանց շարքում իրենց հստակ նպատակաուղղվածությամբ շահեկանորեն առանձնանում են այն երիտասարդ կանայք, ովքեր գենդերային կրթություն են ստացել և բարձրաձայնում են քաղաքականության մեջ առաջ գնալու մտադրությունների մասին:
4. *Քաղաքականության մեջ կանանց առաջխաղացումը կանանց լիդերության դայրոցների* միջոցով կանանց քաղաքականության ոլորտ մտնելու համեմատաբար նոր սցենար է, սակայն կանանց հասարակական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ արդեն որոշակի արդյունքներ է տալիս: Այսպես, կուսակցական ցուցակներով (9 քաղաքական կուսակցությունների) առաջադրված կանանց 6,8%-ը և մեծամասնական ընտ-

րատարածքների որոշ թեկնածու կանայք նախկինում եղել են Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի ունկնդիրներ:

II. «Քաղաքականությունը որպես մասնագիտական առաջխաղացման շարունակություն» սցենարը բնորոշ է այն կանանց, ովքեր նախքան քաղաքականություն գալը հաջող մասնագիտական առաջխաղացում են ունեցել, լինի պետական ծառայության, գործարարության թե այլ ոլորտում: Ընդ որում, բնավ պարտադիր չէ, որ նրանք ի սկզբանե մասնագիտական առաջխաղացումը դիտեն քաղաքական գործունեության պլացդարմ: Նման սցենարի իրականացման համար հնարավոր են հետևյալ տարբերակները:

1. Ձինվորագրվելը կուսակցությանը ավանդական տիպի մասնագիտական առաջխաղացման միջոցով՝ դեկավար պաշտոնից: Այսպես, ԱԺ պատգամավոր Արևիկ Պետրոսյանը քաղաքականություն մտավ՝ լինելով Քաղծառայության խորհրդի նախագահի տեղակալ, իսկ նախկինում եղել է ՀՀ արդարադատության փոխնախարար:
2. Ձինվորագրվելը քաղաքականությանը հաջող մասնագիտական առաջխաղացման միջոցով: Օրինակ՝ ԱԺ պատգամավորներ Ռուզաննա Առաքելյանը և Նաիրա Չոհրաբյանը քաղաքականություն են եկել՝ լինելով կայացած լրագրողներ: «Լրագրողը, առավել ևս՝ քաղաքական, նույնպես քաղաքական գործիչ է», - կարծում է Ռուզաննա Առաքելյանը: ԱԺ պատգամավոր Չարուհի Փոստանջյանը քաղաքականություն է եկել՝ լինելով կայացած փաստաբան:
3. Մուտք քաղաքական ասպարեզ մասնագիտական շահերը առաջ մղելու համար. այդ խմբում կարելի է ընդգրկել այն կանանց, ովքեր քաղաքականություն են եկել գործարար աշխարհից: Օրինակ՝ ԱԺ պատգամավոր Հերմինե Նաղդալյանը քաղաքականություն եկավ, երբ Հայաստանի գործարարների միության նախագահն էր:

III. «Քաղաքականությունը որպես կանացի կենսագրության շարունակություն» սցենարը կանանց քաղաքական առաջխաղացման բավական տարածված տեսակ է, որն իրականացվում է կնոջ հանրահայտ կերպարով՝ կուսակցական զինակցի: Ներկայիս պարագայում հնարավոր են հետևյալ տարբերակները:

1. *Քաղաքականությունը որպես ընտանիքում կնոջ ակտիվ դերի արդյունք.* այդ տարբերակը բնորոշ է ավանդական, պատմական արմատներ ունեցող կուսակցությունների ներկայացուցիչներին, օրինակ՝ ՀՅ Դաշնակցության, Կոմկուսի: Սակայն ուրիշ կուսակցություններում էլ կան դեպքեր, երբ կանայք կուսակցություն են մտնում՝ հետևելով հոր, ամուսնու կամ նույնիսկ երեխաների օրինակին: Օրինակ՝ ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանը, լինելով միջնակարգ դպրոցի տնօրեն, ակտիվ քաղաքականություն է եկել ամուսնու՝ Յուրի Բախշյանի ողբերգական վախճանից հետո, որը զոհվեց 1999 թվականին խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչության հետևանքով: ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանը ներշնչված է եղել ՀՅ Դաշնակցության գաղափարախոսությամբ մանկության տարիներից և հոր ազդեցությամբ:
2. *Քաղաքականությունը որպես հասարակությունում կանանց ակտիվ դերի արդյունք.* այս սցենարը բնորոշ է այն կանանց, որոնց ակտիվությունը չարաշահվում է տղամարդկանց կողմից: Նման իրավիճակը հասարակությունում առկա խտրական գործելակերպի հետևանք է, որը իրենց իսկ կանանց կողմից չի գիտակցվում: Նման կանայք կուսակցություններում ներկայացնում են հնազանդ և հավատարիմ մեծամասնությունը, նրանք քաղաքականության մեջ վեր բարձրանալու մղումներ չունեն, սակայն միշտ պատրաստ են ենթարկվել իրենց առաջադրող կուսակցության ղեկավարության որոշումներին: Ընտրությունների ժամանակ նման կանանց շրջանից կուսակցական շարքերում քիչ պատահական մարդիկ չեն հայտնվում, որոնք մասնավոր գրույցների ընթացքում խոստովանում էին, որ չեն ձգտում զբաղվել քաղաքական գործունեությամբ և իրենց քաղաքական գործիչ չեն համարում: Այդ տիպի առաջադրումը տեղի է ունենում միայն և միայն կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության պարտադիր 15%-անոց քվոտան սպառնալից նպատակով:

Կանանց՝ քաղաքական ոլորտ մտնելու դրդապատճառները

Այն հարցը, թե ինչու կանայք պետք է քաղաքականության մեջ լինեն, հետազոտության ընթացքում քննարկման առարկա չի դարձել, ինչը բնական է ֆոկլուս խմբերի տեսանկյունից, որոնք ընդգրկում էին բնակչության

1

հասարակական-քաղաքական ակտիվությամբ առանձնացող շերտի ներկայացուցիչներին: Այդուհանդերձ գրույցների, կյոթ սեղանների ընթացքում հարցվողները հաճախ իրենք էին փաստարկներ բերում՝ հիմնավորելով կանանց անհրաժեշտությունը քաղաքականության մեջ առհասարակ և Ազգային ժողովում մասնավորապես. «Հասարակությունում ներդաշնակությունն ու կայուն հավասարակշռությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հաշվի են առնում կնոջ տեսակետը և առաջ քաշած հիմնախնդիրները»⁸: «Հայ հասարակությունում կանանց քաղաքական ակտիվության որոշակի սոցիալական պատվեր կա, քանի որ հասարակությունը հոգնել է կոպտությունից, բթությունից, գռեհկությունից, տգիտությունից»⁹: Քաղաքականության մեջ կանանց ներկայության դեմ անվերապահ կարծիքներ չեն հնչել, սակայն բավական տարածված է այն դիրքորոշումը, որը ԱԺ-ում կանանց ներկայացվածության հիմնախնդիրը փոխադրում է այլ հարթություն. «Ինձ համար նշանակություն չունի, թե ով խորհրդարանում կսեղմի կոճակը, կի՞ն, թե՞ տղամարդ: Գլխավորն այն է, որ նա լինի կրթված, պարկեշտ և արժանի մարդ»¹⁰:

Կանանց քաղաքականության մեջ մտնելու դրդապատճառների ուսումնասիրությունը վեր հանեց, որ իրենց իսկ կին թեկնածուների մատնանշած շարժառիթները և հանրության սպասումները նրանց քաղաքականություն գալուց ընդհանուր առմամբ համընկնում են: Սրանից էլ ամենատարածված պատասխանը՝ կանայք քաղաքականություն են գալիս, որպեսզի այն ավելի մաքուր և մեղմ դարձնեն, իսկ հասարակության կյանքը՝ ավելի լավ և բարոյական. «Կանայք իրավիճակն ավելի սթափ են գնահատում: Մտածում են երեխաների և նրանց ապագայի մասին և չեն կարող վարվել այնպես, ինչպես վարվում են որոշ քաղաքական գործիչներ»¹¹, «Կնոջը՝ օջախի պահապանին, հատուկ է հոգալ պահպանման և բազմանալու մասին, ոչ թե վատնելու և ոչնչացնելու: Կինը շահագրգռված է ընտանիքի պահպանման և բարգավաճման հարցում, կնշանակի և պետության: Նա առավել զգուշավոր է, առավել զուսպ և, ի հեճուկս արմատացած տեսակետին, առավելա-

8 ԱԺ պատգամավոր Ռուզաննա Առաքելյանի հետ գրույցից (ՀՅ Դ-աշնակցություն):
 9 Ռուզաննա Խաչատրյանի հետ հարցազրույցից (ՀԺԿ):
 10 ԱԺ պատգամավոր Ալվարդ Պետրոսյանի հրապարակային ելույթից (ՀՅ Դ-աշնակցություն):
 11 Պատգամավորի թեկնածու Ռուզաննա Խաչատրյանի կարծիքը (ՀԺԿ):

պես տղամարդկանց, իր գործողություններում առաջնորդվում է բնավ էլ ոչ զգացմունքներով, այլ՝ իրավիճակով»¹²:

Հարցվածների գնահատականներում տղամարդկանց շարժառիթներն ավելի պրագմատիկ են. տղամարդկանց թելադրում է նյութական շահագրգռությունը, առաջխաղացում ունենալու և իշխանության հասնելու ձգտումը: Բացառված չէ նաև երրորդ տարբերակը, իհարկե, ավելի քիչ տարածված, քան առաջին երկուսը. տղամարդիկ և կանայք իշխանության են ձգտում միևնույն պատճառով՝ անձնական բարեկեցության որոնումներով:

Հուշագրավ է այն հանգամանքը, թե ինչպես են համահարաբերակցվում հետազոտության ընթացքում ստացված «Ինչու են կանայք և տղամարդիկ ցանկանում պատգամավոր դառնալ» հարցի պատասխանները և հասարակության սպասումները նրանցից: Ըստ հարցվածների գնահատականների՝ տղամարդկանց մեծ մասին դրդում է հետևյալ ձգտումը. ձեռք բերել անձեռնխելիության կարգավիճակ և «տանիք» սեփական բիզնեսի համար, ստանալ պատգամավորական մանդատ՝ որպես հեղինակության հայտանշան, հասնել անձնական հաջողությունների, մտցնել օրենք ի պաշտպանություն սեփական բիզնեսի: Այսպիսի շարժառիթները կարծես սկզբից ևեք վարկաբեկում են տղամարդկանց մեծ մասին, և թերևս անհնար է որևէ եզրակացություն անել խորհրդարանի աշխատանքին նրանց մասնակցության կապակցությամբ հասարակության սպասումների մասին:

Պատկերն ուրիշ է կանանց դեպքում, որոնց, ըստ հարցվածների գնահատականների, բացի ինքնաիրացումից և սեփական դիրքորոշումը բարձրաձայնելու ցանկությունից, դրդում է պետական քաղաքականությունն ավելի բարի, մարդկային, արդար դարձնելու, քաղաքական մթնոլորտը և ընդունվող օրենքների բնույթը փոխելու, սոցիալական հարցերը լուծելու ձգտումը: Այդ գնահատականներում երևում է հասարակության՝ իրավիճակը փոխելու, առավել սոցիալական ուղղվածության օրենքներ ունենալու ցանկությունը, և այդ սպասումները կապվում են ԱԺ կանանց մուտք գործելու հետ: Այդուհանդերձ, որպես կանոն, առկա է այն վերապահումը,

12 ԱԺ պատգամավոր Գոհար Ենոքյանի կարծիքը (ԲՀԿ):

թե փոփոխությունները հնարավոր են միայն ԱԺ-ում կանանց օպտիմալ ներկայացվածության պարագայում: Հարցվածների մեծ մասի գնահատականներում «օպտիմալ» նշանակում է խորհրդարանում կանանց 25-ից մինչև 35% ներկայություն: Ինչպես բացատրեցին հարցվածները, 50/50 գույքակշիռ ներկայացուցչության հնարավորությունը չի արժարժվել դրա անիրատեսական լինելու պատճառով:

Քվոտաները որպես կանանց առաջնդման ինստիտուցիոնալ գործիք

1

Կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության 15%-անոց քվոտայի բարենպաստ ազդեցության մասին կարծիքը հաստատվեց թե՛ ֆոկլուս խմբերի անցկացման ընթացքում, թե՛ քաղաքական կուսակցությունների կանանց հետ անհատական հարցազրույցներում: Հարցվածների մեծ մասն ընդգծում էր, որ ընտրական կուսակցական ցուցակներում կանանց ընդգրկելու պահանջի օրենսդրական ամրագրման բացակայության դեպքում, ընդ որում ոչ ավելի հազվադեպ, քան յուրաքանչյուր տասներորդ տեղը, խորհրդարանի համար առաջադրվող կանանց թիվը շատ ավելի փոքր կլիներ:

Ոչ բոլոր կուսակցություններն էին պատրաստ կուսակցական ցուցակների անցողիկ տեղերը կամավոր զիջել կանանց: *«Դրական խտրականությունը՝ կուսակցական ընտրական ցուցակներում կանանց քվոտաներ ընձեռելու ճևուղի, անընդունելի միջոց է, և չարժե քաղաքականության մեջ կանանց ընդգրկմանը նպաստել անբնական մեթոդներով»:* Սա ԱԺ խոսնակ Տիգրան Թորոսյանի կարծիքն է, չնայած իշխող կոալիցիայի մաս կազմող Հանրապետական կուսակցությունը պաշտպանել է 15%-անոց քվոտայի ներդրումը:

Քվոտաները չընդունելու հիմնական պատճառը քաղաքական կամքի բացակայությունն է, քանի որ հարցվածների մեծ մասը չէր հավաստում, թե կուսակցությունները ցուցակները կազմելիս դժվարություններ էին ունենում՝ կապված կանանց թեկնածությունների հետ: Դա չի նշանակում, սակայն, որ կուսակցություններում քաղաքականապես հասուն և օրենսդրական գործունեության պատրաստ կադրերի անբավարարության հիմնախնդիրներ

չկան, այդ թվում և կանանց: Ցուցակներում ընդգրկված կանանց հետ անցկացված մի շարք հարցազրույցներ ցույց են տալիս, որ նրանց շարքում հանդիպում են նաև օրենսդրական իշխանության աշխատանքին բացարձակապես անպատրաստ անձինք: Երբեմն կուսակցական ցուցակներով առաջադրվող կանայք իրագել չեն անգամ իրենց կուսակցության նախընտրական ծրագրերին: Ավելին, հետազոտության ընթացքում հավաքված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս խոսելու այն մասին, որ որոշ կուսակցություններ անգամ 15%-անոց քվոտայի պայմաններում ցուցակների կազմման լուրջ հիմնախնդիրներ են ունեցել: Հաշվի առնելով հայրենական կուսակցությունների մեծ մասի ներսում կադրերի պատրաստման և առաջնդման գեներայնորեն զգայուն համակարգի բացակայությունը՝ այսօր արդեն կարելի է կանխատեսել, որ քվոտան բարձրացնելու դեպքում նշված հիմնախնդիրը կուսակցություններին ծանր կացության մեջ կդնի:

1

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հասարակության մեջ քվոտավորման՝ որպես օրենսդրական իշխանության մարմնում կանանց ներկայացվածության բարձրացման մեթոդի, ընկալումը շարունակում է հակասական մնալ: Քաղաքական կուսակցություններում կողմնակիցների կողքին, այդ թվում նաև կանանց շարքերում, կան նաև այդ մեթոդի մեծ թվով հակառակորդներ: *«Ինձ դուր չի գալիս, երբ կանայք շատ են խոսում այն մասին, որ իրենց շրջանցում են: Չէ՞ որ այդ դեպքում տղամարդկանց թվում է, որ իրենք իրոք կանանց հետ համեմատած ինչ-որ առավելություններ ունեն, որ կանայք երկրորդ կարգի էակներ են: Եվ տղամարդիկ պետք է մեզ՝ որպես երկրորդականների, լավություն անեն՝ թույլ տալով իրենց հետ ոտք մեկնել: Գուցե կանայք իրենք են մեղավոր, որ իրենց որպես երկրորդական են ընկալում: Գուցե հարկ է, որ ինքներս փոխվենք, ոչ թե քվոտաներ մտցնենք»¹³:* Առավել տարածված տեսակետը հանգում է այսպես կոչված «արհեստական» մեթոդները մերժելուն և այն մտավախությանը, որ քվոտաները ճանապարհի կբացեն «անարժանների» համար: Քվոտաների հակառակորդների մեջ քիչ չեն նրանք, ովքեր հիմնախնդիրն ուրիշ հարթություն են փոխադրում, մի կողմից, կանանց առաջնդման հիմնախնդիրը պայմանավորելով ժողովրդավարության հաղթանակով հասարակական կյանքի բոլոր

13 Աժ պատգամավոր Հրանուշ Հակոբյանի հետ զրույցից (ՀՀԿ):

ոլորտներում, մյուս կողմից՝ քվոտավորումը դիտելով ժողովրդավարական սկզբունքների խախտում:

Ընտրություններից առաջ և հետո անցկացված ֆոկլուս խմբերի մասնակիցների կարծիքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց մեծ մասը, առանձնապես նրանք, ովքեր կուսակցական ցուցակներում արժանացել են ոչ անցողիկ տեղերին, անհրաժեշտ են համարում քվոտաները մեծացնել: Մեծ մասը օպտիմալ տարբերակ է համարում կանանց ներկայացվածության 25%-անոց քոտան: Ընդ որում, եթե մինչև ընտրությունները խոսվում էր քվոտայի ամրագրման մասին նախընտրական ցուցակներում, ապա ընտրություններից հետո առաջին անգամ սկսեց կարծիք հայտնվել կուսակցությունների՝ քվոտան ըստ խորհրդարան մտնելու փաստի ապահովելու պարտավորության մասին: Պատճառն այն հանգամանքն էր, որ կանանց ներկայացուցչությունը խորհրդարանական խմբակցությունների մեծ մասում շատ ավելի փոքր փոքր թիվ կազմեց, քան 15%-ը:

1

Ազգային ժողովի չորրորդ գումարման (2007 թ.) զեներային կազմը

Ազգային ժողովի չորրորդ գումարման կազմում ներկայացված հինգ խմբակցություններից միայն երկուսն են ապահովել իրենց կազմում 15%-ից բարձր թվով կանանց. ՀՅ Դաշնակցության խմբակցությունում 16 պատգամավորներից երեքը կին են՝ 18,7% և «Ժառանգության» խմբակցությունում 7 պատգամավորներից երեքն են կին՝ 42,8%; «Բարգավաճ Հայաստանի» խմբակցության կազմում՝ 3 կին 25 պատգամավորների թվում (12%) և «Օրինաց երկրում»՝ 1 կին 8 պատգամավորների թվում (12%): ԱԺ ամենամեծ խմբակցության՝ Հանրապետականի կազմում ընդամենը 2 կին է 64 պատգամավորների շարքում, որը կազմում է 3,1%: Այսպիսով, ընտրությունների արդյունքում խմբակցություններում կանանց ներկայության 15%-ը կարողացել են ապահովել միայն այն կուսակցությունները, որոնք ցուցակներում կանանց ընդգրկել են առաջին անցողիկ հնգյակում: Ընդ որում կուսակցական ցուցակներով խորհրդարան մտած կանանցից հինգը անկուսակցական են:

12 պատգամավոր կանանցից չորսը՝ **Հեղինե Բիշարյանը** («Օրինաց երկիր»), **Հրանուշ Հակոբյանը** (ՀՀԿ), **Հերմինե Նաղդայանը** (ՀՀԿ), **Ալվարդ Պետրոսյանը** (ՀՅ Դաշնակցություն), առաջին անգամ չէ, որ ընտրվում են նրանցից երեքը ավելի քան երկու գումարման պատգամավոր են:

Երեք կին մինչև ընտրվելը ղեկավար պաշտոն է զբաղեցրել՝ «Գարուն» կարի արտադրական միավորման տնօրեն **Գոհար Ենոքյանը** («Բարգավաճ Հայաստան»), Զաղաքացիական ծառայության խորհրդի փոխնախագահ, անկուսակցական **Արևիկ Պետրոսյանը** («Բարգավաճ Հայաստան»), դպրոցի տնօրեն **Անահիտ Բախշյանը** («Ժառանգություն»):

Երկու կին մարդու իրավունքների պաշտպանության փորձ ունի՝ նախկին օմբուդսմեն, անկուսակցական **Լարիսա Ալավերդյանը** («Ժառանգություն») և պրոֆեսիոնալ փաստաբան, անկուսակցական **Զարուհի Փոստանջյանը** («Ժառանգություն»):

Առաջին անգամ ընտրված կանանցից երկուսը ՁԼՄ-ների նեկայացուցիչ են՝ «Երկիր-մեղիա» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր **Ռուզաննա Առաքելյանը** (ՀՅ Դաշնակցություն) և լրագրող, անկուսակցական **Նահիրա Զոհրաբյանը** («Բարգավաճ Հայաստան»):

Ազգային ժողովի չորրորդ գումարման պատգամավորների գեներալային կազմը շահեկանորեն տարբերվում է անցյալ գումարումից ոչ միայն թվաքանակով՝ 12 կին (անցյալ գումարման կազմում 7 կին էին), այլև այն հանգամանքով, որ ԱԺ ինը մշտական հանձնաժողովներից գլխավորեցին կանայք՝ ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Արևիկ Պետրոսյանը** և ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Հրանուշ Հակոբյանը**:

Գեներալային անհավասարակշռություն է ստեղծվել պաշտպանության, անվտանգության և ներքին գործերի, ֆինանսա-բյուջետային հարցերի, արտաքին հարաբերությունների հանձնաժողովներում, ինչը

համպատասխանում է սովորական կարծրատիպերին: Երկու կին ցանկություն է հայտնել աշխատելու տնտեսական հարցերի հանձնաժողովում և երկու կին՝ եվրոինտեգրացիայի հարցերի:

Կանանց ուշադրությունից դուրս է մնացել սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի հանձնաժողովը, մի բան որ հակասում է նրանց հետ կապված սոցիալական բնույթի սպասումներին: Հինգ կին ներկայացված է Հրանուշ Հակոբյանի ղեկավարած գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի հանձնաժողովում, այդ հանձնաժողովում ապահովված է գենդերային հավասարակշռության իդեալական բանաձևը՝ 50/50:

1

Միջազգային դիտորդների գնահատականը ընտրական գործընթացներին կանանց քաղաքական մասնակցության կապակցությամբ

Անցած ընտրությունների ընթացքին հետևող եվրոպական դիտորդական առաքելության գնահատականներում հատուկ ուշադրություն է հատկացվել կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդրին: Դիտորդների այդ դիրքորոշումը համադրելի է մի շարք փաստաթղթերի տրամաբանությանը, որոնք վերաբերում են տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը և ենթակա են պարտադիր կատարման այն պետություններում, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ են: Հիմնական փաստաթղթերից մեկը ԵԱՀԿ գենդերային հավասարության աջակցության գործողությունների ծրագիրն է, որը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցը դիտում է երկրների անվտանգության համատեքստում:

Դեռևս միջանկյալ գեկույցի փուլում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդները դիտորդություններ արեցին ընտրական հանձնաժողովների և ընտրողների ցուցակների գենդերային կազմի կապակցությամբ: Եվ եթե ընտրական հանձնաժողովների կազմերի ըստ սեռի տարբերակված տվյալները շուտով ներկայացվեցին դիտորդներին, ապա ինչ վերաբերում է ընտրական ցուցակների գենդերային սահմանափակումների վերաբերյալ դիտորդություններին, Ազգային ժողովի խոսնակ Տիգրան Թորոսյանը տարակուսանք հայտնեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելության

ղեկավար Բորիս Ֆրլեցին ուղղված իր նամակում՝ կապված միջանկյալ զեկույցի մի շարք դրույթների հետ:

Եվրոդիտորդների նախնական համատեղ զեկույցում ընտրական գործընթացներում կանանց ներկայացուցչության հարցին առանձին գլուխ է նվիրված, որում մտահոգություն է հայտնվում մեծամասնական ընտրատարածքներում կանանց ցածր մասնակցության, ինչպես նաև ԿԸՀ կազմում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ղեկավարների շարքում կանանց ցածր ներկայացուցչության կապակցությամբ:

Ընտրական հանձնաժողովների գեներային կազմի վերլուծությունը ցույց է տվել, որ ԿԸՀ-ի մակարդակում ընդամենը երկու կին է ներկայացվել, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում ընդգրկված կանայք 15% են կազմել, և 41 ընտրատարածքային հանձնաժողովներից միայն երեքն են կին ղեկավարել: Տեղամասային հանձնաժողովներում շատ ավելի հավասարակշռված իրավիճակ էր, հանձնաժողովների անդամների 38%-ը և նախագահների 23%-ը կանայք էին:

Եվրոպական դիտորդական առաքելությունների ներկայացուցիչները, ներկայացնելով զեկույցը, նշեցին Ընտրական օրենսգրքում մտցված 15%-անոց քվոտայի բարենպաստ ազդեցությունը, սակայն հաշվի առնելով պատգամավորական նոր կազմում ներկայացված կանանց թիվը, հանձնարարական տվեցին քվոտայի բարձրացման, ինչպես նաև կանանց առաջնորդան ուրիշ մեխանիզմների օգտագործման անհրաժեշտության վերաբերյալ: *«Չնայած այն փաստին, որ քաղաքական կամքի շնորհիվ նոր խորհրդարանում կանանց ներկայացուցչության իրավիճակը բարելավվել է, կանանց համար 15%-անոց քվոտան այնքան էլ արդյունավետ չէ, քանի որ չի հանգեցնում խորհրդարանում կանանց թվի իրական մեծացման»¹⁴:*

Գիտորդական առաքելության անդամների կարծիքով կանանց հետագա առաջնորդան հարցը կախված է մի շարք գործոններից, որոնցից նշեցին քաղաքացիական հասարակության ակտիվացումը, միջկուսակցական

14 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելության գեներային հարցերի գծով մասնագետ-վերալուծարան Կլաուդիա Վոլմերի կարծիքը:

շփումների սերտացումը և իրենց իսկ կանանց նպատակասլացությունը: ԵԽԽՎ դիտորդական առաքելության ղեկավար Լեո Պլատվոետի խոսքերով, կանանց առաջնդմանը կնպաստի նաև 100%-ով համամասնական համակարգի անցնելը, որը «*ոչ միայն ավելի ժողովրդավարական և կատարյալ է կեղծումների դեմ պայքարում, այլև հնարավորություն է տալիս պահպանելու հավասարակշռությունը տղամարդկանց և կանանց միջև՝ նպաստելով կուսակցական ծրագրերի իրականացմանը՝ ուղղված կանանց նկատմամբ խտրականության վերացմանը*»:

ԳԼՈՒԽ 2

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

2

Ինչպես սույն հետազոտությունը, անպես էլ վերջին տարիների քաղաքական իրողությունների վերլուծությունը ցույց են տալիս, որ կանանց համար դեպի քաղաքականություն և իշխանություն առավել իրական ուղին կուսակցությունների միջոցով առաջ գնալն է: Հայտնի է, որ կուսակցությունները հաջողությամբ են օգտագործում կանանց ներուժը ընտրական քարոզարշավներում, բայց արդյոք շահագրգռություն ցուցաբերո՞ւմ են իրենց ցուցակներում կանանց անցողիկ տեղերում առաջադրելու հարցում: Այդ հարցի պատասխանը գտնելու նպատակով կուսակցությունների անդամների հետ ֆոկուս խմբեր են կազմակերպվել ընտրություններից առաջ և հետո, ինչպես նաև հարցազրույցներ համամասնական ցուցակներով ՀՀ ԱԺ պատգամավորի թեկնածու առաջադրված կանանց հետ:

Քաղաքական կուսակցությունների և դրանց ղեկավար մարմինների գեներալին կազմը

Հայաստանի քաղաքական կուսակցությունները, լինելով քաղաքացիական հասարակության զարգացման հիմնարար գործոններից մեկը, պետք է

գենդերային հավասարության առաջամարտիկներ լինեն, պետք է «կուսակցության ներսում և ապարատում սեռերի հավասարակշռված ներկայացուցչության հասնելու քաղաքականություն մշակեն ու վարեն, սահմանեն այդ նպատակին հասնելու միջոցները»¹⁵, նպաստեն կանանց ակտիվացմանը քաղաքականության մեջ:

Սակայն կանանց մասնակցությունը արդի Հայաստանի քաղաքականությանը, չնայած որոշ առաջընթացին, չի հանգեցրել նոր կին լիդերների ասպարեզ գալուն, և դա այն իրողության հետևանքն է, որ կանանց ներկայացուցչությունը կուսակցական ղեկավարության մակարդակում շարունակում է ցածր մնալ: Այդ իրավիճակի պատճառները պայմանավորված են քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմիններում տղամարդկանց գերակշռությամբ: Կանանց սիրահոժար իրենց շարքերն ընդունելով՝ կուսակցությունները լայնորեն օգտագործում են նրանց ռեսուրսները կազմակերպական աշխատանքներում, մասնավորապես ընտրարշավներում, բայց և այնպես, ինչպես նշվել է վերը, շահագրգռություն և հոգատարություն չեն դրսևորում կանանց քաղաքական վերելքի հարցում, ընտրություններում չեն պաշտպանում նրանց՝ որպես թեկնածուների՝ արդարանալով կանանց շրջանում քաղաքական գիտելիքների, անհրաժեշտ քաղաքական փորձի և ունակությունների բացակայությամբ: Կուսակցական որոշումների ընդունման մակարդակում գոյություն ունեցող անհավասարակշռությունն է ցույց տալիս հետևյալ աղյուսակը:

2

¹⁵ Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերին նվիրված 4-րդ եվրոպական խորհրդաժողովում ընդունված «Տղամարդկանց և կանանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին» հռչակագրի հավելվածից (Ստամբուլ, 1997 թ., 13-14 նոյեմբերի):

Աղյուսակ 3

Կանայք քաղաքական կուսակցությունների կազմում և
ղեկավարությունում

Կուսակցության անվանումը	Կուսակցությունների անդամների թիվը	Կանանց տոկոսը կուսակցություններում	Կանայք կուսակցությունների ղեկավարությունում (%)	Կանանց տոկոսը կուսակցությունների մարզային կազմակերպությունների ղեկավարությունում
Հայաստանի հանրապետական կուսակցություն	55000 ¹⁶	30	2,8	3,3
«Օրինաց երկիր» կուսակցություն	-	68,3	30	41,5
«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն	7000	25	9,5	20
«Ժառանգություն» կուսակցություն	5340 ¹⁷	52	33/22	30
«Ազգային միաբանություն» կուսակցություն	46700 ¹⁸	32,5	15	12/28
Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն	4530 ¹⁹	30	28,6	20
Հայաստանի ժողովրդական կուսակցություն	30300 ²⁰	40	17	8
Ազգային-ժողովրդավարական կուսակցություն	3000	30	4,5	30
Միավորված աշխատանքային կուսակցություն	17000 ²¹	44/60	17,6/30	3,6

16 ՀՀ ԱԺ 2007թ. ընտրություններին մասնակցող կուսակցություններ, Եր., էջ 82:

17 Նույն տեղում, էջ 35:

18 Նույն տեղում, էջ 16:

19 Նույն տեղում, էջ 114:

20 Նույն տեղում, էջ 74:

21 Նույն տեղում, էջ 99:

Հայաստանի երիտասարդական կուսակցություն	7960 ²²	40	20	7
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	370000 ²³	40	11,4	-

Բերված տվյալները ցույց են տալիս, որ կանայք կուսակցությունների անդամների 30-ից մինչև 40%-ն են կազմում, իսկ որոշ կուսակցություններում՝ մինչև 70%-ը: Միաժամանակ ակնբախ է գեղեցիկ անհավասարակշռությունը բոլոր կուսակցությունների դեկավար մարմիններում: Ըստ ֆոկլոր խմբերի մասնակիցների. «Կանայք սև աշխատանք են կատարում, նրանք հիմնական շարժիչ ուժն են... Աշխատանքը կանայք են կատարում, բայց երևում են տղամարդիկ... Մեր հիմնախնդիրն այն է, որ կուսակցություններում որոշումների ընդունման մակարդակում կանայք սակավ են»²⁴: Այդ առումով պատահական չէ կուսակցությունների կանանց պատկերավոր համեմատությունը «քաղաքական մարտերի հետևակների» հետ:

Կուսակցությունների դեկավարները հաճախ են խոստովանում և ընդունում կանանց ունեցած ավանդը: Կանանց դերն առանձնապես ցայտուն է երևում դժվարին իրավիճակներում՝ պառակտումների կամ քաղաքական ձախողումների շրջանում: Կանայք, որպես կանոն, չեն հրաժարվում կուսակցության անդամակցությունից, եթե անգամ հեռանալը կուսակցությունից զանգվածային բնույթ է ստանում: Այս եզրակացությունը հաստատվում է այնպիսի քաղաքական կուսակցությունների օրինակով, ինչպիսիք են Ազգային-ժողովրդավարական միությունը, «Ազգային ինքնորոշում» միավորումները, «Օրինաց երկիրը», որոնց լիդերները հրապարակավ խոստովանել են, որ իրենց կուսակցությունները կարողացել են պահպանել միայն դժվարին պահին իրենց շարքերը չլքած կանանց շնորհիվ: Չնայած նվիրվածությանը և բավարար ներկայացուցչությանը քաղաքական կուսակցությունների շարքերում (միջին հաշվով անձնական կազմի 40%-ը)՝ կանայք կուսակցություններում մեծ մասամբ ցածր կարգավիճակ ունեն և թերի են ներկայացված կուսակցական որոշումների ընդունման մակարդակում:

22 Նույն տեղում, էջ 70:

23 Նույն տեղում, էջ 7:

24 Դուստրիկ Մխիթարյանի ելույթից Երևանում կայացած կրթ սեղանի ժամանակ:

կում, ինչն, անկասկած, խոսում է ներկուսակցական ժողովրդավարության ճեղքվածքի մասին:

Ընդդիմադիր կուսակցությունների լիդերներն ու ակտիվիստները հակված են տարածաշրջաններում կուսակցական բջիջների ղեկավարությունում կանանց բացակայությունը բացատրել ընդդիմության վրա տեղական ինքնակառավարման մարմինների խիստ ճնշմամբ: «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը 1200-1300 սկզբնական կազմակերպություններ ունի, որոնց ղեկավարությունում մեծ թվով կանայք կան, 53 տարածաշրջանային կազմակերպություններից 7-ը ղեկավարում են կանայք: Դա շատ մեծ թիվ է, եթե հաշվի առնենք, որ հատկապես տեղերում մասնաճյուղերի ղեկավարները տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների ճնշման տակ են գտնվում»²⁵: Այդ բացատրությունը, սակայն, չի արտացոլում կուսակցությունների ղեկավարությունում կանանց սակավությունը պայմանավորող բոլոր պատճառները և մասնավոր բնույթ ունի, քանի որ չի կարելի այն տարածել իշխող կուսակցությունների վրա:

Կուսակցությունների ղեկավար մարմիններում գենդերային անհավասարակշռությունը խոր արմատներ ումի, անմիջականորեն կապված է հասարակության գենդերային մշակույթի հետ և դրսևորվում է հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր ոլորտների որոշումների ընդունման մակարդակի անհավասարակշռությամբ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ փոփոխությունների հնարավորությունները մեծապես կախված են այն հանգամանքից, թե ինչ ակտիվությամբ են քաղաքական կուսակցությունները խրախուսում տղամարդկանց և կանանց հավասարությունը: Ավելին, քաղաքականության մեջ գենդերային անհավասարակշռության և ներկուսակցական ժողովրդավարության հիմնախնդրի միջև անմիջական կապ գոյություն ունի: Սկանդինավյան երկրներում հավասարության ձեռքբերումները հնարավոր դարձան հասարակական գիտակցության վերակառուցման ու կշռադատված պետական քաղաքականության շնորհիվ և նախաձեռնվել են հենց քաղաքական կուսակցությունների կողմից ներկուսակցական ժողովրդավարության խորացման, բուն կուսակցությունների ներսում գենդերային անհա-

25 Ռուզաննա Խաչատրյանի ելույթից Երևանում 2007 թ. մայիսի 8-ին կայացած կլոր սեղանի ժամանակ:

վասարակշռությունը հաղթահարելու, կանանց պահանջները կուսակցական ծրագրերում ընդգրկելու միջոցով: Այդ մոտեցումները դարձել են կուսակցական պաշտոնական քաղաքականության անկաքտելի հայտանշանները: Ինչպես ցույց է տալիս փորձը, Հայաստանի քաղաքական կուսակցությունները դրան պատրաստ չեն, ավելին, հաճախ պատրաստ չեն իրենք՝ քաղաքական կուսակցությունների անդամ կանայք:

Իրենց կուսակցություններում գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու անհրաժեշտությունը իրենց իսկ կանանց կողմից բավական դանդաղ է գիտակցվում: Դա տեղի է ունենում սեմինարներում նրանց քաղաքական գիտելիքների բարձրացման միջոցով, ինչպես նաև հասարակական սեկտորի կանանց հետ կապերի և եվրոպական երկրների գործընկերների հետ շփումների շնորհիվ: Օրինակ՝ վերջին 2-3 տարիներին կանանց դիրքորոշման փոփոխություններն այդ հարցում առավել ցայտուն արտահայտվեցին ՀՅ Դաշնակցությունում՝ Սոցիալիստների կանանց կազմակերպության հետ հաստատված ակտիվ կապերի արդյունքում և Հայաստանի Ժողովրդական կուսակցությունում՝ Շվեդիայի Չախ ֆեմինիստական կուսակցության հետ կապերի շնորհիվ: Այդ կապերի արդյունքում կանանց շրջանում նկատելիորեն բարձրանում է ինքնագնահատումը, նրանք առավել զգայուն են դառնում գենդերային հիմնախնդիրների նկատմամբ, սկսում են գիտակցել ներկուսակցական խտրականությունը, ոմանք հանդես են գալիս կուսակցության ղեկավար մարմնում կանանց առաջ մղելու համար քվոտաներ ներդնելու առաջարկություններով:

Իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքական կուսակցություններում կանանց դերը բարձրացնելուն ուղղված ծրագրերը հանրապետությունում բավարար չափով չեն իրականացվում: Կանայք կուսակցություններում շատ ավելի հետևողական և տևական աջակցության կարիք ունեն, քան դա իրականացվում է կանանց լիդերության դպրոցների միջոցով, որոնք կազմակերպվում են առանձին կանանց կազմակերպությունների ուժերով կամ նախաձեռնվում են մի շարք միջազգային հիմնադրամների կողմից: Օրինակ՝ ընտրություններից մի տարի առաջ Ժողովրդավարության ազգային ինստիտուտի (NDI) աջակցությամբ ստեղծված «Կին լիդեր» ֆորումը՝ կոչված միավորելու քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, կառավարության կառույցները և գործարար աշխարհը

ներկայացնող կանանց, ըստ էության չլուծեց իր առջև դրված խնդիրը, ավելին, չկարողացավ դույզն-ինչ հեղինակություն ձեռք բերել հասարակության աչքում: Ֆորումի առաջարկությունը, այն է՝ կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտաները բարձրացնել մինչև 25%, ուշացած էր և քննարկման չարժանացավ թե՛ քաղաքական կուսակցություններում, թե՛ երկրի խորհրդարանում, քանի որ այդ ժամանակ Ընտրական օրենսգրքում արված փոփոխություններն արդեն ընդունվել էին: Բացի դրանից, Ֆորումն, ըստ էության, կրկնում էր քաղաքական կուսակցությունների կանանց և հասարակական կազմակերպությունների ավելի վաղ արած նախաձեռնությունը, որը Ազգային ժողովում քննարկվելուց հետո օրենսդրորեն ամրագրվեց 15%-անոց քվոտան: Այդ փաստը վկայում է, որ Ֆորումը որոշ չափով կտրված էր քաղաքական դաշտում և հասարակական սեկտորում տեղի ունեցող գործընթացներից: Մինչդեռ NDI-ի՝ կանանց ակտիվացման միջոցով կուսակցությունների հզորացման և ներկուսակցական ժողովրդավարության բարձրացման հայտնի փորձն անկասկած կարող էր օգտակար լինել Հայաստանում:

Ընդհանուր առմամբ հիմնախնդիրն այն է, որ Հայաստանում ներկայացված միջազգային կազմակերպությունները և ծրագրերը, որոնց առաջնահերթությունների մեջ է մտնում կանանց քաղաքական մասնակցության բարձրացմանը աջակցելը, բավականաչափ կորդինացված և հետևողականորեն չեն գործում, միշտ չէ, որ հաշվի են առնում համանման ծրագրերի իրականացման ընթացքում ստացված արդյունքները: Հետևանքն այն է, որ կանանց քաղաքական մասնակցությանն ուղղված ռեսուրսներն իրենց նպատակին չեն ծառայում: Իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ եզակի նախաձեռնություններով ու գործողություններով հիմնախնդիրը չի լուծվի, արդյունքի ակնկալություն կարելի է ունենալ միայն քաղաքացիական հասարակության բոլոր ինստիտուտների՝ քաղաքական կուսակցությունների, կանանց հասարակական սեկտորի և ՉԼՄ-ների համալիր գործողությունների պարագայում: Այդ առումով հատկանշական է Հայաստանում վերջին երեք տարիներին իրականացվող ՄԱԶԾ-ի «Գեներեր և քաղաքականություն» ծրագիրը, որով չհաջողվեց շոշափելի տեղաշարժերի հասնել որոշումների ընդունման մակարդակում կանանց ներակացուցչության հարցում:

Կուսակցական ծրագրերի գեներային վերլուծությունը

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության, Հայաստանի ժողովրդական կուսակցության, Ազգային ժողովրդավարական կուսակցության, «Նոր ժամանակներ», «Բարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր», «Ազգային միաբանություն», «Ժառանգություն», ՄԻԱԿ, «Դաշինք», ՀՅ դաշնակցություն կուսակցությունների ծրագրերի վերլուծությունը²⁶ ցույց է տալիս, որ դրանցում հիմնականում տեղ է գտել մոր և մանկան խնամքը, ընդգծվում է կանանց վերարտադրողական դերը, կետեր կան աշխատող մայրերի արտոնությունների մասին: Կուսակցությունների ծրագրերի մեծ մասում կանանց դերը սահմանափակվում է ընտանիքով, ընդգծվում է կանանց և տղամարդկանց ֆիզիոլոգիական տարբերությունը (մասնավորապես վերարտադրողական գործառույթը) և շեշտվում է, որ սոցիալական քաղաքականությունը պետք է համապատասխանի այդ տարբերությանը: Ընտանիքի ամրապնդման, մայրության և մանկության պահպանության, կանանց իրավունքների պաշտպանության, նրանց աշխատանքային պայմանների և կենցաղի բարելավման վերաբերյալ դրույթներն ընդգրկվել են նաև **Ազգային-ժողովրդավարական կուսակցության**, **«Ազգային միաբանություն»**, **«Ժառանգություն»**, **«Օրինաց երկիր»** և մի քանի ուրիշ կուսակցությունների նախընտրական ծրագրերում:

Որոշ կուսակցությունների նախընտրական ծրագրերում տեղ են գտել արդի հայ հասարակության գեներային հիմնախնդիրները: Այսպես, **Ազգային-ժողովրդավարական կուսակցության** ծրագրում, որպես մտահոգություն հարուցող հիմնախնդիրներ, նշված են ծնելիության կրճատումը, բնակչության արագ ծերացումը, ամուսնական տարիքի կանանց և տղամարդկանց թվաքանակի խզումը: Ուշագրավ կետ կա կրթական համակարգի բարեփոխման և դաստիարակության վերաբերյալ՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ աճում է «մեկ ծնող ունեցող» երեխաների տոկոսը²⁷: **«Բարգավաճ Հայաստան»** կուսակցության ծրագրում առաջնահերթ խնդորների շարքում դրույթ կա կա-

26 Ուսումնասիրվել են կուսակցությունների նախընտրական ծրագրերը՝ հավաքված ընտրությունների շրջանում, ինչպես նաև ծրագրերն ու կանոնադրությունները՝ տեղադրված հետևյալ կայքերում. www.ajk.am, www.amiab.am, www.bhk.am, www.heritage.am, www.ppa.am, www.hhk.am, www.ulp.am, www.dashink.am .

27 Ազգային-ժողովրդավարական կուսակցության ծրագիր; Երևան, 2007, էջ 8:

նանց, երիտասարդության և հաշմանդամների մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման մասին²⁸:

Հայաստանի հանրապետական կուսակցության 2007 թվականի նախընտրական ծրագրում որոշ փոփոխություններ են կատարվել, բացակայում է մայրության և մանկության պահպանությանը վերաբերող դրույթը: Հնարավոր բացատրությունների թվում 2004 թվականի Աշխատանքային օրենսգրքի ընդունումն է, որի մշակման գործում կուսակցությունն ամենաանմիջական մասնակցություն է ունեցել: Հնարավոր է, որ այդ օրենսգրքում մի շարք դրույթներ ընդգրկելով մայրության և մանկության պահպանության վերաբերյալ՝ կուսակցությունն իր առաքելությունն ավարտված է համարում:

Վերը նշված ծրագրերից որոշ չափով առանձնանում է Հայ հեղափոխական դաշնակցության ծրագիրը: ՀՀԳ նախընտրական ծրագրում առանձին բաժին գոյություն ունի՝ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը», որում խոսվում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ձեռքբերման, սեռի հատկանիշով խտրականության վերացման օրենսդրական երաշխիքների մասին, ինչը դիտվում է երկրում կայունություն և ներդաշնակություն հաստատելու գործոն: Իրավահավասարության ապահովմանը կոչված այլևայլ միջոցների շարքում անհրաժեշտ են համարվում՝

- աշխատանքի շուկայում կանանց մրցունակության բարձրացման և ընտանեկան պարտականությունների համատեղման մեխանիզմների ստեղծմանը նվիրված ծրագրերի ներդրումը,
- քվոտավորման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը կանանց քաղաքական իրավունքների իրականացման համար,
- հասարակության մեջ կանանց դերի բարձրացման ծրագրերի ընդունման և իրականացման և քաղաքացիական հասարակության՝ սեռերի իրավահավասարության ապահովմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությունը²⁹:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանանց և տղամարդ-

28 «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագիր: Երևան, 2007, էջ 41:

29 ՀՀԳ ծրագիր: Երևան, 2007, էջ 17-18:

կանց փաստական հավասարությունը կուսակցությունների նախընտրական ծրագրերում նախատեսվում է տնտեսական և սոցիալական ոլորտներում: Այդ ծրագրերում, որպես կանոն, չկան դրույթներ՝ նպատակատղոված կանանց քաղաքական մասնակցության զարգացմանը և կանանց առաջնորդմանը դեպի իշխանության բաժրագույն պաշտոններ: Կուսակցությունները, հազվադեպ բացառություններով, իշխանության մեջ գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու նպատակներ չեն հետապնդում:

Կուսակցությունների դերը առաջխաղացման համար պահուստային կադրերի պատրաստման գործում

Կուսակցությունների հաջող գործունեությունը պայմանավորված է ոչ այնքան կադրային ռեսուրսների քանակով, որքան որակով, հետևաբար կուսակցությունները պետք է պահուստային կադրերի պատրաստման յուրօրինակ «քաղաքական դարբնոց» դառնան՝ իշխանության գալու դեպքում դրանց հետագա առաջխաղացման համար:

Հետազոտությանը բացահայտվեց, որ կուսակցությունների մեծ մասը կադրերի «քաղաքական դարբնոցի» գործառույթներ չի կատարում: Մոսկ փոքրաթիվ կուսակցություններ, օրինակ՝ **Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Հայ հեղափոխական դաշակցությունը, Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, «Օրինաց երկիր» կուսակցությունը** կազմակերպում են իրենց ակտիվի ուսուցումը: Կուսակցություններում ուսուցման համակարգը, որպես կանոն, գենդերայնորեն չեզոք բնույթ ունի և նպատակ չունի ակտիվացնել և բարձրացնել կանանց դերը կուսակցություններում: Որևէ կուսակցությունում կադրերի պատրաստման գենդերայնորեն զգայուն համակարգ գոյություն չունի, որը հատուկ ուսուցման ծրագրերի միջոցով, տարածաշրջանային կազմակերպությունների և կենտրոնի ղեկավարությունում ներկայացուցչության միջոցով նպաստեր կին կադրերի աճին: Թեև որոշ կուսակցություններ պարբերաբար ուսուցման ծրագրեր են իրականացնում գենդերային թեմաներով (**Հայաստանի ժողովրդական կուսակցություն**)՝ ներգրավելով արտասահմանյան փորձագետների, դրանք այնուամենայնիվ սպասված արդյունքներ չեն տալիս, քանի որ, նախ, հաճախ հարմարեցված չեն հայ հասարակության գենդերային հիմնախնդիրներին, անցկացվում են

առանց հաշվի առնելու մենթալային առանձնահատկությունները, երկրորդ՝ դիպվածային բնույթ ունեն: Վերջին ժամանակներս շատ կուսակցություններում նկատվում է կին պահուստային կադրերի համակարգված պատրաստման և նրանց առաջնորդման նպատակաուղղված աշխատանքի անհրաժեշտության ըմբռնումը: Այդ է վկայում շատ կուսակցությունների դեկավարների՝ կին կուսակցականներին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Կանանց լիդերության դպրոցում սովորողների, կանանց ՀԿ-ների կողմից կազմակերպվող սեմինարների մասնակիցների շարքում ընդգրկելու պատրաստակամությունը: Վերջին ժամանակներս որոշ կուսակցություններ իրենք են սկսել գենդերային թեմաներով սեմինարներ կազմակերպել:

Այսպես, ՀՅԳ կուսակցությունը բազմիցս գենդերային թեմաներով սեմինարներ է անցկացրել Սոցիոտերմի փորձագետների մասնակցությամբ, պատրաստել են դասավանդողներ, որոնք հետագայում ինքնուրույն սեմինարներ են վարել հանրապետության տարբեր տարածաշրջաններում: Այդ սեմինարների շնորհիվ, ինչպես նշում են կանայք, ոչ միայն բարձրանում է իրենց իրազեկությունը, այլև հաղթահարվում են քաղաքական առաջխաղացման ճանապարհին ընկած հոգեբանական արգելքները: Այդուհանդերձ, ԱԺ փոխխոսնակ, Հայ հեղափոխական դաշնակցության բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանի կարծիքով, որ խոստովանում է, թե իրոք կանանց թիվը կուսակցության շարքերում և մանավանդ դեկավարության մեջ մեծ չէ, «մենք չպետք է ընկնենք *ծայրահեղության մեջ, քանի որ տարբեր տիպի գենդերային և ֆեմինիստա-սուֆրաժիստական ծրագրերն ու շարժումները Հայաստանի պայմաններում օգուտ չեն կարող բերել: Քաղաքական ուժերն այնպես պետք է զարգացնեն քաղաքական ոլորտը, որ կանայք չամաչեն և չխուսափեն իրենց իրավունքների համար պայքարելուց: Այդ ասպարեզը մենք պետք է նրանց առջև բացենք...*»³⁰: Այդ դիրքորոշումը բավական տարածված է քաղաքական շրջանակներում և հաճախ հնչում է իրենց իսկ կանանց շուրթերից, որոնք կարծում են, թե գենդերային հավասարության գաղափարները առաջ մղելու փորձերը հասարակության և իշխանության անբավարար ժողովրդավարացման պայմաններում իմաստ չունեն:

30 «Երկիր» թերթի ընթերցողների պատասխաններից (2007, 28 մարտի-4 ապրիլի):

Քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդները

Հետևելով արևմտյան փորձին՝ Հայաստանում «Օրինաց երկիր», «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները, **Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը** և այլք ստեղծել են կանանց ճյուղեր, որոնք մեծ մասամբ կոչվում են կանանց խորհուրդներ կամ կանանց միություններ:

Բավական ակտիվ աշխատող կանանց խորհուրդներ ունեն **Հայաստանի հանրապետական կուսակցությունը** (նախագահ՝ Հերմինե Նաղդալյան) և «Օրինաց երկիր» կուսակցությունը (ղեկավար՝ Մարգարիտա Պետրոսյան): Կանանց խորհուրդների աշխատանքի բովանդակությունը և ծրագրերը արտացոլում են կուսակցության գաղափարական ուղղվածությունը: Այսպես, պահպանողական Հայաստանի հանրապետական կուսակցության Կանանց խորհուրդը, որ հիմնադրվել է 2001 թվականին, իր առջև հետևյալ խնդիրներն է դնում³¹.

- կուսակցության ծրագրի առաջնորդում ու քարոզչություն,
- ազգային և հայրենասիրական գաղափարների քարոզչություն,
- կանանց տարբեր հիմնախնդիրների, ինչպես նաև մայրության, մանկության, ընտանիքի պահպանության հետ կապված հիմնախնդիրների առաջադրում և լուծում՝ հանուն Հայրենիքի և Ազգի բարօրության,
- ժողովրդավարական քաղաքացիական հասարակության ձևավորման օժանդակություն:

Տվյալ կուսակցության Կանանց խորհրդի կազմում գործում են նաև կազմակերպչական, գաղափարա-քարոզչական և սոցիալական, ինչպես նաև մշակութային, կրթական, առողջապահության, կանանց ձեռներեցության, **հասարակությունում կանանց դերի բարձրացման** հարցերի կոմիտեներ:

«Օրինաց երկիր» կուսակցության Կանանց միությունը, որ գործում է ավելի քան 10 տարի, գործողությունների առավել ազատական ծրագիր ունի³².

- կանանց առաջադրում իշխանության պետական մարմիններում և նրանց մտավոր, գիտական և կազմակերպչական ներուժի օգտագործման բարձրացում,

31 www.hhk.am

32 www.ock.am

- պահանջատեր լինել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի նպատակների հռչակագրի և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած ուրիշ միջազգային փաստաթղթերի կապակցությամբ ստանձնած պարտավորությունների կատարման հարցում,
- ուշադրության կենտրոնում պահել կանանց կրթության, առողջապահության, իրավական և սոցիալական պաշտպանության հիմնախնդիրները՝ դրա համար ստեղծելով գործող համակարգեր, ինստիտուցիոնալ մեխանիզմներ,
- ՁԼՄ-ների, ՀԿ-ների և միջազգային կառույցների հետ ակտիվ համագործակցության միջոցով հասարակական գիտակցությունից արմատախիլ անել կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերը, որոնք հարիր չեն ժողովրդավարական հասարակությանը,
- օժանդակել Հայաստանում օրենքի իշխանության և կանանց ու տղամարդկանց իրական իրավահավասարության հաստատմանը:

Կանանց միությունն իր գոյության ընթացքում կազմակերպել է կլոր սեղաններ, սեմինարներ, քննարկումներ, անցկացրել է 5 համաժողով:

Կանանց խորհուրդները կանանց լիդերության զարգացման աշխատանք են տանում, կապեր են ստեղծում կանանց ՀԿ-ների հետ, աշխատում են բնակչության հետ, ծավալում բարեգործական գործունեություն: Կանանց խորհուրդների ուժերով կազմակերպչական և սոցիալական բնույթի հսկայածավալ աշխատանք է կատարվում: Ընտրարշավների ժամանակ կուսակցությունները լայնորեն օգտագործում են կանանց խորհուրդների ներուժը: 2007 թվականի ընտրությունները բացառություն չէին, այդ շրջանում հատկապես ակտիվացավ կանանց խորհուրդների և դրանց ճյուղերի աշխատանքը: Նրանք իրենց կուսակցությունների քարոզչության ահռելի աշխատանք կատարեցին, ներառյալ այնպիսի աշխատատար գործընթացը, ինչպիսին է «տնից տուն գնալը»: Շատ կուսակցությունների ղեկավարների կարծիքով, կան աշխատանքներ, որոնք վայել չեն տղամարդկանց, բայց որոնք շատ լավ են անում կանայք, մասնավորապես նախընտրական շրջանում, դրանց թվում է «տնից տուն գնալը» կուսակցության օգտին քարոզչության նպատակով: Այդ կարծիքի հիման վրա կարելի է խոսել կուսակցական աշխատանքում հստակ արտահայտված «գենդերային խտրազատման» մասին:

2

Հայաստանում, որտեղ ֆեմինիստական շարժման ավանդույթներ չկան, կանանց խորհուրդներն արդյունավետ միջոց չեն կուսակցության «կանանց օրակարգի» հաստատման նպատակով ներկուսակցական ճնշման համար: Դրանով կարելի բացատրել այն իրողությունը, որ կուսակցությունների, մասնավորապես կանանց խորհուրդներ ունեցող Հայաստանի հանարպետական կուսակցության և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցությունների գեներալային կազմը չափազանց հեռու է ցանկալիից: Մինչդեռ կանանց խորհուրդներ չունեցող «Ժառանգության», Հայաստանի դեմոկրատական կուսակցության, Միավորված աշխատանքային կուսակցության, Միացյալ ազատական ազգային կուսակցության ցուցակներում առաջին տասնյակում երեքական կին է առաջադրվել:

Կանայք միշտ չէ, որ գիտակցում են ներկուսակցական խտրական գործելակերպը, սա է վկայում ՀՀԿ-ի ակտիվիստուհու կարծիքը. **«Մենք գոհ ենք մեր դրությունից կուսակցությունում... ԱՇ ընտրություններում կանանց թվաքանակը կմեծանա: Վերաբերմունքը աստիճանաբար փոխվում է: Բայց մեր կուսակցությունն ավելի շատ տղամարդկային կուսակցություն է»³³:**

Կանանց խորհուրդները շատ մեծ ռեսուրս ունեն, նրանք կարող են ներկուսակցական ճնշման արդյունավետ միջոց լինել և լավագույն հարթակ՝ ներկուսակցական որոշումների ընդունման մակարդակում և իշխանության բոլոր ճյուղերում կանանց առաջ մղելու համար, սակայն կարևոր է, որ կանայք կուսակցություններում գիտակցեն դա: Այլապես, դատելով կուսակցություններում կանանց ճյուղերի վրա դրվող գործառույթներից, կանանց խորհուրդների շրջանակներով սահմանափակելու միջոցով կանանց ակտիվության չեզոքացման իրական վտանգ գոյություն ունի:

Կուսակցական ցուցակների կազմման մեխանիզմները

Հայաստանում խորհրդարանական ընտրություններն անցկացվել են համամասնական և մեծամասնական համակարգերով 1995, 1999, 2003 թվականներին: Այդ տարիներին առաջադրվող թեկնածուների թիվը կրկնապատկ-

33 Կլոր սեղանի ընթացքում ունեցած ելույթից:

վել է, սակայն խորհրդարանական ընտրություններում կանանց թվի մեծացման շարժընթացը համամասնական համակարգով աննշան է՝ 13,9%-ից 1995 թ. մինչև 14,1% 2003 թ., ինչը վկայում է, որ կուսակցական ցուցակներում պահպանվում է գենդերային անհավասարակշռությունը:

2007 թվականի համամասնական համակարգի ցուցակներում կանանց թիվը մեծացել է և կազմել 22,6%, նրանց թիվը մեծացել է նաև անցողիկ տեղերում: Դրական շարժընթացն այդ հարցում կարելի է հիմնավորել մի շարք գործոններով, որոնցից հիմնականներն են կուսակցական ցուցակների 15%-անոց քվոտայի ընդունումը և իրենց իսկ կանանց հարաճուն քաղաքական ակտիվությունը:

Ընտրություններում քաղաքական կուսակցությունների ցուցակների կազմման մեխանիզմների ուսումնասիրությունը վեր է հանում շատ կուսակցությունների ներկուսակցական ժողովրդավարության ճեղքվածքը: Ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ կուսակցությունների շարքային անդամները և անգամ ցուցակներում ընդգրկված թեկնածուները միշտ չէ, որ հստակ պատկերացում են ունենում ցուցակների կազմման սկզբունքների մասին: Հաճախ կուսակցությունների անդամներին արդեն իսկ կազմված ցուցակների մասին «իրազեկում են» նիստի կամ համագումարի ժամանակ: Շարքային անդամները, որպես կանոն, ընտրական ցուցակների կազմմանը չեն մասնակցում: Ուսումնասիրությունը մարզերում (Շիրակի, Լոռու, Արարատի, Սյունիքի) ցույց է տվել, որ տեղերում կուսկառույցների ղեկավարների իրազեկությունը զգալիորեն ավելի ցածր է, քան Երևանում: Այդուհանդերձ ցուցակների ժողովրդավարական ճանապարհով կազմման առանձին դեպքեր կան: Օրինակ՝ Ազգային-ժողովրդավարական կուսակցությունում նախընտրական կուսակցական ցուցակը ձևավորվել է վարկանշային քվեարկության ճանապարհով:

Կուսակցական ցուցակներում կանանց ընդգրկելու հարցում վճռական դեր են խաղացել քվոտաները, և միայն առանձին դեպքերում կարելի է խոսել ներկուսակցական ժողովրդավարության վրա հիմնված գործընթացների մասին: Թեև կուսակցությունների քաղաքականության մեջ դրական շարժընթաց է նկատվել, գենդերային հավասարակշռության և ժողովրդավարության ու մարդու իրավունքների կապի գիտակցումը դեռևս թույլ է:

Այսպես, Հայ հեղափոխական դաշնակցության քաղաքականությունը միշտ գենդերայնորեն չեզոք է եղել, պահպանողական թեքումով: Սակայն 2002 թվականից՝ Սոցիստերն մտնելու բանակցություններն սկսելու պահից, կուսակցությունը ձեռնամուխ եղավ «գենդերայնորեն զգայուն տարրեր» ներդնելուն իր քաղականության մեջ, իսկ կուսակցության լիդերները հրապարակային ելույթներում սկսեցին ասել, որ իշխանության մեջ կանանց թերնրկայացվածությունը բացասաբար է անդրադառնում երկրի միջազգային հեղինակության վրա: 2007 թվականի նախընտրական քարոզարշավից առաջ կուսակցությունը հասարակության գենդերային հիմնախնդիրների քննարկման միջոցառումներ կազմակերպեց: Կուսակցության կին թեկնածուները հարցազրույցներում ընդգծում էին, որ քվոտան դեր չի խաղացել, և ցուցակները կազմելիս կիրառվել են այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են «անցած ուղին, կենսագրությունը, մտավոր կարողությունները, մարդկային որակները»³⁴: Սակայն հարկ է նշել, որ քվոտայի բացակայության պայմաններում և մինչև կուսակցության Սոցիստերն ընդունվելը 1999 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ կանայք կուսակցության նախընտրական ցուցակում կազմում էին ընդամենը 5,7%: Կանանց ներկայացվածությունը կուսակցական ցուցակում մեծացավ միայն 2003 թվականին, երբ բանակցություններ էին վարվում Սոցիստերն ընդունվելու հարցի շուրջ, և կազմեց 25%, իսկ 2007 թվականին՝ 25,6%: Չորրորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված է երեք կին՝ **Ալվարդ Պետրոսյանը** (4-րդը ցուցակում), **Ռուզաննա Առաքելյանը** (11-րդը) և **Լիլիթ Գալստյանը** (22-րդը):

Ուշագրավ է, որ չնայած քվոտաների դրական ազդեցությանը, կուսակցություններում շատ կանայք, դրանց մեջ ինչ-որ նվաստացնող բան տեսնելով, բացասաբար են վերաբերվում: Բացի դրանից, չեն թաքցնում այն մտավախությունը, որ քվոտաներով կարող են իշխանության գալ «հայտնի չէ, թե ինչ կանայք»³⁵: Միավորված աշխատանքային կուսակցությունում քվոտան համարում են խտրականության դրսևորում: Հաճախ մի տեսակ «վայելույ» է համարվում ժխտել, որ ցուցակներում կանանց ընդգրկելու հարցում քվոտաները վճռական դեր են խաղացել: Այսպես, Ազգային-ժողովրդավարական կուսակցության ներկայացուցիչ Գուստրիկ Մխիթարյանի կարծիքով, ցու-

34 Ռուզաննա Առաքելյանի հետ հարցազրույցից (ՀՅԳ):
35 Ռուզաննա Խաչատրյանի հետ հարցազրույցից (ՀՄԿ):

ցակները կազմվել են առանց քվոտաները հաշվի առնելու, և կուսակցությունում կողմնորոշվել են թեկնածուի մտավոր պաշարով, ներուժով ու բարոյական որակներով³⁶: Լյուդմիլա Սարգսյանը՝ Հնչակյան կուսակցության նախագահը՝ միակ կին կուսակցության ղեկավարը անցած ընտրություններում, նշեց, որ իրենց ցուցակները կազմվել են առանց քվոտաները հաշվի առնելու³⁷: Այն մասին, որ ցուցակը կազմվել է ըստ անդամների անձնական ավանդի և ակտիվության, խոսում էին նաև ուրիշ կուսակցությունների ներկայացուցիչներ, օրինակ՝ Միավորված աշխատանքային կուսակցության, որի ցուցակում կանայք 20,7% են, իսկ առաջին տասնյակում 3 կին կա, «Օրինաց երկիր» կուսակցության, որի ցուցակում կանայք 22,5% են կազմում, իսկ առաջին տասնյակում ընդամենը մեկ կին է ներկայացված՝ Հեղինե Բիշարյանը, և այլն:

Հարցվածների շրջանում հիմնականում գերիշխում է այն կարծիքը, որ քվոտան՝ որպես ժամանակավոր միջոց, անհրաժեշտ է: Ընդ որում քվոտան առանձնապես անհրաժեշտ է «հաջողակ» կուսակցությունների կանանց: Այն փաստը, որ կուսակցական ցուցակները կազմելիս հենց քվոտան է նպաստել «կանանց ընդգրկմանը», հաստատեցին Հայաստանի հանրապետական կուսակցության և «Բարգավաճ Հայաստանի» կին ներկայացուցիչները, այն կուսակցությունների, որոնք, ինչպես հայտնի է, ի սկզբանե ընտրություններում հաղթելու ամենամեծ շանսերն ունեին: Բնութագրական է «Օրինաց երկիր» կուսակցության կին ներկայացուցչի կարծիքը. «Հայ տղամարդը դժվարությամբ կզիջի իր տեղը կանանց (նկատի ունի ղեկավարի տեղը): Նա շատ կհարգի կնոջը, լավ կվերաբերվի նրան, բայց եթե խոսք լինի քաղաքականության կամ բարձր պաշտոնների մասին, չի զիջի իր տեղը: 15%-ը շատ քիչ է քվոտայի համար, որովհետև լինելով փոքրամասնություն՝ մենք չենք կարող որևէ հարց որոշել »:

Պարադոքս է, բայց փաստ. շատ ընդդիմադիր կուսակցություններ, որոնք քննադատում են իշխանությանը ժողովրդավարության ճեղքվածքի համար, իրենք էլ ժողովրդավարության օրինակ չեն: Պատահում է, որ կուսակցությունների կանայք նախընտրական ցուցակում իրենց ընդգրկվելու կամ

36 Այդ կուսակցության ցուցակում կանայք կազմել են 32%, առաջին տասնյակում երկու կին է եղել՝ Հրանուշ Խառատրյանը (2-րդ տեղը) և Դուստրիկ Մխիթարյանը (5-րդ տեղը):

37 Ցուցակում կանայք կազմել են 33%, երկուսը՝ առաջին տասնյակում (1-ին և 10-րդ տեղերը):

չընդգրկվելու մասին իմանում են միայն կուսակցության խորհրդի նիստի ժամանակ³⁸: Սա ուղղակի ներկուսակցական ժողովրդավարության խախտման դրսևորում է:

Ինչպես հայտնի է, կուսակցական ցուցակներում հաճախ են հայտնվում կանայք, որոնք կուսակցական ֆունկցիոներներ չեն և անգամ առանձնապես ակտիվություն չեն ցուցաբերում կուսակցության գործունեության մեջ, բայց փոխարենը որոշակի բարձր կարգավիճակ ունեն հասարակությունում, օրինակ՝ գիտական աստիճան, պաշտոն, ճանաչում: Նման դեպքերում կուսակցության ակտիվիստուհիները՝ անմնացորդ նվիրված իրենց կուսակցությանը և երկար տարիներ «բեռնաձիու» դեր ստանձնած, իրենց խաբված են համարում և կուսակցության ղեկավարության դիրքորոշումը գնահատում ոչ ժողովրդավարական և անարդար³⁹: Միաժամանակ մարզերում որոշ կանայք, որոնք ընդգրկվել են ցուցակներում, թեկուզ ոչ անցողիկ տեղերում, այդ փաստը դիտում էին խրախույս, գրեթե «ճակատագրի շնորհ» և չափազանց երախտապարտ էին կուսակցությանը, որ իրենց չի մոռացել⁴⁰:

Ուշագրավ է, որ կուսակցություններում կանայք ցուցակում տեղ զբաղեցնելու համար մրցում էին միմյանց հետ⁴¹, ոչ թե տղամարդկանց: Այսինքն՝ հավակնությունները ցուցակի տեղի համար ներկայացվում են ոչ թե մեծամասնություն կազմող տղամարդկանց, այլ 15%-ի քվոտայի սահմաններում մյուս կանանց, որոնք ցուցակի տեղի համար հավակնում են: Որոշ չափով կարելի է խոսել այն մասին, որ այդ կուսակցություններում կանայք իրենց լուսանցքից դուրս են զգում, դրանով է պայմանավորված սովորական մրցակցության վիճակը մարզինալ խմբում, ոչ թե դրանից դուրս: Սա այն իրողության հետևանքն է, որ խորհրդարանի պատգամավորի թեկնածուների առաջադրման համակարգը սեքսիստական բնույթ ունի, թեպետ ոչ բոլոր կանայք են կուսակցություններում գիտակցում և ընդունում դա:

38 Ինեսաս Աղամյանի հետ հարցազրույցից («Ազգային միաբանություն» կուսակցության ցուցակում 10-րդը և 1-ինը կանանց թվում):

39 X-ի հետ զրույցից:

40 Հասմիկ Հակոբյանի հետ հարցազրույցից («Ազգային միաբանություն» կուսակցության ցուցակում 61-րդը), Վանաձոր:

41 Զարուհի Հովհաննիսյանի հետ հարցազրույցից (18-րդը Հայաստանի ժողովրդական կուսակցության ցուցակում, 3-րդը՝ կանանց շարքում), Հասմիկ Հակոբյանի հետ հարցազրույցից (61-րդը «Ազգային միաբանություն» կուսակցության ցուցակում):

ԳԼՈՒԽ 3

ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակական կազմակերպությունները՝ որպես կանանց քաղաքական սոցիալականացման ինստիտուտ

Քաղաքացիական հասարակության կառուցվածքում հասարակական կազմակերպությունները, այդ թվում և կանանց ՀԿ-ները, կոչված են աջակցելու ժողովրդավարական գործընթացների զարգացմանը և քաղաքացիական հասարակության կայացմանը: Վերջին 15 տարիներին էական փոփոխություններ են տեղի ունեցել երկրի կին բնակչության իրավագիտակցության մեջ, որոնք նպաստել են նրանց սոցիալական ինքնակազմակերպմանը, սկիզբ դրել քաղաքացիների կամավոր միավորումներին և կանանց անկախ կազմակերպությունների՝ որպես հասարակության քաղաքական կառուցվածքի նոր տիպի, ձևավորմանը:

Վերջին 15 տարիներին ձևավորվել են նոր տիպի կանանց կազմակերպություններ, որոնք ձգտում են ակտիվ մասնակցության քաղաքական վերափո-

3

խումների գործընթացներին: Այնպիսի գործոնների ազդեցության տակ, ինչպիսիք էին 1988 թվականի Սպիտակի երկրաշարժը և դարաբաղյան հակամարտությունը, քաղաքական վերափոխումների գործընթացները և ծանր սոցիալ-տնտեսական պայմանները, ձևավորվեցին քաղաքական նախապատվություններ, սոցիալական դիրքորոշումներ և կանանց մոտիվացիա, որոնք գործնականում իրացվում էին քաղաքական և քաղաքացիական մասնակցության տրամադրվածությամբ: Անցումը մարդասիրական ուղղվածությունից նոր ժողովրդավարական արժեքների յուրացմանը և քաղաքական գործընթացներում կանանց ներգրավմանը պայմանավորված էր 1995 թ. Կանանց դրությանը նվիրված Պեկինյան համաշխարհային խորհրդաժողովի ազդեցությամբ: Հենց այդ շրջանից Հայաստանի կանանց հասարակական շարժման վեկտորն ուղղվեց կանանց ներգրավմանը հասարակական-քաղաքական գործունեության մեջ՝ հանուն գեղեցիկ հավասարության կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման միջոցով և նրանց առաջնորդող որոշումների ընդունման մակարդակում:

Ոչ ճշտված տվյալներով Հայաստանում գործում է մոտ 5280 հասարակական կազմակերպություն: ՀՀ արդարադատության նախարարության Պետքեզիստրի հիմնադրման օրից՝ 2001 թվականից մինչև օրս գրանցվել է 2726 հասարակական կազմակերպություն: Տարածված և զանգվածային լրատվամիջոցներում հնչող այն կարծիքը, թե հանրապետությունում չափից ավելի շատ են կանանց ՀԿ-ները, օբյեկտիվ հիմքեր չունի: Գրանցված է ընդամենը 76 կանանց կազմակերպություն, որը կազմում է գրանցված կազմակերպությունների ընդհանուր թվի 2,8%: Այն դեպքում, երբ կանայք կազմում են երկրի ազգաբնակչության 51,8%:

Այդուհանդերձ սոցիոլոգիական հետազոտությունները, որոնք անցկացրել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, վկայում են, որ չնայած աննշան ներկայացուցչությանը հասարակական սեկտորում, կանանց հասարակական կազմակերպությունները դրա առավել ակտիվ հատվածն են և շոշափելի ավանդ ունեն քաղաքացիական հասարակության ձևավորման խնդրում:

Հայաստանի կանանց կազմակերպությունները, ինչպես հետխորհրդային ուրիշ երկրներում, սկսեցին ձևավորվել իբրև կառույցներ, որոնք «ընդդիմադիր» շահեր են ներկայացնում: Հետազոտությունը ցույց է տվել, որ

կանանց հասարակական կազմակերպությունների համար գենդերային հավասարակշռության ձեռքբերումը որոշումների ընդունման մակարդակում և կանանց հնարավորությունների ընդլայնումը հիմնական նպատակ են:

Կանանց ՀԿ-ների գործունեության ուղղվածության փոփոխությունները նոր խնդիրներ առաջադրեցին, որոնք որոշակիորեն ուղղված էին կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը և կանանց առաջնորդներ դեպի կառավարման և որոշումների ընդունման համակարգ՝ հայ հասարակությունում գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու նպատակով: Վերջին տարիներին կանանց հասարակական կազմակերպությունները զգալիորեն ընդլայնել են իրենց գործունեությունը՝ ուղղված հասարակական-քաղաքական ոլորտում գենդերային հավասարակշռության ձեռքբերմանը:

Որպես կանանց անկախ շարժում՝ կանանց կազմակերպությունները ժողովրդավարական վերափոխումների բոլոր տարիներին ձգտել են կանանց ներգրավել ժողովրդավարացման վերափոխումների և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացներում: Կանանց ՀԿ-ները հետևողականորեն բարձրացնում են կանանց քաղաքական ներկայացուցչության հարցը՝ ձգտելով հասնել իշխանության կառույցների կողմից գենդերայնորեն կողմորոշված քաղաքականության իրականացմանը:

Երևանում, Գյումրիում և Վանաձորում կայացած կլոր սեղանների և ֆոկուս խմբերի շատ մասնակիցների կարծիքով՝ որոշումների գենդերայնորեն հավասարակշռված ընդունման նպատակներին հասնելու հետևողականությունը որոշակիորեն գորացրել է ժողովրդավարական օրինականությունը և հնարավորություն է տալիս կանանց ՀԿ-ներին ձևավորելու ռազմավարություններ, որոնք ուղղված են կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը:

Հայաստանի կանանց շարժմանը վերջին երկու-երեք տարիներին բնորոշ են նոր միտումներ, որոնց վերլուծության շնորհիվ կարելի է իրատեսորեն գնահատել նրա կարողությունները և զարգացման հեռանկարները: Նախ՝ կանանց ՀԿ-ների «սելեկցիան» և ընտրությունը, որ հնարավորություն է տալիս որոշակի և իրական գործերի շնորհիվ հասարակության մեջ ունեցած հե-

դինակությամբ ազդելու զարգացման գործընթացների վրա: Մյուս կողմից, ինչպես նշում էին ՀԿ-ների ղեկավար, ակտիվիստ կանայք, հստակվել է այն ըմբռնումը, որ կանանց ՀԿ-ների ջանքերի միավորումը միայն կարող է արդյունքներ տալ: Նման մոտեցման օրինակ են կանանց կազմակերպությունների լոբբիստական գործունեությունը՝ ուղղված ընտրությունների մասին օրենսդրության փոփոխություններին, և քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում 25%-ի գենդերային քվոտայի ներդրումը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» ընդունումը, որի առաջին բաժինը վերաբերում է հայ հասարակությունում գենդերային հավասարության հաստատմանը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հասնել կանանց իրավահավասար քաղաքական մասնակցության՝ առանց ՀԿ-ների ակտիվ ներգրավման, քիչ հավանական է, քանզի հենց հասարակական կազմակերպություններում են կանայք անցնում առաջնային քաղաքական սոցիալականացումը և պատրաստվում ակտիվ քաղաքական գործունեության:

3

ՀԿ-ների շատ ղեկավարների կարծիքով, իրենց աշխատանքը գենդերային կարծրատիպերի հաղթահարման և կանանց ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորման, լիդերների և ակտիվիստների՝ հասարակական-քաղաքական գործունեության ժամանակակից տեխնոլոգիաների տիրապետման ուղղությամբ նպաստել է կանանց քաղաքական մասնակցությանը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի շատ հասարակական կազմակերպություններ քաղաքացիության գիտելիքների և հմտությունների հաղորդման արդյունավետ գործիք են դարձել և այն միջավայրը, որտեղ կանայք լիդերական որակներ և հասարակական-քաղաքական գործունեության փորձ են ձեռք բերում:

Սեկտորում քաղաքական-իրավական գիտելիքների և լիդերական որակների բարձրացման, անցումային շրջանի պայմաններում հասարակական-քաղաքական գործունեություն ծավալելու ունակությունների պատվաստման նշանակալի փորձ է կուտակվել: ՀԿ-ները կրթական ծրագրերում ընդգրկում են կին բնակչության ամենատարբեր շերտեր, ներառյալ երիտասարդությունը:

Բուն կրթական ծրագրերի իրականացման բնույթը լուրջ փոփոխություններ է ունեցել. սկսած միանվագ սեմինարներից մինչև ուսուցման առավել տևական համակարգերը:

Այսպես, 2000 թվականից Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի շրջանակներում գործում է Կանանց լիդերության դպրոցը, որում 2002 թվականից պարապմունքները վարվում են 48-ժամյա «Բարձրագույն քաղաքական դասընթացներ» ծրագրով, այն էլ ոչ միայն հասարակական կազմակերպությունների, այլև քաղաքական կուսակցությունների կանանց համար: Ուսուցման համակարգված ծրագրեր են իրականացնում նաև ուրիշ կազմակերպություններ: Այսպես, Կանանց հանրապետական խորհրդին առընթեր և «Համայնք և երիտասարդություն» ՀԿ-ում գործում է Երիտասարդ լիդերների դպրոց, որը անհրաժեշտ իրավական գիտելիքներ է մատուցում հանրակրթական դպրոցի բարձրագույն դասարանիչներին:

Նշելով Ազգային ժողովում և որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության ցածր մակարդակը՝ ՀԿ-ների լիդերներն ու ակտիվիստները համարում են, որ կանայք դեռևս իրական դեր չեն խաղում հանրապետության քաղաքական ոլորտում: Ֆոկուս խմբերի մասնակիցները միաձայն այն կարծիքին էին, որ անհրաժեշտ է բարձրացնել կանանց դերը քաղաքականության մեջ, ինչը արդարություն կապահովի հասարակությունում, մասնակցության ժողովրդավարական սկզբունքներ և մարդասիրական բնույթ կհաղորդի պետության քաղաքականությանը, քաղաքականությանն առավել սոցիալական թեքում կտա և այն պակաս ագրեսիվ կդարձնի:

Այդուհանդերձ ՀԿ-ների որոշ ղեկավարներ և ակտիվիստներ կարծում են, որ կանայք «առանձնապես քաղաքական հետաքրքրություններ չունեն»⁴²: *Քաղաքականությանը պետք է մասնակցեն նրանք, անկախ այն հանգամանքից՝ տղամարդ են, թե կին, ովքեր զգում են իրենց պատասխանատվությունը և քաղաքացիական պարտք են համարում իրենց գիտելիքները և փորձը ծանայեցնել ժողովրդին»*⁴³:

42 Անահիտ Բայանդուր, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի կոմիտեի համակոորդինատոր:

43 Մարինա Աղաջանյան, «Կրթություն առանց սահմանների» ՀԿ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեպետ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ նրանք չպետք է զբաղվեն քաղաքական գործունեությամբ, իրականում քաղաքացիական հասարակության ինստիտուտները, այդ թվում կանանց ՀԿ-ները, լինելով քաղաքացիական հասարակության գլխավոր կառույցներից մեկը, մասնակցում են քաղաքական գործընթացներին:

Ինչպես են գնահատում ՀԿ-ների ակտիվիստները կուսակցությունների՝ որպես կանանց սոցիալականացման ինստիտուտների, դերը

Չնայած կուսակցությունների կանանց թվի աճին՝ կանանց ներկայացուցչության հարցը դրանց ղեկավար մարմիններում դեռևս հիմնախնդիր է: ՀԿ-ների կին ակտիվիստների կարծիքով, դրա պատճառը թաքնված է թե՛ իրենց՝ կանանց մեջ, որոնք չեն ձգտում քաղաքական առաջխաղացման, «իրենք իրենց վերագրելով կատարողի դերը», հաճախ հարելով տղամարդկանց խտրական դիրքորոշմանը, թե՛ կանանց առաջխաղացման հարցում քաղաքական կուսակցությունների լիդերների շահագրգռության բացակայության մեջ: Կանանց ռեսուրսները չեն ներգրավվում կուսակցությունների առջև ծառայած կարևոր և բախտորոշ հիմնախնդիրների լուծման գործում, ձևավորվել է կանանց ռեսուրսները սուկ ընթացիկ հիմնախնդիրների լուծման համար օգտագործելու միտում:

3

Այսուհանդերձ կարծիք կա, թե կանանց պասիվությունը կուսակցություններում և քաղաքականության մեջ ոչ այնքան կանանց նկատմամբ տղամարդ քաղաքական գործիչների կողմնակալ վերաբերմունքի արդյունք է, որքան կապված է իրենց իսկ կանանց ցածր մոտիվացիայի հետ. «Կանայք չեն հավատում, որ իրենց հնարավորություն կտան առաջ գնալու քաղաքականության ոլորտում և ճիշտ կրնկալեն իրենց»: Բացի դրանից. «Կանայք առանձնապես ակտիվ չեն քաղաքականության մեջ, որովհետև , ի տարբերություն տղամարդկանց, ՀԿ-ների գործունեության մեջ ինքնահաստատման շատ ավելի լայն դաշտ ունեն»:

ՀԿ-ների շատ ակտիվիստների կարծիքով, քաղաքական կուսակցությունները և նրանց կանանց խորհուրդները հետևողական աշխատանք

չեն տանում կուսակցությունների ներսում կանանց լիդերության զարգացման ուղղությամբ, չեն նպաստում կանանց աճին և առաջադրմանը կուսակցության ղեկավար պաշտոններում: Առհասարակ կուսակցություններում գոյություն չունի կուսակցական-քաղաքական ուսուցման և կանանց լիդերության պլանաչափ զարգացման համակարգ: ՀԿ-ների շատ լիդերներ դրանով են բացատրում այն փաստը, որ Ազգային ժողովի 2007 թ. ընտրություններում կուսակցությունների ցուցակներում ընդգրկված էին հատկապես անկուսակցական կանայք: Մյուս կողմից՝ ՀԿ-ների լիդերների կարծիքով, կուսակցությունների ղեկավարները թերագնահատում են կուսակցությունների կին ակտիվիստներին: Այդ տեսանկյունից առաջարկվեց ՀԿ-ների և կուսակցությունների կանանց խորհուրդների համատեղ տարբեր «շուկային», քաղաքական ակցիաներ անել, որոնք հնարավոր կդարձնեն հրապարակային քաղաքականության մեջ առավել ակտիվ կանանց ներկայացնելը:

Կարծիքներ հայտնվեցին նաև տղամարդկանց գենդերային գիտելիքների բարձրացման անհրաժեշտության մասին, մասնավորապես քաղաքական կուսակցությունների լիդերների:

ՀԿ-ների քաղաքական գործելակերպը 2007 թվականի ընտրաշավում

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հասարակական կազմակերպությունների գործունեությունը նախընտրական շրջանում հիմնականում կենտրոնացած էր ընտրազանգվածի քաղաքացիական ակտիվության բարձրացման և համախմբման աջակցության վրա՝ ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացման նպատակով: ՀԿ-ներն աշխատում էին հասարակության հետ՝ ակտիվորեն նեգրավվելով տարբեր տեղեկատվական, կրթական ծրագրերում՝ ուղղված ընտրողների իրազեկության բարձրացմանը իրենց իրավունքների և քաղաքացիական պատասխանատվության մասին: Հազվադեպ ՀԿ-ներ են մասնակցել թեկնածուների առաջադրմանը և պաշտպանությանը, անցկացրել ընտրությունների և դրանց արդյունքների մոնիտորինգ, հանդես եկել որպես տեղական դիտորդ:

Առանձին հասարակական կազմակերպություններ միջոցառումներ են անցկացրել՝ նպատակ ունենալով ծանոթացնել ընտրողներին Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներին: Կին ընտրողների լիզայի նախաձեռնությամբ, հասարակական սեկտորի և մի քանի քաղաքական կուսակցությունների կանանց «Դաշինք» միավորման հետ համատեղ, Երևանում տեղի ունեցավ հասարակական կազմակերպությունների կանանց և կուսակցական ցուցակներով առաջադրված կին թեկնածուների երկու հանդիպում: Դրանք որոշակի դեր խաղացին կին թեկնածուների քարոզչության գործում և ընդլայնեցին ընտրազանգվածի՝ պատգամավորի թեկնածուների մասին իրազեկության շրջանակները: Համանման նախաձեռնություն ցուցաբերեց նաև «Սուրբ Սանդուխտ» հասարակական կազմակերպությունը՝ կլոր սեղան կազմակերպելով պատգամավորի թեկնածուների մասնակցությամբ:

Երիտասարդ կանանց ասոցիացիան իրականացրեց կրթական ծրագրեր ընտրական հանձնաժողովների անդամների, հասարակական դիտորդների և բնակչության տարբեր շերտերի համար: «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը իրավական օգնություն է ցույց տվել քաղաքացիների «թեժ գծով»: «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի կին ակտիվիստներն անցկացրել են երկխոսություններ, կլոր սեղաններ, քննարկումներ (նաև հեռուստատեսությամբ)՝ այդպիսով օժանդակելով կանանց քաղաքական մասնակցության հասարակական ընկալման փոփոխությանը և կին քաղաքական գործչի դրական կերպարի ձևավորմանը:

Ընտրական գործընթացներում մասնակցության դրական փորձ են կուտակել հանրապետության մի քանի այլ տարածաշրջանների ՀԿ-ներ: Այսպես, Սյունիքի մարզում 8 հասարակական կազմակերպություններ համատեղ 2007 թվականի Ազգային ժողովի ընտրությունների գործընթացների օժանդակության ծրագիր են իրականացրել: Ծրագրում առաձին ուղղություն էր կանանց դերի բարձրացումը ընտրություններում, որի շրջանակներում մարզում հասարակական սեկտորի կանանց, ընտրող կանանց և քաղաքական կուսակցությունների կանանց հանդիպում-երկխոսությունների ավանդույթ ստեղծվեց: «Այդ հանդիպումները, մի կողմից, քաղաքական կուսակցությունների կանանց համար գործնական փորձ ձեռք բերելու լավ դպրոց դար-

ձան, մյուս կողմից՝ ընտրողները հնարավորություն ունեցան ծանոթանալու տարբեր կուսակցությունների նախընտրական ծրագրերին»⁴⁴:

Գյումրիում «Աջակից» ՀԿ-ն «Շանթ» և «Շիրակ» հեռուստակայանների հետ համատեղ ծրագրեր է իրականացրել՝ ուղղված ընտրություններում կանանց մասնակցության ակտիվացմանը:

Միաժամանակ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կին թեկնածուների աջակցությունը ավանդույթ չի դարձել կանանց ՀԿ-ներում: Այդ իրողության բացատրությունը թաքնված է հասարակական սեկտորի՝ սեփական քաղաքական գործառույթների ընկալման մեջ:

Որոշակի կին թեկնածուների աջակցության հնարավորությունը կանանց ՀԿ-ների ճնշող մեծամասնության լիդերների մեջ մի շարք պատճառներով մեծ տարակուսանք է հարուցում: Շատերը կարծում են, որ քաղաքացիական և քաղաքական ակտիվության հավասար հնարավորությունների ապահովման պայմաններ ստեղծելով՝ ՀԿ-ներն արդեն իսկ օժանդակում են կանանց քաղաքական մասնակցության զարգացմանը: ՀԿ-ների ուրիշ լիդերների մեջ ընտրություններում մեծամասնական համակարգով առաջադրված որոշակի թեկնածուների աջակցության անհրաժեշտությունն է տարակուսանք հարուցում: Նրանցից ոմանք այն կարծիքին են, որ պատշաճ չէ ճնշում գործադրել իրենց կազմակերպությունների անդամների վրա՝ սահմանափակելով նրանց ընտրության ազատության իրավունքը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի փորձագետ Վլադիմիր Օսիպովի կարծիքով. «Տեսականորեն ՀԿ-ներն ավելի չեզոք են և ավելի շահագրգռված ընդհանուր բարօրության հարցում, քան քաղաքական կուսակցությունները: ՀԿ-ների համար պետք է կարևոր լինի ոչ այնքան, թե **ով** է հաղթել, որքան՝ **ինչպես** է հաղթել, քանի որ ազատ, արդար և թափանցիկ ընտրությունները կարևոր են ժողովրդի և ժողովրդավարության ճակատագրի համար»⁴⁵:

44 Ռուզաննա Տորոզյան, «Գործիսի ուսուցիչների միություն» ՀԿ:

45 Владимир Осипов, “Выборы и демократия: фактор гражданского общества”, Ассоциация женщин с университетским образованием. Ереван, 2003.

Հետաքրքրություն է ներկայացնում կանանց ՀԿ-ների ակտիվիստների և լիդերների վերաբերմունքը ընտրությունների օրը տեղական դիտորդների առաքելության իրականացմանը և մասնակցությանը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ շատ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ համոզված, որ «ընտրությունների արդյունքները նախապես որոշված են», մասնակցությունը ընտրություններին՝ որպես տեղական դիտորդ, անօգուտ էին համարում:

Բացի դրանից, շատ կին ակտիվիստներ չեն թաքցնում, որ չեն մասնակցում ընտրություններին, որպեսզի *«անազատ և անարդար ընտրություններն օրինական չերևան»*, ինչպես նաև *«չզգեն իրենց հեղինակությունը»*:

Գրանով է մեծապես բացատրվում այն իրողությունը, որ 2007 թվականի ընտրություններում տեղական դիտորդների առաքելություն իրականացնող 53 հասարակական կազմակերպությունների թվում կանանց կազմակերպություններն ընդամենը 4-ն էին: Նշենք, որ տեղական դիտորդների առաքելություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները ընտրությունների ընթացքի և արդյունքների մասին հաճույքով չեն խոսում՝ մեծ մասամբ նշելով, որ խախտումներ առանձնապես չեն նկատվել:

3

Ընտրությունների արդյունքները և գենդերային իրավահավասարության հիմնախնդիրը կանանց ՀԿ-ների գնահատմամբ

Հետազոտության ընթացքում շեշտադրվել է հետևյալ հարցի ուսումնասիրությունը. արդյոք 2007 թվականի Ազգային ժողովի ընտրություններում գենդերային իրավահավասարության հիմնախնդիրը առաջնահերթություն դարձե՞լ է կին թեկնածուների համար:

Ինչպե՞ս են գնահատում կանանց ՀԿ-ները կանանց քաղաքական ակտիվությունը ընտրությունների ընթացքում, որքանով կանայք կարողացան ինքնակազմակերպվել և օգտվել ընտրական գործընթացից՝ իրենց շահերը առաջ մղելու և գենդերային հավասարության հասնելու համար, և ինչ դեր խաղացին նրանք ընտրությունների ընթացքում:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 2007 թվականի Ազգային ժողովի ընտրություններում կանայք ավելի մեծ ակտիվություն են ցուցաբերել, քան նախորդ ընտրություններում, ընդ որում ակտիվության աստիճանը կախված էր տարածաշրջանային և ուրիշ հանգամանքներից:

Գյումրիի ՀԿ-ների լիդերներն ու ակտիվիստները նշում էին, որ 2007 թվականի ընտրությունների ժամանակ նախկին տարիների ապատիան չկար: Կանայք ազատ և արդար ընտրությունների անցկացման շահագրգռություն են ցուցաբերել, կանանց հասարակական կազմակերպությունների շատ ակտիվիստներ ավելի գործուն են դարձրել աշխատանքը ընտրողների հետ:

Գորիսում նկատվել է կին ընտրագնազվածի ակտիվության վերելք՝ որպես հասարակական, այդ թվում և կանանց կազմակերպությունների գործունեության արդյունք, որոնք նախընտրական շրջանում մեծ աշխատանք են տարել կին բնակչության տարբեր խմբերի՝ ընտրական իրավունքների, հասարակության ժողովրդավարացման գործում ընտրությունների նշանակության և իրենց պատասխանատվության վերաբերյալ իրազեկության բարձրացման ուղղությամբ:

«Կանայք ոչ միայն ոգևորությամբ էին մասնակցություն ունենում ընտրություններում. այլև վստահությամբ, որ իրենց ձայնը ազդեցություն կունենա ընտրությունների արդյունքների վրա, և գիտակցված ընտրություն էին կատարում: Կանայք կարողացան դրսևորել իրենց որպես լիարժեք, տղամարդկանց հավասար ընտրողներ»⁴⁶: «Բոլոր կանայք ոչ միայն ակտիվորեն մասնակցում էին ընտրություններին, այլև, ի տարբերություն նախորդ տարիների, այս ընտրություններին մասնակցում էին հստակ կողմնորոշված, զգացվում էր, որ նրանք ունեն իրենց դիրքորոշումը և վճռական են իրենց ընտրության մեջ»⁴⁷:

Երևանի հասարակական կազմակերպությունների կին լիդերների մեծ մասը համակարծիք էր, որ ակտիվության որոշ վերելք է եղել քաղաքական կուսակցությունների կին թեկնածուների հաշվին, որոնք հեռուստատեսային հա-

46 Թինա Հովհաննիսյան, «Գորիսի երիտասարդ գործարարներ» ՀԿ:

47 Ազնեսա Դարբինյան, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գորիսի մասնաճյուղի ղեկավար:

դորդումներում ակտիվորեն մասնակցում էին բանավեճերին և երկխոսություններին:

Այսուհանդերձ, ՀԿ-ների լիդերների գնահատմամբ, մայրաքաղաքում կանանց ընտրագանգվածային ակտիվության ընդհանուր մակարդակը համեմատաբար ցածր է եղել, քան ուրիշ տարածաշրջաններում: Երևանում կայացած ֆոկլուս խմբի մի շարք մասնակիցների կարծիքով. «Ընտրությունները հաշվարկված և կանխորոշված էին: Կին ընտրողները շահագրգռված չէին որևէ մեկի հարցում, քանզի չէին տեսնում նրանց, ովքեր կներկայացնեին իրենց շահերը: Քվեարկությունը գաղափարական նկատառումներով նահանջում էր երկրորդ պլան: Քվեարկում էին հոգուտ ծանոթների, ազգականների, ում համար խնդրում էին... կամ չէին քվեարկում»⁴⁸:

Գյումրիի ՀԿ-ների կին ակտիվիստները, նշելով ընտրողների կաշառման փաստը և այս կամ այն պատգամավորի թեկնածուի օգտին քարոզչություն անող անձանց պարզևատրման համակարգը, դատապարտում էին այդ բացասական երևույթները: Միաժամանակ, նրանք այդ երևույթների տարածվածությունը բացատրում էին բնակիչների ցածր սոցիալ-տնտեսական կացությամբ:

3

Ընտրություններին կանանց մասնակցության գնահատումը՝ որպես հասարակության ժողովրդավարացման հիմնախնդիր

2007 թվականի ընտրությունները ՀԿ-ների գնահատմամբ էական ազդեցություն չեն բողել հասարակության մեջ կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտության գիտակցության և հասարակության ժողովրդավարական քաղաքական մշակույթի ձևավորման վրա:

Չնայած այն հանգամանքին, որ հասարակությունը ընտրությունների արդյունքում կանանց քաղաքական ներկայացուցչության էական մեծացում չէր սպասում, այդուհանդերձ ենթադրվում էին որոշակի դրական փոփոխություններ՝ կապված ընտրությունների մասին օրենքում կանանց քվոտաների ներդրման հետ:

⁴⁸ Սուսաննա Վարդանյան, Կանանց իրավունքների կենտրոնի նախագահ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կանանց ներկայացուցչության հիմնախնդիրը հայ հասարակությունում ընկալվում է ոչ այնքան խորհրդարանում՝ ներկայացուցչական ժողովրդավարության մարմնում, զենդերային հավասարության հասնելու հիմնախնդրի հրատապության հնչեղության, որքան զուտ պատգամավորական կազմում կանանց թվաքանակի մեծացման տեսանկյունից: Ընտրական գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ չի հնչեցվել գլխավոր հիմնախնդիրը՝ կանանց քաղաքական մասնակցության՝ որպես ժողովրդավարության որակի վրա ազդող և ժողովրդավարական գործընթացների զարգացումը խորացնող գործոնի, հրատապությունն ու նշանակությունը:

ՀԿ-ների ակտիվիստների գնահատմամբ, դա հաստատվում է նրանով, որ «ոչ մի կուսակցական ծրագրում չեն ներկայացվել զենդերային հավասարության հիմնախնդիրները: Կին թեկնածուներն առհասարակ չեն խոսել այդ մասին, զենդերային հիմնախնդիրները կենսական կարևորություն չեն ունեցել կին թեկնածուների համար»⁴⁹:

«Նախորդ ընտրությունների համեմատությամբ կին թեկնածուներն ավելի տեսանելի էին, բայց նրանք ոչ մի դեր չէին խաղում: Ընտրությունները վերջիանեցին քաղաքականության մեջ կանանց առանձնահատուկ դերը, չկար նոր մոտեցում, կանանց մասնակցության նոր ընկալում: Կին քաղաքական գործչի նոր կերպարի ձևավորում տեղի չունեցավ: Չկային կանանց նոր դեմքեր...»⁵⁰:

Քաղաքական կուսակցությունների և ընտրողների բազմաթիվ հանդիպումների ընթացքում կանայք սակավաթիվ են եղել, և, որ հատկապես կարևոր է, ներկայացված լինելով կուսակցությունների քարոզչական խմբերում, ելույթ չեն ունեցել, չեն հնչեցրել կանանց հայացքները հասարակության զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ:

49 Ջինա Սարգիզովա, Հասարակական կազմակերպությունների կենտրոն:
50 Նատալյա Մարտիրոսյան, Կանանց համահայկական միության կոորդինատոր:

Կանանց քաղաքական ակտիվության նախադրյալները և խոչընդոտող գործոնները ՀԿ-ների գնահատմամբ

Ընտրություններում կանանց հաջողության հասնելուն նպաստող կամ խոչընդոտող գործոնների ուսումնասիրությամբ վեր են հանվել այն նախապատվությունները և պահանջները, որոնք ներկայացնում են կանանց ՀԿ-ները Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներին:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թե՛ կին, թե՛ տղամարդ թեկնածուներին ներկայացվող հիմնական պահանջը պրոֆեսիոնալիզմն է և քաղաքական գրագիտության բարձր մակարդակը: «Քաղաքացիական հասարակություն և տարածաշրջանային զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի տնօրեն Աղավնի Կառախանյանը նշում է, որ «Միրողական մակարդակն այսօր արդեն անթույլատրելի է, այն կտանի փակուղու»:

Կարևորության աստիճանով երկրորդ տեղում հասարակական-քաղաքական աշխատանքի փորձի առկայությունն է:

Որպես թեկնածուների՝ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց առաջադրմանը նպաստող գործոններ նշվում էին որոշակի կենսափորձը, մտահորիզոնը և բարոյական արժանիքները, հռետորական ունակությունները, միջանձնային հարաբերությունների հմտությունների առկայությունը և այլն:

Կանանցից պահանջվում էր նաև հասարակական-քաղաքական գործունեությունը ընտանեկան պարտականությունների հետ համատեղելու ունակություն և անպայման հաջողակություն ընտանիքում և մասնագիտական առաջխաղացման ոլորտում: ՀԿ-ների ակտիվիստների կարծիքով, կինը, ունենալով գործնական որակների ողջ համալիրը, չպետք է մոռանա կանացի լինելու մասին:

«Խոչընդոտող իշխանության տղամարդիկ են, որոնք չեն ցանկանում իրենց կողքին խելոք կանանց տեսնել, քանի որ նրանց համար իրենց շրջապատում ավելի հարմարավետ է. ներս թողնել այնտեղ կանանց, կնշանակի ավելորդ հոգսեր ստեղծել»⁵¹:

51 Անահիտ Բայանդուր, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի կոմիտեի համակոորդինատոր:

Գիտակցելով կանանց ՀԿ-ների՝ որպես քաղաքական մասնակցության ընդլայնման խողովակի, պատասխանատվությունը՝ հասարակական կազմակերպությունների լիդերները, ի թիվս կանանց ակտիվ քաղաքական մասնակցությունը խոչընդոտող այլ պատճառների, առաջին հերթին նշում էին.

- կանանց քաղաքական մասնակցությունը կանանց շարժման հիմնախնդիր չի դարձել, որը չի կարողացել համախմբել ջանքերը և հետևողական գործողություններ ծավալել,
- իրենց իսկ կանանց ցածր ինքնագնահատումը, շատ կանանց մեջ բացակայում է քաղաքական մասնակցության մոտիվացիան:

2007 թվականի ընտրությունները որոշ չափով փոխեցին ՀԿ-ների կարծիքը խոչընդոտող գործոնների գնահատման հարցում, զգալիորեն ավելի հաճախ էին նշվում կանանց սահմանափակ ֆինանսական հնարավորությունները, անվստահությունը շրջապատի հանդեպ, «թիմ» ձևավորելու անկարողություն և, ավելի հազվադեպ՝ անինքնավստահությունը, թերահավատությունը սեփական հնարավորությունների հարցում:

Խոչընդոտների շարքում նշվել են կոռուպցիան, կապիտալի գերիշխանությունը, քրեական միջավայրը, տնավարի հարաբերությունները ընտրական գործընթացներում, որտեղ կանայք տեղ չունեն, կանանց ցածր սոցիալական կարգավիճակը, կնոջ կրկնակի ծանրաբեռնվածությունը, տղամարդկանց համեմատ անհավասար մեկնարկային պայմանները:

Կարծիքներ են հայտնվել այն մասին, որ հիմնական խոչընդոտը կանանց հասարակական շարժման միասնական ռազմավարության, համերաշխության և միավորվելու, սեփական ուժերը համախմբելու ունակության բացակայությունն է:

Հասարակության և ընտանիքի վերաբերմունքը քաղաքական մասնակցությանը

ՀԿ-ների շատ ակտիվիստներ նշել են, որ վերջին տարիներին նկատվում է հասարակական կարծիքի փոփոխություն, ավելի դրական է ընկալվում քաղաքականությանը կանանց մասնակցությունը: Դրա հետ մեկտեղ կարծիք է

արտահայտվել, որ հասարակությունում առայժմ պահպանվում են այն կարծրատիպերը, ըստ որոնց քաղաքականությունը տղամարդու գործ է, հասարակությունն առայժմ պատրաստ չէ ընկալելու կին քաղաքական գործչին: Նման ըմբռնման աստիճանը տատանվում է՝ կախված տարածաշրջանային առանձնահատկություններից: Ընդամին անցած ընտրությունները, ըստ ՀԿ-ների լիդերների և ակտիվիստների գնահատումների, դրական ազդեցություն են թողել կին քաղաքական գործիչների նկատմամբ հասարակայնության վերաբերմունքի վրա, ինչը որոշ չափով կարելի է կապել այդ ընտրություններին իրենց՝ կանանց առավել ակտիվ մասնակցության հետ:

Հնչել է նաև ուրիշ տեսակետ, թե հասարակությունն ավելի շուտ անտարբեր է եղել, քան բարյացակամ կանանց մասնակցությանը, թե *«կանանց քաղաքական մասնակցության տարբերակը հասարակությունը համարում է ճգնաժամից դուրս գալու վերջին փորձ»*⁵²:

Ուսումնասիրությամբ բացահայտվեց նաև, որ հայ հասարակությունում պահպանվում է այն կարծիքը, թե եթե կինը նվիրվել է հասարակական-քաղաքական գործունեությանը, ուրեմն նրա ընտանեկան կյանքը չի ստացվել, նա *«չստացված կին է»*: Ընտրություններում կանանց հաջողության համար շատ կակտոր է կոտրել այդ կարծրատիպը՝ ցուցադրելով ընտրողներին նրա ընտանեկան բարեկեցությունը և ընտանիքի աջակցությունը:

Սակայն այդ փաստը հազվադեպ կին թեկնածուներ են օգտագործել որպես դրական փաստարկ: Ընտրարշավի գործընթացում կին թեկնածուների աջակցությունը նրանց ընտանիքների կողմից չի ցուցադրվել, անգամ այն կանանց դեպքում, որոնք առաջադրվել են մեծամասնական համակարգով:

Համարվում է, որ եթե կինն առաջադրել է իր թեկնածությունը, ապա դա արդեն նշանակում է, որ ընտանիքը պաշտպանում է նրան, քանզի ինքնին հասկանալի է, որ առանց ընտանիքի գորակցության դա անհնարին է: Կանայք չեն օգտագործել ընտանիքի աջակցությունը և ընտանեկան բարեկեցությունը՝ որպես դրական գործոն:

52 Ջինա Մարգիզովա, «Հասարակական կազմակերպությունների կենտրոն» ՀԿ-ի վարչության անդամ:

«Հայաստանի քաղաքական մշակույթում սեփական «թիկունքը» ցուցադրելու ավանդույթ չկա»: Ընտանիքները չեն երևում նաև քաղաքական գործիչ տղամարդու կողքին»⁵³:

«Եթե ընտանիքի աջակցություն ասելով հասկանանք «ես կլվանամ ամանները, ճաշ կեփեմ, իսկ դու քաղաքականությանը զբաղվիր», ապա այդպիսի օգնությունը բնավ բավարար չէ: Աջակցությունն այն է, երբ ընտանիքը օգնում է ոչ միայն ֆինանսապես, այլև ընտրությունների ընթացքում կողքիդ է կանգնում: Բայց դա չէր երևում»⁵⁴:

Մուտք քաղաքականություն. դրդապատճառների գենդերային հայեցակետը

Ուսումնասիրությունը վեր հանեց հասարակական կազմակերպությունների կարծիքը քաղաքականություն կանանց մուտք գործելու դրդապատճառների վերաբերյալ:

Մինչև ընտրությունները ՀԿ-ների կանանց ճնշող մեծամասնությունը համարում էր, որ տղամարդկանց համար Ազգային ժողովի ընտրություններում սեփական թեկնածությունն առաջադրելու խթանը հավակնոտ նպատակներն են, սեփական բիզնեսի պաշտպանությունը, «տանիք» ձեռք բերելու անհրաժեշտությունը, իսկ կանանց մոտիվացիան մեծ մասամբ «առավել բարենպաստ կենսական պայմաններ ստեղծելու նպատակով ընդունվող օրենքների որակը բարելավելու հնարավորություն ունենալու», «հասարակությանը նպաստ բերելու» ձգտումն է:

Ընտրություններից հետո ձևավորվեց համընդհանուր համոզմունք, որ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց մասնակցության դրդապատճառները «անձնական շահերը և պաշտոնեական առաջխաղացումն» են:

53 Արմինե Մխիթարյան, Երևանի «Երկխոսություն» կենտրոնի նախագահ:
54 Գայանե Ավազյան, «Մուրբ Սանդուխտ» ՀԿ-ի ծրագրերի կոորդինատոր:

Հասարակական կազմակերպությունների կարծիքը կանանց առաջադրելու հարցում կուսակցությունների շահագրգռության վերաբերյալ

Կլոր սեղանների մասնակիցները նշում էին, որ ընտրությունները ցույց տվեցին՝ կուսակցությունները շահագրգռված չեն կանանց առաջադրելու հարցում, և կանայք կուսակցական ցուցակներում ընդգրկվել են միայն և միայն կանանց 15%-ի ներկայացուցչությունն ապահովելու մասին օրենքի պահանջը բավարարելու համար:

Որպես բացառություն բերվում է միայն մեկ կուսակցության՝ «Ժառանգության» օրինակը, որը գենդերայնորեն հավասարակշռված էր, բայց և այնպես այդ կուսակցության մոտեցումը գնահատվում էր որպես «քաղաքական ճիշտ հաշվարկ»:

Հասարակական սեկտորի շատ ակտիվիստների կարծիքով, ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ քաղաքական կուսակցությունների համար գենդերային հավասարակշռության հիմնախնդիրը առաջնահերթություն չդարձավ: Կուսակցությունները զուգակշռված ժողովրդավարության սկզբունքների կրողներ ու քարոզիչներ չդարձան, չնպաստեցին հասարակության մեջ նոր էգալիտար քաղաքական մշակույթի ձևավորմանը:

Կանանց ՀԿ-ների ակտիվիստների վերաբերմունքը քվոտաներին՝ որպես քաղաքականության մեջ կանանց առաջ մղելու միջոցի

Ընտրությունները ցույց տվեցին, որ քվոտաները որոշակի դեր խաղացին և ազդեցություն թողեցին կանանց քաղաքական մասնակցության գործընթացի վրա: Այդուհանդերձ, ՀԿ-ների շատ ակտիվիստների կարծիքով 15%-անոց քվոտան շատ ցածր շեմ է, և անհրաժեշտ է մեծացնել այն մինչև 25%՝ նկատի ունենալով Ազգային ժողովում կանանց ներկայացուցչության վերջնական արդյունքը: Եզրակացությունը, որին հանգեց ֆոկուս խմբերի մասնակիցների մեծ մասը, անվերապահ է. *քվոտաները Հայաստանի համար կանանց քաղաքականության մեջ առաջ մղելու հնարավոր ուղի են, և դրանք պետք է բարձրացվեն:*

Ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպությունների մասնակցության արդյունավետության գնահատումը

Ուսումնասիրության ընթացքում խնդիր է դրվել վեր հանել, թե ինչպես են իրենց հնարավորությունները գնահատում կանանց հասարակական կազմակերպությունները, ինչ ռեսուրսներ են տնօրինում և իրենց հետագա գործողությունների ինչ հեռանկար են տեսնում:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կանանց հասարակական կազմակերպությունները բավական խիստ են իրենց գործունեությունը գնահատելու հարցում: Ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպությունների ակտիվության որոշ աճ նկատելով՝ շատերը նշում էին, որ մեծ հաշվով իրենք ազդեցություն չեն ունեցել ընտրությունների ընթացքի և արդյունքների վրա:

Հասարակական կազմակերպությունները հիմնականում աշխատում էին բնակչության հետ՝ իրենց ջանքերն ուղղելով քաղաքացիների մասնակցության համախմբմանը, իրականացնելով տեղեկատվական-կրթական ծրագրեր, իրավաբանական խորհրդատվություն անցկացնելով՝ ի նպաստ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման: ՀԿ-ների որոշ լիդերներ, վերլուծելով ընտրական գործելակերպը և հիմնվելով մասնակցության փորձի վրա, նշում էին, որ հասարակական սեկտորը միավորվելու դեպքում միայն կկարողանա քաղաքացիների ակտիվության և կանանց քաղաքական մասնակցությունը պաշտպանող հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդող հզոր լծակ դառնալ:

Կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցությունը քաղաքական կուսակցությունների հետ

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հասարակական կազմակերպությունների համագործակցությունը քաղաքական կուսակցությունների ու նրանց կանանց խորհուրդների հետ լինելության գործընթացում է: Լիդերները որպես համագործակցության որոշակի օրինակ նշում էին Համալսարանա-

կան կրթությամբ կանանց ասոցիացիայի՝ Կանանց լիդերության դպրոցում հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների կանանց համատեղ ուսուցման փորձը, որի արդյունքում վերջին 4-5 տարիների ընթացքում դպրոցի դասընթացն ունկնդրել են տարբեր քաղաքական կուսակցությունների ավելի քան 300 կանայք:

Կանանց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների գործընկերային հարաբերությունների գլխավոր խոչընդոտը քաղաքական կուսակցությունների կողմից նախաձեռնության բացակայությունն է: Քաղաքական կուսակցությունների կանայք, հաճախ թերագնահատելով հասարակական կազմակերպությունների դերը, քիչ «վերևից» են նայում նրանց և շփման կետ չեն գտնում կանանց քաղաքական առաջնորդման ուղղությամբ համատեղ գործունեության համար:

Կանանց ՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների համագործակցության ճանապարհին ընկած արգելքները

Քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների միջև փոխադարձ անվստահություն գոյություն ունի, դրանից է շփումների ավելորդ զգուշավորությունը, ինչը մեծ մասամբ բացատրվում է նրանով, որ կուսակցությունները լիովին չեն գիտակցում ՀԿ-ների կարևոր դերը: Կուսակցությունները և ՀԿ-ները խոսում են «տարբեր լեզուներով»՝ կիրառելով տեղեկատվության տարբեր ոճեր, նկատվում է, որ շատ կուսակցությունների համար, որոնց ղեկավարությունում հիմնականում տղամարդիկ են, անախտոժ են գեղեցիկային մոտեցումների հիմնախնդիրները: Սրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ կուսակցությունների կանայք կանանց հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության առումով ակտիվ են միայն այն ժամանակ, երբ կուսակցական ղեկավարությունը քաջալերում է դա:

Կուսակցությունների կանայք կանանց հասարակական կազմակերպություններում իրենց հզորացման հնարավորություն են տեսնում, սակայն կանանց հասարակական սեկտորի ներկայացուցիչները միշտ չէ, որ կուսակցությունների կանանց մեջ իրենց համախոհներին են տեսնում և չեն պաշտպանում նրանց ընտրություններում:

ՀԿ-ները՝ առաջին հերթին կանանց ՀԿ-ները, վախենում են կուսակցու-

թյունների մեքենայություններից՝ նեղ կուսակցական նպատակներով: Համագործակցությանը որոշ չափով խանգարում է կուսակցությունների և ՀԿ-ների՝ փոխադարձ պահանջների բարձր նշանդր:

Չնայած քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների կամ կանանց ճյուղերի և կանանց կազմակերպությունների համագործակցության որոշ ակտիվացմանը՝ «կանանց համերաշխության» գաղափարը դեռևս ամրապնդված չէ հասարակայնորեն նշանակալի համատեղ գործողությունների դրական նախադեպերով:

Այդուհանդերձ, այն փաստը, որ վերջին շրջանում մեծացել է միաժամանակ հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների անդամ կանանց թիվը, նոր մակարդակի փոխհարաբերությունների և համագործակցության նախադրյալներ է ստեղծում:

Կանանց ՀԿ-ների դիրքորոշումը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի կին թեկնածուներին պաշտպանելու խնդրում

Վերջին տարիներին կանանց հասարակական կազմակերպությունները բազմիցս են անդրադարձել ընտրություններում կին թեկնածուների աջակցության և առաջնորդման հիմնախնդրի քննարկմանը: Թեպետ գորակցության անհրաժեշտությունը գիտակցվում է, հասարակական սեկտորում միասնական մոտեցում գոյություն չունի, չկա միասնական ըմբռնում, թե ինչպես պիտի դրսևորվի այդ աջակցությունը հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների գործունեության տարբեր սկզբունքների պարագայում:

Հասարակական կազմակերպությունների շատ լիդերներ տարակուսանք են հայտնում ընտրություններում առանձին թեկնածուների պաշտպանության անհրաժեշտության կապակցությամբ: «Չեմ կարծում, որ ճիշտ է պաշտպանել որոշակի թեկնածուների, ավելի ճիշտ կլիներ, եթե կանանց հասարակական սեկտորը Ազգային ժողովում կանանց ներկայացուցչության լրբբինգ աներ: Իսկ որոշակի կանանց կարելի է աջակցել միայն այն դեպքում, եթե նախընտրական ծրագիրը հասարակական կազմակերպությունների

առաքելությանը և ռազմավարական ուղղություններին համահունչ դրույթներ բովանդակի»⁵⁵:

«Հասարակական սեկտորը պետք է շարունակի անել այն, ինչ արել է մինչև հիմա, աշխատել բնակչության բոլոր շերտերի հետ, որպեսզի փոխի վերաբերմունքը ընտրյալ ներկայացուցիչների նկատմամբ: Քաղաքականության մեջ պետք է պրոֆեսիոնալներ լինեն, և եթե նրանք այդպիսին չեն, պետք է նրանց փոխելու հնարավորություն լինի: Գլխավորը պատգամավորների պատասխանատվության բարձրացումն է»⁵⁶:

Կանանց հասարակական կազմակերպությունները քաղաքական ոլորտում կանանց առաջ մղելու հեռանկարում անհրաժեշտ են համարում.

- կին քաղաքական գործչի կերպարի բարենպաստ հասարակական ընկալման ձևավորման ուղղությամբ տեղեկատվական-կրթական ծրագրերի իրականացումը հասարակության լայն շրջանների համար,
- բարենպաստ միջավայրի ստեղծումը կանանց քաղաքական մասնակցության համար, կին լիդերների ձևավորումը քաղաքական-իրավական գիտելիքների հարստացման, հասարակական-քաղաքական գործունեության նորագույն տեխնոլոգիաների արմատավորման միջոցով,
- ՀԿ-ների անդամների գենդերային կրթության իրականացումը և բնակչության գենդերային իրազեկության բարձրացումը,
- լոբբինգ քաղաքական կուսակցությունների ցուցակներում քվոտաները մինչև 25% մեծացնելու և Ազգային ժողովում կանանց ներկայացուցչության ապահովման ուղղությամբ,
- առաջադրման համար պահուստային կանանց տվյալների շտեմարանի ստեղծում, պոտենցիալ լիդերների բացահայտում և հասարակական-քաղաքական սոցիալականացման միջոցով պատրաստում ՀՀ ԱԺ հերթական ընտրությունների համար,
- մասնագիտական բարձր որակավորում ունեցող շահագրգիռ կանանց ներգրավում ՀԿ-ների գործունեության մեջ, աճման միջավայրի ստեղծում գիտելիքների հարստացման. հասարակական-քաղաքական գործունեության հմտությունների ու փորձի հաղորդման միջոցով:

55 Ջինա Մարգիզովա, Հասարակական կազմակերպությունների կենտրոն:

56 Նատալյա Մարտիրոսյան, Կանանց համահայկական միության կոորդինատոր:

ԳԼՈՒԽ 4

**ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
ԸՆԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ԿԱՆԱՆՑ
ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ.
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ
ԵՎ ՀԵՏՈ**

**Ընտրություններում կանանց ցածր մրցունակությունը
պայմանավորող և կանանց քաղաքական առաջխաղացումը
խոչընդոտող գործոնները**

Ընտրական գործընթացների անկատարությունը. ընտրությունների առևտրականացման բարձր աստիճանը, կանանց շրջանում ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, քաղաքական պայքարի դաժանությունը, «սև տեխնոլոգիաների» օգտագործումը, քաղաքական պայքարի քրեականացումը, կին թեկնածուների՝ ժամանակակից ընտրական տեխնոլոգիաների, ընտրարշավի կազմակերպման մեթոդների թերիմացությունը:

Մենթալային առանձնահատկությունները և կարծրատիպերը. հայրիշխանական, կանանց քաղաքական գործունեությունը չխրախուսող տրամադրությունների գերիշխումը, կին թեկնածուների նկատմամբ անվստա-

4

հույությունը պայմանավորող կարծրատիպերը, հասարակության և կանանց կողմից խտրական գործելակերպը չգիտակցելը:

Քաղաքական փորձի բացակայությունը և իրենց իսկ կանանց ցածր ինքնագնահատումը. քաղաքական փորձի անբավարարությունը, ներքին հոգեբանական արգելքները և կանանց ցածր ինքնագնահատումը՝ որպես քաղաքական սոցիալականացման, հասարակության մեջ տղամարդկանց և կանանց տարբեր դերերի կողմնորոշման հետևանք, կին կադրերի պատրաստման և կանանց լիդերության աջակցության տարբերակված համակարգի բացակայությունը, կանանց սահմանափակ ներկայությունը կենսասագործունեության այն ոլորտներում, որտեղից է սկիզբ առնում քաղաքականության մեջ հավաքագրումը, կանանց կրկնակի ծանրաբեռնվածությունը, որոնք ընտանեկան պարտականությունները համատեղում են քաղաքական գործունեության հետ նախադպրոցական հաստատությունների չափազանց թերզարգացության պայմաններում:

Հասարակության ոչ բավարար բարձր քաղաքական մշակույթը և ժողովրդավարական ինստիտուտների թուլությունը. կանանց առաջնորդմանն ու անհավասարակշռության հաղթահարմանն ուղղված պետական գեներալային քաղաքականության բացակայությունը, կանանց հասարակական կազմակերպությունների թուլությունը, կանանց հասարակական շարժման ձևավորված չլինելը, ներկուսակցական ժողովրդավարության ճեղքվածքը, կուսակցությունների առաջնորդման կուսակցական մեխանիզմների բացակայությունը, հասարակական քաղաքական կյանքում կանանց դերի կարծրատիպային պատկերացումներն ամրապնդող ՉԼՄ-ների կողմից կանանց քաղաքական մասնակցության աջակցության բացակայությունը:

Խտրական գործելակերպը գիտակցելու հիմնախնդիրը

Կանանց քաղաքական առաջխաղացումը խոչընդոտող պատճառներն ուսումնասիրելիս հատուկ ուշադրություն է հատկացվել ոչ այնքան բացահայտ և սքողված խտրական գործելակերպի, որքան կանանց կողմից բուն խտրականության փաստի գիտակցման հիմնախնդիրը: Անցկացված գրույցները և ֆոկուս խմբերը ցույց տվեցին, որ խտրականության գի-

տակցման հիմնախնդիրը հրատապ է անգամ քաղաքականապես ակտիվ կանանց համար:

Կուսակցությունների անդամ շատ կանայք կարծիք էին հայտնում, թե Հայաստանում խտրականություն գոյություն չունի⁵⁷, միաժամանակ չգիտակցելով դա, բերում էին սքողված խտրականության օրինակներ: Հրաժարումն իրերն իրենց անուններով անվանելուց նախ պետք է բացատրել խտրականության ենթարկվող օբյեկտի հետ նույնականացվելու գուտ հոգեբանական չկամությամբ, երբորդ՝ խտրականությունը չգիտակցելու լայնորեն տարածված երևույթի դրսևորմամբ: Օրինակ. «Չեմ ընդունում «խտրականություն» բառը: Ըստ իս տղամարդիկ գնահատում են կանանց, ուստի կտրում են նրանց ճանապարհը՝ օգտագործելով «ինչ պիտի անի կինը քաղաքականության մեջ» կարգի փաստարկներ»⁵⁸: Կամ. «Խտրականություն չկա, բայց մի ուրիշ բան կա: Կարծես կանանց այնքան էլ լուրջ չեն ընդունում»⁵⁹:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ կանանց քաղաքական մասնակցության բարոյական կամ հոգեբանական խոչընդոտները հաճախ ինքնախտրականության հետևանք են:

Անտեսանելի մեխանիզմներ են գործում, որոնք ստիպում են շատ կանանց ստվերում մնալ: Դա երևում է հետևյալ հարցազրույցից. «Երբ հավաքվում են 15 տղամարդ և քննարկում ինչ-որ հարց, և դու, չինելով կին և քեզ կին զգալով, ջանալով կին մնալ, այդ աղմուկի մեջ փորձում ես ինչ-որ բան ապացուցել... Սկզբում դա ինձ չէր հաջողվում, քանի որ կնոջ ձայնն այնքան էլ լավ չի լսվում, և դու դեռ ճիշտ չես գնահատված: Բայց ժամանակի հետ ամեն ինչ իր տեղն է ընկնում: Այդ պատճառով էլ ասում եմ, որ պետք է հաղթահարել ժամանակն ու ճանապարհը»⁶⁰:

Փոքր հարցազրույցում միանգամից մի քանի բարդույթ կա, որոնք հասարակությունն է կանանց պարտադրում: Կին քաղաքական գործիչների շրջանում ամենատարածվածը **կանացիության կորստյան** բարդույթն է: Հարցվողը

57 Ինգա Հարությունյանի (ՄԻԱԿ), Ռուզաննա Առաքելյանի և Լիլիթ Գալստյանի (ՀՅԴ) հետ հարցազրույցներից:

58 Թամարա Գևորգյանի հետ հարցազրույցից:

59 Ռուզաննա Առաքելյանի հետ հարցազրույցից:

60 X-ի հետ հարցազրույցից:

կարծում է, որ «կինը կարող է ակտիվ լինել, բայց պետք է կանացի մնա», «եթե կինը ներուժ ունի, նրա համար ավելի հեշտ է **եքևացող** լինել տղամարդկանց միջավայրում, քանի որ քաղաքական ասպարեզում կանայք քիչ են»: Նշում է, որ սկզբում իրեն ընկալում էին որպես կնոջ, հաճոյախոսություններ էին անում, շատ ավելի դժվար էր **լսելի** դառնալը, ընկալվել որպես քաղաքական գործիչ»... Այն, ինչ տղամարդ լիդերներին հաջողվում է առանց ջանքերի, կանանց դժվարությամբ է տրվում: «*Ես առաջին հերթին իմ հանդեպ լուրջ վերաբերմունք եմ պահանջում, իսկ դա հենց այնպես չես կարող պահանջել: Դու պետք է հասնես նրան, որ քեզ լուրջ վերաբերվեն: Ինձ դա հաջողվել է*»⁶¹:

Քաղաքականության մեջ բավական ակտիվ որոշ կանայք կարծիք էին հայտնում, որ բազմիցս են բախվել մի շատ ուշագրավ մեխանիզմի, որը կոչված է չեզոքացնելու խտրական գործելակերպին դիմակայելու կամ պարզապես այդ թեմայով խոսելու փորձերը . «*Ինչի՞դ է պետք գենդերային հավասարությունը: Դու հո դրանց պես չես, որոնք դատարկ տեղը իրենց իրավունքներն են թափահարում: Դու փորձ ունես, խելք, գիտելիքներ, դու խնդիր չունես*»⁶²:

Հարկ է նշել, որ այդ մեխանիզմը բավական գործուն է, և շատ կանայք, որոնք իշխանության մեջ են, շատ հեշտ են տրվում դրան և սկսում են հենց այդպես էլ մտածել՝ հերքելով խտրականության առկայությունը և հեռավորություն պահելով իրենց սեռից:

4

Այդ մեխանիզմի ազդեցության արդյունքը կարելի է համարել մի շարք դեպքերում նկատվող պարադոքսալ հայտարարությունները: Օրինակ՝ երբ կին քաղաքական գործիչը հայտարարում է, թե քաղաքականության մեջ ինքը կին չէ: Դա նշանակում է, որ նա չի նույնացնում իրեն կանանց շահերին և լիովին ընդունում է այն ոճը, որը ստեղծվել է տղամարդկանց կանոններով, որի շրջանակներում իր համար հարմարավետ է: Մյուս պարադոքսը, երբ կին քաղաքական գործիչը հայտարարում է, թե ինքն իրեն քաղաքական գործիչ չի համարում, կարելի է բացատրել նրանով, որ նա հեռացնում է իրենց տղամարդկանց պարտադրած խաղի կանոններից:

61 X-ի հետ հարցազրույցից:
62 Լարիսա Ալավերդյանի հետ հարցազրույցից («Ժառանգություն»):

Կարծրատիպային մոտեցումների վերլուծությունը

Կանանց քաղաքական մասնակցության առնչությամբ կարծրատիպային մոտեցումների հիմնախնդիրը բազմանիստ է: Սույն հետազոտության շրջանակներում վերլուծվել են միայն որոշ առավել տարածված կարծրատիպեր: Չնայած այն հանգամանքին, որ հանրապետությունում անցկացվող սոցիոլոգիական հարցումների մեծ մասը ցույց է տալիս, որ բավական մեծ է հասարակության շահագրգռությունը իշխանության մեջ կանանց ներկայացուցչության հարցում, «քաղաքականությունը կանանց գործ չէ» կարծրատիպը, տարբեր գնահատումներով, մոտ 30% կողմնակիցներ ունի տղամարդկանց շրջանում և 10%՝ կանանց շրջանում⁶³: «Քաղաքականության մեջ մեզ՝ կանանց, նայում են ինչպես օտար մարմնի, ընդ որում անպայման չքաբցներով ենթատեքստը, մտածում են՝ ինչպե՞ս է սա հայտնվել այստեղ: Տղամարդիկ դժվարությամբ են հանդուրժում կանանց իրենց կողքին»⁶⁴: «Հայ տղամարդկանց մենթալիտետն ի վիճակի չէ անգամ երևակայել, որ իրենց կարող է կին ղեկավարել և լավ ղեկավարել»⁶⁵: Այս կարծիքները հաստատում են տվյալ կարծրատիպի առկայությունը:

Այն կարծրատիպը, թե «կանայք կանանց օգտին չեն քվեարկում», այնքան էլ միանշանակ չէ, ինչպես թվում է, քանի որ սոցիոլոգիական հարցումների արդյունքները տարբեր են: Ըստ 2006 թվականին հանրապետությունում Gallup կազմակերպության անցկացրած հարցման արդյունքների՝ «Երկու միևնույն արժանիքներն ունեցող թեկնածուներից որի՞ օգտին կքվեարկեք, տղամարդու՞, թե՞ կնոջ» հարցին հարցվածների 61%-ը պատասխանել է, որ պատրաստ է ձայն տալ տղամարդուն և միայն 7%-ը՝ կնոջ: Հարցվածների 31%-ի համար սեռը նշանակություն չունի, և դա հենց այն ուժն է, որի վրա կարող են հենվել կանայք իրենց նախընտրական քաղաքական դիրքավորման ճիշտ կազմակերպելու դեպքում:

63 Ըստ IFES կազմակերպության (2003 թ.), Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի (2003, 2005 թթ.) կատարած հարցումների տվյալների:

64 ԱԺ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի հետ հարցազրույցից («Բարգավաճ Հայաստան»):

65 ԱԺ պատգամավոր Գոհար Ենոքյանի հրապարակային ելույթից («Բարգավաճ Հայաստան»):

«Սոցիոմետր» կենտրոնի ունեցած ըստ սեռերի տարաբաժանված տվյալների համաձայն, *«Ի՞նչ հավանականություն կա, որ թեկնածուների հավասար արժանիքների դեպքում դուք ձեր ձայնը կնոջը կտաք»* հարցի դեպքում ստացվել է 65% բացասական պատասխան կանանցից և 70%՝ տղամարդկանցից: Նման հարցը բարձրագույն կրթություն ունեցող անձանց շրջանում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի անցկացրած հարցախույզում ցույց է տվել, որ տղամարդկանց 82%-ը և կանանց 94%-ը պատրաստ են խորհրդարանական ընտրություններում քվեարկել կին թեկնածուի օգտին: Այդպիսով այսօր ըստ սեռի տարաբաժանված պաշտոնական ընտրական վիճակագրության բացակայության պայմաններում դժվար է որոշել, թե ինչպես են քվեարկում տղամարդ և կին ընտրազանգվածները:

Սույն ուսումնասիրության ընթացքում «կանայք կանանց օգտին չեն քվեարկում» թեզը պաշտպանում էին այն կին թեկնածուները, որոնք սեփական փորձով են բախվել կին ընտրողների անվստահությանը: *«Տղամարդիկ ավելի հեշտ են ընտրում կանանց, և ես չգիտեմ թե ինչու, բայց կանանց աջակցության հասնելը շատ ավելի դժվար է»*,⁶⁶ - սա Ռուզաննա Խաչատրյանի (ՀԺԿ) կարծիքն է, որը բացի խորհրդարանական ընտրություններից նաև տեղական ինքնակառավարման ընտրություններում առաջադրվելու փորձ ունի: Շատ հարցվողներ, այդ թեզը կասկածի տակ դնելով, այնուամենայնիվ նշում էին, որ կին թեկնածուների նկատմամբ կին ընտրողների պահանջներն, անկասկած, շատ ավելի բարձր են, քան տղամարդ թեկնածուների նկատմամբ: *«Կանայք ներում են տղամարդկանց յուրաքանչյուր հիմարություն, բայց չեն ներում կանանց ամենափոքր բացթողումը»*,⁶⁶ - բավական տարածված դիրքորոշում է, որ ցույց է տալիս կանանց խիստ պահանջները կանանցից: Ընդ որում հարցվողների մեծ մասը նշելով, որ հասարակությունը շատ ավելի պահանջկոտ է կանանց նկատմամբ, քան տղամարդկանց⁶⁶, դրա մեջ դրական կողմ է տեսնում՝ կին թեկնածուների մակարդակի բարձրացման խթան:

66 Ռուզաննա Խաչատրյանի հետ հարցազրույցից:

ԳԼՈՒԽ 5

ԿԻՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՍԻՉՈՑՆԵՐՈՒՄ

Կանանց քաղաքական մասնակցությունը էլեկտրոնային ՁԼՄ-ներում

Այն կին թեկնածուների թիվը, որոնք նախընտրական քարոզարշավի ընթացքում ելույթ են ունեցել կամ որոնց մասին խոսվել է երկու ռադիոկայանների՝ հանրայինի և «Ազատության» և վեց հեռուստաալիքների՝ «Կենտրոնի», «Երկիրի», «ԱԼՄ»-ի, «Շանթի», «Արմենիայի» և Հանրային հեռուստատեսության եթերում, ըստ *ՁԼՄ-ների կովկասյան ինստիտուտի (ՁԼՄԿԻ) «Հայաստանի զանգվածային լրատվամիջոցներում ընտրարշավի լուսաբանման մոնիտորինգի»* տվյալների⁶⁷, 10%-ից ավելի չի կազմում: Մոնիտորինգի շտեմարանում ավելի քան 500 հաղորդման ձայնագրություն կա: Ամենաբարձր ցուցանիշը՝ 10%, արձանագրվել է «Կենտրոն» հեռուստաալիքում, ամենացածրը՝ «Արմենիա» հեռուստաալիքում՝ 3%: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումներում հանդես եկած կանայք 4% են կազմել, հանրային ռադիոյում՝ մոտ 5% (տես Դիագրամ 3 և 4):

Կանայք հիմնականում ներկայացվել են նորությունների ծրագրերում և հաճախ՝ թոք-շոուներում («Հինգերորդ անիվ», «Տարվա մարդը», «Հեռանկար» և այլն): Ելույթների թեման միայն ընտրություններն են եղել, կին քաղաքական

67 Տես՝ http://www.caucasusmedia.org/doc/Armenia_Final_report_Am.doc

գործիչներն իրենց որպես կին չեն ներկայացրել և կանանց հարցերին չեն անդրադարձել⁶⁸: Գեներային իրավահավասարության թեման արծարծվել է երեք անգամ, ևս մի քանի անգամ կանայք խոսել են տնտեսության և սոցիալական հիմնախնդիրների մասին: Այսուհանդերձ, ըստ փորձագետների գնահատումների, կին քաղաքական գործիչները, ելույթ ունենալով ռադիոյով և հեռուստատեսությամբ, ոչնչով չեն զիջել տղամարդ գործընկերներին, իսկ երբեմն էլ ավելի մեծ բանիմացություն և սկզբունքայնություն են ցուցաբերել իրենց դիրքորոշումը պաշտպանելու հարցում:


Բնավ ոչ բոլոր առաջադրված կուսակցություններն են իրենց կանանց հեռուստատեսություն ուղարկել: Այն կանայք, որոնք հանդես են եկել կամ նրանց մասին պատմել են եթերում, 12 կուսակցություն են ներկայացրել, որոնց թվում հիմնականում խորհրդարան անցած քաղաքական ուժերն են: Հեռուստակայաններն իրենք են որոշել իրենց հաղորդումներին հրավիրված կանանց շրջանակը: Այսպես, ԱԼՄ հեռուստակայանը նախապատվությունը տվել է ՀՀԿ-ի կանանց, Հանրային հեռուստատեսությունում հաճախ են հանդես եկել Հրանուշ Խառատյանը, «Երկիր» ալիքում՝ «Օրինաց երկիր», ՀՅ Դաշնակցություն, Հնչակյան կուսակցությունների կանայք: Մոնիտորինգը ցույց է տվել, որ եթերում ամենից ավելի հաճախ են հայտնվել Հանրապետական կուսակցության կանայք՝ 27%, «Բարգավաճ Հայաստանի»՝ 18%, «Օրինաց երկիր»՝ 14%, Միավորված աշխատանքային կուսակցության՝ 12%, Դաշնակցության՝ 10%:

Եթերում կին թեկնածուներին տրամադրված ժամականակի տևողության առումով առաջին տեղում է Լյուդմիլա Սարգսյանը՝ 2007 թվականի ընտրություններում միակ կին կուսակցության լիդերը: Նրան չեն զիջում Ալվարդ Պետրոսյանը (44 անգամ) և Ռուզաննա Առաքելյանը (երկուսն էլ Դաշնակցությունից), Հրանուշ Խառատյանը Ազգային-ժողովրդավարական կուսակցության ցուցակից, Լարիսա Ալավերդյանը («Ժառանգություն»), Գոհար Ենոքյանը («Բարգավաճ Հայաստան»), այնուհետև անկախ թեկնածու Սուսաննա Հարությունյանը, վերջապես Հրանուշ Հակոբյանը և Հերմինե Նաղդալյանը ՀՀԿ-ից: Կարելի է եզրակացնել, որ եթե կինն իրականում ակտիվ քաղաքական գործիչ է, ապա ներկայացվում է առաջին տասնյակում և համապատասխանաբար հաճախ է ելույթ ունենում ՉԼՄ-ներով: Մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանանցից եթերում ներկայացվել է ընդամենը մեկ կին:

68 ՉԼՄԿԻ-ի փորձագետ Նինա Իսկանդարյանի կարծիքը:


Դիագրամ 3

Հեռուստատեսությամբ լուսարանված քաղաքական գործիչների սեռային հաշվեկշիռը



Դիագրամ 4

Ռադիոյով լուսարանված քաղաքական գործիչների սեռային հաշվեկշիռը



Կանանց քաղաքական մասնակցությունը տպագիր ՁԼՄ-ներում (որակական վերլուծություն)

Անկասկած, մեծ հետաքրքրություն է ներկայացնում տպագիր մամուլում կին քաղաքական գործիչների ներկայացվածության որակական վերլուծությունը: Ընտրարշավի ընթացքում դիտարկվել են ավելի քան 10 հանրապետական թերթեր՝ «Հայաստանի Հանրապետություն», «168 ժամ», «Գոյուս Արմենիի», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն», «Հայոց աշխարհ», «Երկիր», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ազգ», «Իրավունք»: Հրատարակումները կարելի է դասակարգել երեք խմբի՝ ճեպագրույցների ռեպորտաժներ, հարցազրույցներ, տեղեկատվություն տեղերից: Հարցազրույցների մեծ մասի բովանդակությունը՝ կին քաղաքական գործիչներին ուղղվող ավանդական հարցերի առումով (ընտանիքի և քաղաքական գործունեության համատեղման հնարավորության մասին), ախտանշային բնույթ ունի: Առանձնապես տարածված է «պե՞տք են արդյոք կանայք քաղաքականության մեջ» հարցը: Փաստորեն բոլոր կին զրուցակիցները ստիպված են եղել պատասխանել այդ հարցին:

Քարոզարշավը սկսվեց ընտրատարածքներից մեկում ստեղծված սկանդալային իրավիճակով, որի գործող անձանցից մեկը կին էր: 19-րդ մեծամասնական ընտրատարածքում առաջադրված Սուսաննա Հարությունյանի անունը մամուլում հայտնվեց բացառապես այդ սկանդալի «շնորհիվ», այն դեպքում, երբ մեծամասնական համակարգով առաջադրված մնացած կանանց մասին մամուլում հիշատակումներ չեղան: «Չորրորդ իշխանություն» (11 ապրիլի), «Հայոց աշխարհ» (9, 10 ապրիլի), «Ազգ» (9, 11 ապրիլի) թերթերի մի շարք հոդվածներում տեղեկացվում է, որ Հարությունյանի շտաբը հրդեհել են: Այնուհետև նրա անունը հիշատակվում է նրան առաջադրած քաղաքացիների ստորագրությունների կեղծման կապակցությամբ: Տեղեկությունը տրվել է առանց մեկնաբանությունների, լրագրողական հետաքննություն չի կատարվել, սակայն այդ թեկնածուի անվան հիշատակումը հայտնի, մականունավոր պատգամավորի հետ նույն համատեքստում ապահովել է բացասական խորապատկերը:

Նախընտրական շրջանն իր ժամկետներով համընկավ տոնական միամսյակին՝ մարտի 8-ից՝ Կանանց միջազգային օրից մինչև ապրիլի 7-ը՝

Մայրության և գեղեցկության տոնն ընկած ժամանակահատվածին, ինչն իր կնիքը թողեց հրապարակումների բնույթի և կանանց թեմային անդրադառնալու հաճախականության վրա: «Ազգ» օրաթերթի ապրիլի 10-ի համարում հրապարակվել է «Կանայք զբաղեցնում են ավագ կառավարչական պաշտոնների մեկ քառորդից էլ պակասը (22%)» հոդվածը, որում բերվում են միջազգային «Գրանթ թորնթոն ինթերնեշնլի» միջազգային գործարար զեկույցի տվյալները մարտի 8-ի կապակցությամբ: Հոդվածում նշված է, որ համաշխարհային հարցման մասնակից յուրաքանչյուր տասը ընկերություններից չորսի կառավարման վերին օղակներում կանայք ներգրավված չեն: Այնուհետև բերվում են տվյալներ, որ Հայաստանի ընկերությունների 60%-ի կառավարչական պաշտոններում կանայք կան: Հայաստանում կանայք զբաղեցնում են ընկերությունների ղեկավար պաշտոնների 22%-ը: Այս տեղեկացվում է, որ առաջիկա տարիներին կանայք կարևոր դեր են խաղալու հասարակության կյանքում, ինչպես օրինակ՝ Անգելա Մերկելը Գերմանիայում, Սեգոլեն Ռուայալը Ֆրանսիայում, Հիլարի Բլինտոնը ԱՄՆ-ում: Նույն թերթի ապրիլի 12-ի համարում գետեղված է «Հայաստանյան գովազդի մեջ շահագործվում են կնոջ կերպարն ու գեղեցկությունը» հոդվածը, որը չի առնչվում խնդրո առարկա թեմային, սակայն ուշագրավ է գեղեցկության տեսանկյունից:

«Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի ապրիլի 13-ի համարում հոդված է տպագրվել Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման մասին՝ երկրի առաջին տիկին Բելլա Քոչարյանի ողջույնի խոսքով: Բերված է մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի կարծիքը, որով նա հիշեցնում է հասարակության մեջ կնոջ գործառնության դերի մասին: «Կինը ոչ միայն մոր կերպարն է, այլև խաղաղության՝ այդ բառի լայն իմաստով. որպես բարու, տան օջախի, հասարակության հավասարակշռության պահապան»: Բերվում է նաև ԱԺ պատգամավոր Հրանուշ Հակոբյանի կարծիքը, որը ավանդական, տոնին համապատասխան ոգով նշում է. «Դարեր ի վեր մեր ժողովուրդը մեծարել է ոչ այնքան կնոջը, որքան Մորը, որին «պահել և պահպանել» է ինչպես թագր: Հպարտ են, որ հայ կինն ընդգրկված է մեր կյանքի բոլոր ոլորտներում. աշխատում է, ցանկանում է իր լույսն մուծել պետականության կառուցման գործում, պատասխանատվություն է կրում և միաժամանակ հանդիսանում է ընտանիքի պատվարը, օջախի պահապանը, աճող սերնդի և առհասարակ ամբողջ հասարակության առաջին ուսուցիչն ու դաստիարակը: Թող

մեր հայ մայրերը երջանիկ լինեն, առողջ, գեղեցիկ, որպեսզի մենք միշտ նրանց կողքին մեզ երեխա զգանք»:

Երևանում կայացած մի ուրիշ մամուլի ասուլիսի ժամանակ Հրանուշ Հակոբյանը վստահություն է հայտնել, որ հայ կանանց դերը քաղաքական ոլորտում ավելի նշանակալի կդառնա: «Տղամարդիկ և կանայք միանման մասնակցություն պետք է ունենան գործունեության բոլոր ոլորտներում, այդ թվում և քաղաքական», - նշել է նա: Միաժամանակ նա կարծիք է հայտնել, որ հայ ժողովուրդը դեռևս հոգեբանորեն պատրաստ չէ իր նախագահի աթոռին տեսնել իզական սեռի ներկայացուցչի:

Ընտրությունների շրջանում մամուլի էջերում առավել հաճախ հայտնված կին քաղաքական գործիչների շարքում, որպես կանոն, պատգամավորների և պատգամավորի թեկնածուների քաջ ծանոթ անուններ են՝ Ալվարդ Պետրոսյան, Հրանուշ Խառատյան, Հերմինե Նադդայան, Ռուզաննա Խաչատրյան, Հեղինե Բիշարյան, Թամարա Գևորգյան, Լարիսա Ալավերդյան: Այսինքն՝ հիմնականում այն կանայք, ովքեր առաջին տարին չէ, որ ակտիվ քաղաքականության կամ պետական ծառայության մեջ են: Մամուլի էջերում նոր դեմքեր փաստորեն չեն եղել:

Ի՞նչ հիմնախնդիրներ են բարձրացրել կանայք մամուլի էջերում: Նրանք հիմնականում հրապարակել են այն կուսակցությունների դիրքորոշումները, որոնց ներկայացուցիչն են: «Երկիր» թերթում (ՀՅ Դաշնակցության թերթ)՝ ապրիլի 11-ի համարում տեղեկատվություն կա Մեդրիում Ռուզաննա Առաքելյանի նախընտրական քարոզարշավի մասին, որը նշել է, թե ՀՅԴ ցուցակներում կանայք շատ են ոչ այն պատճառով, որ դա օրենքն է պահանջում, այլ որովհետև կուսակցությունը միշտ էլ մեծ նշանակություն է վերագրել կանանց հասարակական և քաղաքական կյանքում: Ապրիլի 18-ի համարում Ալվարդ Պետրոսյանի հետ մամուլի ասուլիսում բարձրացվել են որոշ կուսակցություններում արհեստականորեն անդամների թիվը մեծացնելու հարցերը, հասարակության քաղաքական հիմնախնդիրները: Կուսակցության նախընտրական ծրագրում Ալվարդ Պետրոսյանը առանձնացրել է երկու հիմնախնդիր՝ սահմանամերձ գյուղերի բնակչության, հատկապես կանանց հիմնախնդիրը և արդյունաբերության զարգացումը աշխատատեղերի ապահովման նպատակով:

«Հայոց աշխարհ» թերթում ընտրությունների նախօրեին տպագրվել է «Մեր կին պատգամավորները» նյութը, որում հակիրճ ներկայացված են Հրանուշ Հակոբյանը, Էմմա Խուդաբաշյանը, Արմենուհի Հովհաննիսյանը, Հռիփսիմե Ավետիսյանը, Հեղինե Բիշարյանը, Ալվարդ Պետրոսյանը և Հերմինե Նաղդալյանը: Ապրիլի 12-ի համարում գետեղված է «Կանայք հայոց աշխարհի» տեղեկատվությունը Սունդուկյանի անվան թատրոնում համաժամանակյա ցուցակներով առաջադրված կին թեկնածուների հետ հանդիպման մասին, որը կազմակերպել են «Կանանց միություն», «Կին ընտրողների լիգա» ՀԿ-ները: Նյութը մատուցված է դրական հայացքով:

«Հայոց աշխարհ» թերթի ապրիլի 28-ի համարում գետեղված «Լիբերալ մոդելի կողմնակիցը» տեղեկատվությունը Հերմինե Նաղդալյանի մասին է, որում նա նշում է, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը հանդես է գալիս զարգացման ազատական մոդելի օգտին, և ներկայացնում է կուսակցության նախընտրական ծրագիրը: Մայիսի 2-ի համարում «Կնգա խելք» հոդվածը խորհրդարանի պատգամավորի թեկնածուներ Հրանուշ Խառատյանի և Ռուզաննա Խաչատրյանի մասին է: Հրանուշ Խառատյանը, ներկայացնելով Ազգային-ժողովրդավարական կուսակցության ծրագրի որոշ կետեր, խոսում է խորհրդարանի և կառավարության հետկանչի մեխանիզմի անհրաժեշտության մասին: Ռուզաննա Խաչատրյանն ասում է, որ իր կուսակցությունը՝ ՀԺԿ-ն, խորհրդարանում ավելի շատ «բարոյական խնդիրներ է ի ցույց դրել», քան կոնկրետ ծրագրեր իրականացրել, և դա հիմնավորում է «լծակներ չունենալու» հանգամանքով: Այդուհանդերձ նա կարծիք է հայտնել, որ ի տարբերություն շատերի, ՀԺԿ-ն 5%-անոց արգելքը հաղթահարելու խնդիր չունի, որ ժողովրդի վերաբերմունքն իրենց հանդես չի փոխվել, «պարզապես նրանց պահանջներն են շատացել»:

Մայիսի 5-ի համարում ներկայացված է Հրանուշ Հակոբյանի կարծիքն այն մասին, որ ընտրազանգված չունեցող կուսակցությունները պարավելուց հետո կսկսեն քննադատել պետությանը: Նույն այդ համարում «Ինչու է արմկում «Օրինաց երկիրը» հոդվածը թերթերից մեկում Հեղինե Բիշարյանի արած այն հայտարարության կապակցությամբ է, թե Նոյեմբերյանում ՕԵԿ-ի հանրահավաքի ժամանակ իշխանություններն անջատել են էլեկտրականությունը, որպեսզի զրկեն խոսափողներից: Հոդվածում ներկայացված են

մարզայեանի պարզաբանումներն այդ կապակցությամբ: Նույն համարում բերվում է «Ժառանգություն» կուսակցության թեկնածու, նախկին օմբուդսմեն Լարիսա Ալավերդյանի կարծիքը, թե իր տարբերություն նախորդ ընտրությունների, այս անգամ ընտրողների ձայները չեն կեղծվի, չեն կորչի:

Մայիսի 8-ի համարում ներկայացված է Ալվարդ Պետրոսյանի կարծիքը. *«Չի կարելի ժողովրդին ոչինչ դարձնել՝ ասելով՝ ուզում ես գնա ընտրություններին, ուզում ես՝ ոչ, դու եչինչ չես որոշում: Դա ճիշտ մտեցում չէ»:* Նույն համարում է «Կամ բոլորս ենք հաղթելու, կամ բոլորս ենք պարտվելու» հոդվածը, որը Ալվարդ Պետրոսյանի և Ռուզաննա Խաչատրյանի հետ կուսակցությունների և կաշառքների, երկրում տիրող վախի մթնոլորտի վերաբերյալ մամուլի ասուլիսի մասին է՝ կայացած «Հայելի» ակումբում: Ալվարդ Պետրոսյանը նշում է, որ ընտրությունները Հայաստանում վերածվում են պատերազմի:

Մայիսի 10-ի համարի «Դավաճանելը բարձրացնում է մարդու հեղինակությունը» հոդվածում ներկայացված է Հեղինե Բիշարյանի կարծիքը գաղտնալսումների, կուսակցության դեմ հալածանքների, կուսակցության առաջնորդի կյանքին սպառնացող վտանգի մասին: Հոդվածում եզրակացություն է արվում, թե «ստելը սույն մանկավարժի համար դարձել է սովորություն» և այդպիսով նրա նկատմամբ բացասական վերաբերմունք է ստեղծվում:

Փաստորեն բոլոր թերթերում ընտրությունների նախօրեին կայացած մամուլի ասուլիսների ռեպորտաժներ կան՝ կին թեկնածուների մասնակցությամբ: Առանձին դեպքերում ներկայացված են բանավեճեր և քննադատություն: Այսպես, Հեղինե Բիշարյանը ապրիլի 2-ի ասուլիսում ասում է, որ Ազգային ժողովի առաջիկա ընտրություններից հետո Հայաստանի հաջորդ գումարման խորհրդարանում ներկայացված կանանց թիվը կմեծանա: *«Նրանց շարքում, հուսով եմ, կլինեն և այնպիսիք, որոնք երկրի համար կարևոր պաշտոններ կզբաղեցնեն»*, - նշում է նա: Ըստ նրա՝ *«բարձր պաշտոններ ստանալու համար տղամարդիկ խոշոր կաշառքներ են տալիս, որի հետևանքով կանանց սոսկ փոքր տոկոսին է հաջողվում հասնել քաղաքական բարձունքների»:*

Նույն մամուլի ասուլիսի ռեպորտաժում սոցիալական ապահովության նախին փոխնախարար Կարինե Հակոբյանը, որ առաջադրվել է Հայաստանի դեմոկրատական կուսակցության ցուցակով, ասում է, որ կանանց բնավորության շատ որակներ օգտակար կլինեն ապագա խորհրդարանի արդյունավետ աշխատանքի համար: Նրա կարծիքով, շատ հարցերում կանայք ավելի սկզբունքային են, քան տղամարդիկ, ինչը կարող է դրականորեն ազդել այս կամ հարցի լուծման վրա:

Հետաքրքրական է անդրադարձը գենդերային հավասարության թեմային: «Հայոց աշխարհ» թերթի մայիսի 10-ի համարի «Հայ կանայք պահպանողական են և դանդաղ շտապողներ» հոդվածում ներկայացված է հարցազրույց Ալվարդ Պետրոսյանի հետ: Լրագրողի՝ գենդերային հավասարության մասին հարցին Ալվարդ Պետրոսյանը պատասխանում է, որ կուզենար ապրել մի երկրում, որտեղ հասարակությունն այնքան քաղաքակիրթ լիներ և այնպիսի բարձր գիտակցություն ունենար, որ այդ հարցն այլևս չծագեր: Բայց քանի որ մենք կայացման փուլում ենք, նա **այդ հիմնախնդիրը և՛ կարևոր է համարում, և՛ վտանգավոր:** «...Վտանգավոր են համարում, ժողովրդի մշակութային, ավանդական, հոգևոր առանձնահատկությունները հաշվի չառնելով, մեզ ինչ-որ օտար արժեքներ հրամցնելը: Կցանկանայի, որ կանանց առնչվող հարցերին շատ լուրջ և նրբանկատորեն վերաբերվենք, քանի որ մեր ժողովրդի համար ընտանիքի ինստիտուտը շատ կարևոր դերակատար է: ... Այսօր Եվրոպայի ամենահզոր երկրներից մեկի՝ Գերմանիայի դեկավարը կին է և, կարծում են, շատ հետաքրքիր կին է: Մեծ Բրիտանիայի դեկավարը կին էր, Ֆրանսիան փորձում էր ունենալ: Մեզ մոտ դեռ վաղ է այդ մասին խոսելը: Ոչ թե որ այդպիսի ինտելեկտով կին չկա մեր երկրում, կան, շատ խելացի կանայք կան, պարզապես մեր ժողովուրդը, հասարակությունը հոգեբանորեն դեռ պատրաստ չեն դրան: ... Ինչո՞ւ պետք է կինը տղամարդու պես լինի: Եթե դա ուժ, ինտելեկտ, կամային կամ գաղափարական կայունություն է վկայում, ուրեմն կնոջ պես կին է, որովհետև բոլոր այդ հատկանիշները հենց կանանց են հատուկ: ... Ըստ իս՝ շատ լավ կլինի, որ քաղաքականությունը մի քիչ էլ կնոջ դեմք ունենա. կպակասի ազրեսիվությունը, առավել խոհեմ և կայուն կդառնա»: Այնուհետև, պատասխանելով «Հայուհին առաջնորդի հատկություններ ունի՞ արդյոք» հարցին, նա ընդգծում է «Եթե դուք ասեք, որ Նորա Հակոբյանից, Աիդա Թովուզյանից, Կարինե Դանիելյանից, Հրանուշ Հա-

կորյանից ավելի լավ առաջնորդ կա՝ առավել գաղափարական, խելացի, կազմակերպված... Սրանք դեռ երևացող մասն են: Իսկ որքա՞ն փայլուն, հետաքրքիր կանայք կան, որ սովերում են: ... Որ կանայք իրենց հարաբերություններում ավելի անադարտ են, իրենց գաղափարներում՝ ավելի կայուն, ավելի դժվար են մտնում գործարքների մեջ կամ մեկ գավաթի շուրջ գնում գործնական խարդավանքների, չեն գնում խաղատներ ու գիշերային զվարճավայրեր, դա անկասկած է: Հայ կանայք պահպանողական են և դանդաղ շտապողներ»: Հոդվածում բերվում է նաև մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի կարծիքը, թե գեղերային հավասարության պատճառով խախտվում են ընտանեկան արժեքները, և կինն ու քաղաքականությունն անհամատեղելի են, ինչպես նաև Հանուշ Հակոբյանի կարծիքը, թե բարբարոսություն է տարբերություն դնել սեռերի միջև:

Ընդհանուր առմամբ ընտրությունների ընթացքում մամուլը վերարտադրել է իրենց իսկ կանանց կարծիքը՝ չմեկնաբանելով նրանց մտքերը և մնացել է չեզոք կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդրի կապակցությամբ՝ ընդգծված ձեռնպահ մնալով գեղերային հավասարության քարոզչությունից:

Ամփոփման փոխարեն

Հետընտրական իրողություններ

Իրավիճակի վերլուծությունը, հարցազրույցները և ֆոկուս խմբերը քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հնարավորություն են տալիս որոշ եզրակացություններ և կանխատեսումներ անելու հետընտրական իրողությունների պայմաններում կանանց քաղաքական մասնակցության զարգացման վերաբերյալ:

2007 թվականի Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ սահմանված քվոտան նպաստել է կանանց թվի մեծացմանը կուսակցական ցուցակներում, բայց բավարար չի եղել խորհրդարանում կանանց իրական 15%-ի ներկայացուցչության համար: Կանայք հերթական անգամ, ինչպես նշվում է բազմաթիվ հարցազրույցներում, կատարեցին ընտրությունների հետ կապված սև աշխատանքի 80%-ը, բայց նրանց ավանդը ընտրարշավում համարժեք չէ ներկայացվածությանը հանրապետության խորհրդարանում:

2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ Հանրապետական կուսակցությունը ստացավ խորհրդարանի տեղերի մեծամասնությունը, որի շնորհիվ իրավիճակը կուսակցությունում մնում է կայուն: Բայց կայունությունը հիմնված է սոսկ իշխանության ռեսուրսների մատչելիության վրա, կուսակցության անդամների շրջանում, հատկապես կանանց, որոշ հիասթափություն կա կուսակցության քաղաքականությունից, որը հավանաբար ապագայում ավելի զգալի կդառնա: Հայաստանի հանրապետական կուսակցությունը, որ պահպանողական գաղափարախոսություն ունի, ստեղծվել է պատերազմի տարիներին, ռազմական կառույցների հիման վրա, ինչն իր կնիքն է թողել կուսակցության գենդերային դրված-

Ամ-
փո-
փում

քի վրա: Վերջին տարիներին կանանց թիվը կուսակցությունում և նրա ղեկավար մարմնում սկսեց աճել, ակտիվացավ կուսակցության կենտրոնական մարմնի կանանց խորհրդի, ինչպես նաև շատ տարածաշրջանների կանանց խորհուրդների աշխատանքը: Կրթական ծրագրերի և ուրիշ համատեղ միջոցառումների կազմակերպման գործում կանանց ՀԿ-ների հետ համագործակցության ձգտում առաջացավ և փորձ ձեռք բերվեց: Կուսակցության կանանց խորհրդի նախագահ, խորհրդարանի պատգամավոր Հերմինե Նաղդալյանը համագործակցում է կանանց հասարակական կազմակերպությունների հետ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստեղծվեց ընտրություններից առաջ, որպես հերթական «իշխանամետ կուսակցություն», և արագ մեծ թվով անդամներ ունեցավ, այդ թվում և կին անդամներ: Սակայն չնայած այն հանգամանքին, որ կուսակցությունը խորհրդարան մտավ, և նրան մատչելի են քաղաքական ու տնտեսական ռեսուրսները, կանխատեսված արդյունքներին չհասավ, ինչը որոշակի արտահոսքի հանգեցրեց: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կին անդամների՝ կուսակցությունում հատուկ խորշ գրավելու ակնկալիքները կանանց քաղաքական մասնակցության համար, չարդարացան: Կուսակցության շրջանակներում ձևավորված կանանց խորհուրդը, որ գլխավորում է խորհրդարանի պատգամավոր Գոհար Ենոքյանը, ՀԿ-ների հետ համագործակցության առաջին քայլերն է անում: Կանանց խորհրդի անկախության աստիճանը և նրա հետագա գործունեությունը մեծապես պայմանավորված կլինի գենդերային հավասարության հասնելու ուղղությամբ կուսակցության որդեգրած ընդհանուր քաղաքականությամբ և ռազմավարությամբ:

Կանանց քաղաքական մասնակցության աշխուժացում է նկատվում ՀՅԴ-աշնակցությունում ներդրված գենդերայնորեն զգայուն քաղաքականության տարրերի շնորհիվ և «Ժառանգություն» կուսակցությունում ժողովրդավարական միջավայրի առկայության և խորհրդարանական խմբակցությունում կանանց մեծ թվի շնորհիվ:

«Օրինաց երկիր» կուսակցությունում անդամների որոշակի արտահոսք կա: Պատճառը ոչ միայն այն է, որ կոալիցիոն կուսակցությունը

դարձավ ընդդիմադիր խորհրդարանական կուսակցություն, այլև այն, որ խախտվել են ներկուսակցական ժողովրդավարության և կուսակցության անդամների կարծիքները հաշվի առնելու նորմերը, չկա ուշադրություն նրանց նկատմամբ և նոր հետընտրական պայմաններում յուրաքանչյուրի դերը սահմանելու ունակություն: Պատճառը նաև այն տեխնոլոգիաներն են, որոնք բազմիցս են կիրառվել իշխանության կառույցների կողմից «անցանկալի» կուսակցությունների նկատմամբ: Կուսակցությունում կուսակցական կառույցների վերակառուցում է ընթանում, և առայժմ ակտիվ կանանց խորհրդի շնորհիվ կանանց անդամակցության չափաբաժինը պահպանվում է: Կուսակցության կանանց խորհուրդը և նրա նախագահ Մարգարիտա Պետրոսյանը ակտիվորեն աշխատում են ՀԿ-ների հետ, կուսակցության շատ անդամներ կանանց հասարակական կազմակերպությունների միջոցառումների մասնակիցներ են: «Օրինաց երկիր» կուսակցության անդամ, խորհրդարանի պատգամավոր Հեղինե Բիշարյանը նախաձեռնել է «Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի պատրաստումը, որը քննարկվել է խորհրդարանի Մարդու իրավունքների և հասարակական հարցերի մշտական հանձնաժողովում, այնուհետև ներկայացվել է մտցնելու խորհրդարանի օրակարգ և մեծվել է: Գնահատելով ստեղծված իրավիճակը՝ կարելի է եզրակացնել, որ կուսակցությունը փորձել է միայն իր ուժերով լուծել հայ իրականության համար այդ բավական բարդ հիմնախնդիրը՝ չկազմակերպելով օրինագծի հանրային քննարկումներ և չապավինելով հասարակական սեկտորի և ուրիշ խորհրդարանական խմբակցությունների, մասնավորապես կին պատգամավորների աջակցությանը:

Խորհրդարան չմտած կուսակցությունների իրավիճակը կարելի է տարբեր կերպ բնութագրել: Նախկին խորհրդարանական կուսակցությունները՝ Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, «Ազգային միասնությունը», Միավորված աշխատանքային կուսակցությունը մեծ ցնցում ապրեցին: Առաջին երկուսից, որոնք զանգվածային ընդդիմադիր կուսակցություններ են, տղամարդկանց արտահոսք նկատվեց: ՀԺԿ-ում դա հանգեցրեց կենտրոնական ղեկավարությունում կանանց թվաքանակի մեծացման:

Որոշ կուսակցություններում, որոնք խորհրդարան մտնելու փոքր հնարավորություններ ունեն (ՍԳ-ՀԿ, ՄԻԱԿ), առանձնապես հիասթափություն չի նկատվում, նրանք լավատեսորեն են տրամադրված, և կանանց քաղաքական ակտիվությունն այդ կուսակցություններում վերելքի միտում ունի:

2008 թվականի նախագահական ընտրությունների նախաշեմին քաղաքական կուսակցությունները շահագրգռված են պահպանելու իրենց անդամների ակտիվությունը, ուստի կարելի է ենթադրել, որ ամբողջ ոչ պաշտոնական նախընտրական շրջանի ընթացքում փորձեր կարվեն աշխուժացնելու կանանց քաղաքական մասնակցությունը:

Այդ պայմաններում կանանց խնդիրն է օգտագործել պահը քաղաքական ինքնակազմակերպման համար: Ավելին, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, կանայք կուսակցություններում սկսում են գիտակցել սեփական նպատակների համար ջանքերի միավորման և կանանց խորհուրդների ներուժի օգտագործման անհրաժեշտությունը: Հասունանում է նաև կուսակցական կանանց և հասարակական կազմակերպությունների կանանց համերաշխության անհրաժեշտության ըմբռնումը:

Կանանց հասարակական կազմակերպությունների սեկտորն այժմ մի փուլում է, որը կարելի է բնութագրել, մի կողմից, որպես ընտրությունների շրջանում սեփական դերի վերլուծության և իմաստավորման, սխալների և բացթողումների գնահատման փուլ, այն ըմբռնման, որ կանանց ՀԿ-ները չկարողացան լիովին ներգրավվել ընտրական գործընթացներում և իրենց մտավոր ներուժն ի սպաս դնել ընտրությունների ժողովրդավարացման գործընթացին: Իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց կազմակերպությունները չկարողացան համախմբվել միասնական նպատակի շուրջը, միավորել իրենց ռեսուրսները և ակտիվորեն մասնակցել ընտրարշավին: Կանանց կազմակերպությունները և կանանց խմբերը, արտահայտելով սոցիալական տարբեր խմբերի շահերը, ունենալով տարբեր սոցիալական փորձ և ոչ հնարավորություններ, նույն ակտիվությամբ չմասնակցեցին ընտրարշավին: Միայն այն կանանց կազմակերպություններն էին պատրաստ ընրարշավի ընթացքում գործնական քայլերի իրականացմանը՝ իրենց գործունեության տարբեր ձևերով նպաստելով կանանց քաղաքական մասնակցությանը, որոնք նախորդ տարիների աշխատանքի

փորձ և կանանց քաղաքացիական ակտիվության զարգացման հակում ունեին:

Անփութելով կարելի է ասել, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իշխանության կառույցների հավասարակշռված մոտեցման, ՀԿ-ների, ՋԼՄ-ների և շահագրգիռ միջազգային ժողովրդավարական կառույցների հետ սոցիալական գործընկերությամբ ներկուսակցական ժողովրդավարության զարգացման ու խորացման և ազգային ու միջազգային փորձի ճիշտ օգտագործման պարագայում Հայաստանում հնարավոր է կանանց քաղաքական մասնակցության ակտիվացումը:

Երաշխավորություններ

Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս մի շարք երաշխավորություններ անելու, որոնց շնորհիվ կարելի է վերացնել կանանց քաղաքական մասնակցության ճանապարհին ընկած «արգելքները» և ընդլայնել նրանց ներկայացուցչությունը թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր իշխանությունում:

- Կուսակցական ցուցակներում կանանց ներկայացման քվոտան հասցնել առնվազն 25%-ի, ընդամին այն ձևակերպել որպես քվոտա՝ խորհրդարանական խմբակցություններում կանանց համապատասխան 25%-ի ներկայության պահանջով:
- Ակտիվացնել քաղաքական կուսակցությունների անդամների զենդերային լուսավորությունը, համալիր միջոցառումներ մշակել քաղաքական կուսակցությունների քաղաքական օրակարգում և գործունեության մեջ զենդերային հիմնախնդիրներն ընդգրկելու համար:
- Նպաստել ներկուսակցական ժողովրդավարության խորացմանը և կուսակցությունների դեկավար կառույցներում կանանց առաջ մղելու մեխանիզմների ձևավորմանը՝ կանանց պահուստային կադրերի պատրաստման համար:

- Մշակել կուսակցությունների խթանման մեխանիզմներ՝ էգալիտար գեներալիստիկ մշակույթի ձևավորման քաղաքականություն վարելու համար:
- Ընդլայնել քաղաքական կուսակցությունների կանանց միությունների և կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցությունը կանանց առաջնորդման և գեներալիստիկ կարծրատիպերի հաղթահարման հարցերում:
- Ուսումնասիրել եվրոպական քաղաքական կուսակցությունների փորձը գեներալիստիկ հավասարակշռության հասնելու, դրական խտրականության մեթոդների կիրառման գործում:
- Օժանդակել այն նախաձեռնություններին, որոնք ուղղված են Երևանում և հանրապետության մարզերում կանանց լիդերության դպրոցների ստեղծմանը՝ կիրառելով ընտրություններում առավել մրցունակ կին լիդերների ընտրման և ուսուցման սկզբունքը:
- Մշակել և ներդնել կին թեկնածուների տեղական (ընտրությունների միջև ընկած ամբողջ ժամանակահատվածում) պատրաստման սկզբունքներն մոր մոտեցումներ և ծրագրեր՝ ընդգրկելով ընտրաբաշավների վարման, ՋԼՄ-ների հետ փոխազդեցության տեխնոլոգիաներ, հոգեբանական վարժանքներ:
- Կատարել ընտրագանգվածային նախապատվությունների գեներալիստիկ կտրվածքի քանակական և որակական ուսումնասիրություններ և բացատրական աշխատանք տանել ընտրագանգվածի հետ՝ գեներալիստիկ կարծրատիպերի հաղթահարման և խտրական մոտեցումների հաղթահարման նպատակով:
- Կանանց հասարակական կազմակերպությունների աջակցության իրական միջոցներ ձեռնարկել նրանց անհրաժեշտ տեխնիկայով, ինտերնետի մոտքով ապահովելու, հասարակության փոխակերպման և ժողովրդավարական վերափոխումների պայմաններում հասարակական-քաղաքական գործունեության տեխնոլոգիաներին տիրապետելու մասով:
- Միջազգային հիմնադրամների և կազմակերպությունների օգնությամբ աջակցություն ցույց տալ կանանց խմբերի և մարզային ու մայրաքաղաքի կազմակերպությունների ցանցերի զարգացմանը, ընդլայնել ՀԿ-ների՝ կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված գործունեության դրամաշնորհային աջակցությունը:
- Կին լիդերների նոր սերնդի պատրաստման նպատակով օժանդակել ՀԿ-ների կրթական ծրագրերին՝ ուղղված իրավաքաղաքական գրագի-

տության բարձրացմանը և ընտրական գործընթացների տեխնոլոգիաների տիրապետմանը:

- Գեներային կարծրատիպերի հաղթահարման նպատակով շարունակել գեներային դասընթացների վարումը միջնակարգ դպրոցի և բուհական կրթության համակարգերում, ինչպես նաև բնակչության լայն շրջանների գեներային լուսավորությունը:
- Նպաստել ՁԼՄ-ների գեներայնորեն հավասարակշռված քաղաքականությանը և խրախուսել ՁԼՄ-ներում փիար-արշավների անցկացումը՝ ուղղված կանանց առաջնորդմանը և գեներային կարծրատիպերի հաղթահարմանը, նման արշավներ կազմակերպել հատկապես ընտրությունների ընթացքում:
- Մշակել հատուկ կանանց լիդերության փիար-աջակցության կրթական ծրագրեր լրագրողների համար:

ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

**ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Վերլուծական տեսություն

*Գեոդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար՝
Ջեմմա Զասրաթյան*

*Խմբագրական կազմ՝ Ջեմմա Զասրաթյան (գլխ. խմբագիր), Անահիտ
Զարությունյան, Թամարա Զովնաթանյան, Լիլիթ Ջաքարյան, Գայանե
Արմաղանովա, Մարիետտա Սահակյան*

*Հայերեն տեքստի խմբագրում՝
Համակարգչային ապահովումը՝
Մակետավորումը՝*

**Անահիտ Զարությունյան
Իրինա Շահինյանի
Արթուր Բոյախյանի**

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
0002, Երևան, Սարյան 22, 12-րդ հարկ:
Հեռախոս, ֆաքս. (374.10) 53-68-02, E-mail: aawue@arminco.com

Տարածվում է անվճար

«ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարան:
Հասցե՝ Երևան, Ավան, Դավիթ Մալյան 45
Հեռ. (374. 10) 54-49-82 (գրաս.), (374. 10) 62-38-63 (տպ.)
Էլ. փոստ asogik@netsys.am